2623

~~Fonds N 50~~

~~2225~~ 2383

~~I/40~~ 49

ԿՏԱԿԱՐԳԻՐ

ՀՈԳԵՐԱՀ ԲԱՆԻՑ

17

2623

ԿՏԱԿԱՐԳԻՐ

ՀՈԳԵՀԱՏ ԲԱՆԻՑ

Ի ՄԱՐԳԱՐ ԶԱՔԱՐԻԱ
ԽՈՃԵՆՑ ԵՐԵԻԱՆՑԻՈՑ

ՀԱՐԱԴՐԵԱԼ Ի ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԻՐՈՒՄ
ՄԵԾԻ, ԵՒ ԱՌԱՔԵԱԼ Ի ՋՄԻՌՈՒՆ
ԱՌ ՈՐԴԻՆ ԻՐ ԶԱՔԱՐԻԱ
ՄԱՐԳԱՐ ԽՈՃԵՆՑ

A 21135

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՆԵՐՍԷՍԻ ՎԵՀԱՓԱՌ ՍՐԲԱԶՆԱԴՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՐԲԱԶԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՊՕԼՍՈՅ Տ. Տ. ՅԱՅՈՐԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1853

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՐԱՆ

Обнов. 100 тнон. пер. 1909 г.
БИБЛІОТЕКА
Дух. Семин. О-ва на Кавк.
Центр. Библіот. Чит. Арм. Общ. Кавк. Обш.
– 6 ІЮНЬ 1898

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երբ դաստիարակութիւն ասելիս, մենք խրատս յաւէտ առանձնապէս եւ դժուարին՝ ի բարոյական դաստիարակութեան, արժանի գովեստից իցէ, եւ մեծագոյն օգուտս հոգւոյ եւ մարմնոյ անտի կթիցի, ոչ ինչ վեհերեալ զանգիտեմ զառաջիկայ մատեանս զնոյն վարկանել։ Թէպէտ եւ ամենայն հասակք մարդկութեան անհրաժեշտ իմն հարկաւ պէտս խրատուց ունիցին, յանապատաքելի յառաջադիմութիւն՝ ի բարւոյն կրթանս եւ՝ ի մարդս բարոյականին, այլ առաւել պատանեկութեան է այն սեփականեալ իմն իրաւունք. այն ինչ յորժամ երիտասարդական հասակին յեռանդն վառեալ՝ ի տապեռանդն, եւ դժուարասանձ կրիցն մրրկախառն՝ ի բորբ ընդ միտս՝ ի վեր ծառացեալ՝ զբանականութեան լոյս մթագնէ եւ արգել ընտրութեան բարւոյ եւ չարի անձինն լինի։ Վասն որոյ բուռն յորձանք կրիցն՝ իբրու յերեսաց գարնանաղայր հեղեղաց վարեալ, քարավէժ դարահոս յանդունդս մատնեն զնոսա, կրինակի համբուրել զկորուստ անդարմանելի, զհոգւոյն եւ զմարմնոյն։ Զսոյն վտանգ հոգեկործան կորովաբիբ հայեցուածով մատցն նշմարեալ որդեգորով հեղինա-

կիս, թէպէտ և ի հիւանդութեան մահիճս ջերեալ մերձ ի մահ, այլ յուշ ածեալ զաբրոյական պարտաւորութիւնս, մասն ի գիր անդանդաղ առ որդին իւր ի Զմիւռնիս փութայ զառաջիկայ հոգեշահ խրատսն առաքել իբրու կտակ հայրական, զգուշացուցանելով զնա յամենայնէ որ գիտէն գործել զեանս մարմնոյ և մտաց յոյժ, և ոչ սակաւ հոգւոյ, և այնպէս արկանել զնա ի բարիոք կոփուն. ի հաստի և յամրի կացուցեալ գօտէպինդ արձանանալ ընդդէմ յոլովութեան փնասաբեր չարամտութենիցն յաճախելոց առ մերով ժամանակաւքս. ընդդէմ զդայարանացն հակամարտութեանց որ զբաղմոց կոխարդեալ զուշ և զուրուշ անդգոյշ պարմանեաց՝ խանձողեն ի հեշտութիւնս մոլի կանս. և ընդդէմ ամենայն զեղծիցն և անկարգ գործածութեանց բնական կրից մարդոյ։

Այս պարտաւորութիւն սրբազան՝ հարց յանձն ելով, այլ բաղմոց ոչ ժամանեալ առ յաճախութեան զբաղմանցն կամ առ անփութութեանն անձամբ կատարող պարտաւորութեանս լինել, ոչ ինչ անտեղի արդեաք համարիցի կատարել զնոյն ի ձեռն բարեհրահանգ դաստիարակի, քան զամենայն աշխատութիւնս և զբրտունս իւր զոր ի տղոյ հասակի որդեացն կրեաց, ի պատանեկու-

թեանն նոցա անդ յանշահս մատնել զամենայն, թողեալ զնոսին հատանիլ յաւելագործ մանաւանդ եթէ յապականագործ հակամիտութիւնս բնական բերմանցն և ազդման, որոց վախճան հայի յատակս դժոխոց։ Իսկ որոց զաշխատութիւն յանձն առեալ 'ի ձեռն հոգեշահ մատենիս Ջանան 'ի հրահանգ բարի ածել զնոսա, զհամբոյն և զչափումն ներելով նոցին առնուլ զճաշակ աշխարհական վայելչից և անմեղ հեշտութեանցս, զնոցին հոգեացն փրկութիւն շահեսցին, և անձանց մթերեսցեն յիշատակ բարի յաստուծս, և անդ տայցեն դատ արդար դատաւորին՝ ասելով. Ա՛մէն։

Ի սոյն յայս յուսով վստահացեալ գրկալիր ընդունելութեան առաջիկայ օգտաշահ մատենիս 'ի բարեգործով և յորդեսէր ծնողաց, նոցին խնամոց և Ջանիցն առնեմք ապատան՝ պարտավճար լինել այսու զոր առորդեակս իւրեանց ունին հարկ 'ի բնութենէ և 'ի նախախնամութենէ յինքեանս հաստատեալ. և այնպէս փառաւոր գործել զյիշատակ հեղինակիս, և փոխարինել զաշխատանս և զանկալութիւն սրբոյ Ուխտիս, որ ազգային բարգաւաճանաց և հոգևոր զարգացմանն յուսով պարարեալ՝ նուիրեալ Հայկազն պատանեկացս զսոյն մատեան խրատարար։

– 6 ՅՈՒՆԻ 1898

ԶՄԻՒՌԻՆ

Օ գնանմտս սրբեալք իմ Զաքարիա։

ԻՐԱՄԱՑԵ մեզ սրբազան առաքեալն Պօղոս, հատուցանել ամենեցուն զպարտս, և մի ումեք պարտապան գտանիլ։ Այլ ըստ որում հարքն առաւել պարտականք են առ որդիս իւրեանց, ոչ միայն սնուցանել զնոսա մարմնաւորապէս, այլ և կրթել ի հոգևոր և ի մտաւոր հմտութիւնս իմաստից ըստ տանելոյ կարողութեան մտաց նոցին, վասն որոյ պարտ և արժան համարեցայ աստէն, առ ի անպարտ կացուցանել զիս առաջի Աստուծոյ՝ գրել քեզ յառաջիկայ թղթիս բանս ինչ համառօտ օգտաւէտ հոգւոյ և մարմնոյ քո, խնդրելով ի քէն նախ մատուցանել ինձ զլսելութիւն քո՝ բանիւ իմաստնոյն, թէ «Լուր սրդեակ խրատու հօր քո, և մի մերժեր զօրէնս մօր քո»։ այսինքն՝ հոգևոր և մարմնաւոր ծնողաց։ Այս ասա՝ ի վերայ ածել, թէ զգատա և զգոյշ լեր ի խրատոյ Սադուկեցւոց և Փարիսեցւոց, ըստ խրատու և հրամանի Փրկչին մերոյ։

Ասացաւ ի խմբոյ Պաղուկեցւոց, որք կուրացեալք յաստուածային անճառելի մարդատիրական խորհրդոյն՝ ուրանան զկենաս յաւիտենականս զոր պարգևէ Աստուած վերսին ծնելոց ի Հոգւոյն։ Նմանապէս և ի Փարիսեցւոց, որք թէպէտ խոստովանին զյարութիւն մեռելոց, բայց ախտացեալք զախտ փառամոլութեան և զչարհասիրութեան՝ փոխանակեն զԱրարիչն ընդ արարածոց առնելով զամենայն գործս բարիս և զառաքինութիւնս իւրեանց ի ցոյցս մարդկան, առ ի ընդունել դրուատս գովեստից ի անսուզաց և ի լսողաց. որոց այն իսկ են վարձք նոցա։

Այս ի կարդ անկեալ յառաջադրեալ բանիս՝ սկիզբն տացուք յերրեակ համառօտ հաստուածս տրոհելով։ Նախ՝ ի վերայ ազնուութեան և յատկութեան մարդոյ՝ որով զանազանի յայլոց անբան կենդանեաց։ Երկրորդ՝ ի վերայ հնգից զգայարանաց։ Երրորդ՝ ի վերայ սմանց գլխաւոր կրից։

ՄԱՍՆ ԱՌԱՔԻՆ

ՎԱՍՆ ԱԶՆՈՒՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՏԿՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑ

Գրադ. Բիբլիոթ. Եկեղ. Օգաս
- 6 ՀՈՒՆ 1896

«Մեծ է մարդ և պատուական, բայց զայր հաւատարիմ գոյժ է գտանել։» ՍՈՂՈՄՈՆ. Ա. ԹԱԿ. Ի. 6.

«Մարդ ի պատուի կայ, և ոչ իմացաւ. հաւասարեցաւ անասնոց անգիտնից, և նմանեցաւ նոցա։»

ԴԱՒԻԹ. ՍՂՄ. ԽԸ. 21.

Ասացաւ ի վերոյ՝ զգոյշ լինել ի խրմոցոյ, այսինքն յաղանդոյ Սադուկեցւոյ։ Եւ զայս գրեմ քեզ, գիտելով զքաջ տեղեկութիւն ձեր Ճոխիմատ լեզուին Գաղղիացւոյ, որ համանմանի արգատալիր ազգատակի, յորում գտանին բոլորովեալ ամենակերպ բարիք իմաստութեան և գանազան գիտութեանց՝ ի հոգևորն և ի մարմնաւորն։

Բայց յիշեա և ի միտ առ, սրգեակ իմ, զի և առ այս իսկ յատկապէս նկատեն բանք զոր իմաստութիւնն Հօր և միածին Բանն Աստուծոյ՝ փրկիչն մեր Յիսուս Քրիս-

տոս աստուածային բերանովն իւրով ծանուցանէ մեզ, թէ յաւուրս յետին բազում մոլորամիտ անձինք յայտնեսցին յագարակի եկեղեցւոյ իւրում. որք և բազում անտեղի չար մոլորութիւնս սերմանեսցեն ի նմա, յասել իւրում, թէ "Սմանեցաւ արքայութիւնն երկնից առն որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում։ Եւ ի քուն լինել մարդկան, եկն թշնամին նորա, և ցանեաց ի վերայ որոմն ի մէջ ցորենոյն՝ և գնաց։ Եւ իբրև բուսաւ խոտն և արար պտուղ, ապա երևեցաւ և որոմն։ Մատուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա. տէր՝ ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակի քում. արդ՝ ուստի՞ ունիցի զորոմն։ Եւ նա ասէ ցնոսա. այր թշնամի արար զայն։ և այլն։ Մատթ. ԺԳ. 24։

Արդարև տեսանեմք բազում որոմունս մոլորութեանց սերմանեալ յագարակի եկեղեցւոյ թիւր մեկնութեամբք աստուածային գրեանց։ Այլ յատկապէս ի յետին աւուրս տեսանեմք՝ զի յամենագովելի և յարգասարեր ագարակի բազմիմաստ լեզուին Գաղղիացւոց առաւել թիւնալի և վնասակար որոմունք մոլար հերետիկոսութեանց սերմանեալ գտանին ի թշնամեաց

հաւատոյ։ Քանզի տգէտ գիտուն՝ ներկայ դարուս ախտացեալք և փքացեալք ամբարտաւանութեամբ Հռոմաբանութեան իւրեանց՝ թիւնաւորեցան ի հեթանոսական յանդիմն և ի թերի փիլիսոփայութենէ. որք ոչ քարոզելով զխաչելեալն Քրիստոս ըստ առաքելոյն [1], սկսան յառաստղական գրեանս իւրեանց յայտնապէս ուրանալ ըզկենանս յաւիտենականս, ոչ ինչ գիտելով և ոչ հաւատալով վերստին ծննդեանն. ուրանալով խսպառ և զվերհուրդ մարդեղութեան բանին Աստուծոյ. բացասելով նա և զմարդկեղէն բանական հոգին, զոր մարդկային սեռիս միայն շնորհեաց Աստուած։ Ա.յլ նկատելով և եթ ի զգալի երևոյթս հասարակ ընթացից բնութեան, և տեսանելով ի նմին ի ջինջ և պայծառ հայելւոջ զարտաքին դէմս իւրեանց, կամեցան ենթադատել և զմարդն իբրև զմի ի յանասնոց, բարեյարմար կազմուածով միայն զանազանեալ ի նոցուն՝ տեսակաւն, տալով զամենայն հնարագիտութիւն, զիմացականութիւն և զբանականութիւն նորա առոյգ և քաջայարմար կազմուածոյ մարմնոյն և

1 Ա. Կրն. Ա. 23։

ձևոյ անդամոցն, որ կոչի 'ի լեզու նոցա Օրիսիլոյիսն։

Այ՝ մեծի կուրութեան նոցին։ Քանզի ոչ հիմնելով զիմաստութիւն իւրեանց 'ի վերայ կենդանի հիման աստուածաճանաչութեան, ոչ կարացին որպէս անկ է ճանաչել զԱստուած և ոչ զինքեանս և ոչ իսկ զզօրութիւնս դրոց՝ որք անստերիւր վարդապետութեամբ ուսուցանեն, թէ «Արիզն խմաստութեան երկիւղ Տեառն. և 'ի խորհուրդս դիտութեան զՏէր ճանաչել»[1]։ Որոց եթէ ծանուցեալ էր, կարէին 'ի միտ առնուլ թէ յորմէ՛մ գերադոյն և 'ի պատուական ասիճանի արար Աստուած զմարդ, մինչ զի կոչեցաւ ազգ նորա և հաղորդ աստուածային բնութեան ըստ բանի սրբազան առաքելոյն Պետրոսի[2] և Պօղոսի[3]։ Թողեալ և զարտաքնոցն ասացուածս, զՍոզոմենին 'ի մէջ բերցուք զվկայութիւն. «Ամ՛ն է մարդ և պատուական, բայց զայր հաւատարիմ գտրծ է գտանել»։ Հաւատարիմ առ աստուածային։

Եղիսպէս և աստուածախօսն Մովսէս 'ի

1 Ա՚ոակ. Ա. 7։ 3 Բ. Պետ. Ա. 4։
2 Գործ. ԺԵ. 29։

հառել իւրում զատ զծմանէ աշխարհի՝ ուսեալ Աստուծոյ՝ կարի յայտնապէս ծանուցանել մեզ զպնուութիւն և զյատկութիւն մարդոյ ի գրելն զնդելութենէ ամենայն էակաց, և ասէ. «Յետ ասացեալ Աստուած. եղիցի լոյս՝ և եղև։ Եղիցին լուսաւորք ի հաստատութեան՝ և եղեն։ Հանցեն ջուրքն զերազունս շնչոց կենդանեաց և թռչնոց՝ և եղեն։ Երկեսցէ երկիր զանձաւոր խոտոց և անկոց, և հանցէ սոզունս և գազանս և անասունս՝ և եղեն»[1]։ Իսկ յասել իւրում վասն մարդոյ, ցուցանէ խորհրդակցութիւն իմն ի մէջ երրակի կեդրոնի, այսինքն ի մէջ ամենասուրբ Երրորդութեան, թէ «Արասցուք մարդ բան պատկերի մերում և բան նմանութեան, որ իշխեսցէ ի վերայ ամենայն էակաց երկրի»[2]։ Յետ սէ եթէ իբրև զայլ արարածս բանիւն լոկ գոյացոյց զմարդ, զի լինէր յայնժամ հաւասար այլոց կենդանեաց բրզխելոց յերկրի։ Վասն որոյ առաւել իմն հաստատութիւն և հաւասարութիւն տալով ազնուութեան և յատկութեան մարդոյ՝ ասէ. «Յետ ասելոյ Տէր Աստուած զգ-

1 Ծներ. Ա. 3։ 2 Նոր. Ա. 26։

մարդն հող յերկրէ »։ և ապա յաւել։ « Յետ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն յոգի կենդանի »։ որով եցոյց բաւականապէս եթէ պարգևեաց Աստուած մարդոյ բանական հոգի՝ յատուկ օժտեալ աստուածային փչմամբ և աղդեցութեամբ։ Յետս և շնորհեաց նմա ըստ աստուածային նմանութեանն իշխանական անձնաւորութիւն։ քանզի շունչ բառս առ Եբրայեցիս ասի Նէֆէս։, որ նշանակէ անձն։ այսինքն կատարեալ անձնաւորութիւն փչեաց ի նա Աստուած։ Այնմանպէս եցոյց՝ եթէ և նիւթ մարմնոյ նորա յոյժ զանազանի ի նիւթոյ մարմնոյ այլ կենդանեաց, ասելով։ « Յետ ըստեղծ զմարդն հող յերկրէ »։ և այլն։ Այսպէս զնոյնդ կարելի է մարդոյ լինել իբրև զմի յայլոց կենդանեաց, որք հասարակ ստեղծագործութեամբ գոյացան, և ոչ ըստ օրինակի մարդոյն յատուկ արարողութեամբ։ Իսկ եթէ յանդգնեալ ոչ հաւատան բանից Մովսէսի, դանէ գործոցն հաւատացեն։

Աստանօր պատշաճ համարիմ ասել ինչ բանս համառօտակի վասն այնոցիկ՝ որք ոչ կամին հաւատալ գրոցն Մովսէսի որ վասն ստեղծագործութեան, առարկելով բազում կերպիւ։ Նախ՝ վասն ժամուն և ժամանակին

յորում տայ Մովսէս սկիզբն արարչագործութեան։ Երկրորդ՝ վասն այն զոր առարկեն, թէ յառաջ քան զայն ժամանակ ոչ գոյին ստեղծուածք, և յետոյ կամ եղև Աստուծոյ ստեղծանել։ Երրորդ՝ վասն վեցօրեայ արարչութեան և եղանակին որով արար Աստուած. և այլ բազումք զոր չկամիմք մի ըստ միոջէ գրել առ ի չտալ ձանձրութիւն ընթերցանելեաց։

Վասն առաջնոյն վիճաբանեն ասելով. Զոր օրինակ ոչ ոք գիտէ զկատարած աշխարհիս, նոյնպէս և զսկիզբն նորա. կամ թէ, ոչ սկիզբն ունի ամենևին և ոչ վախճան, ըստ այնմ թէ «Զզ երթայ և ազգ գայ, և երկիրս յաւիտեան կայ»[1]։ Եւ վասն երկրորդին ասեն, թէ ուրեմն փոփոխութիւն գոյ Աստուած, որ երբեմն ոչ կամեցաւ՝ և ապա կամեցաւ, և կամ յետոյ խորհեցաւ ստեղծանել, և այլն։ Իսկ վասն երրորդին առարկեն, թէ չունէր արգելք Աստուած կարողութիւն զբոլորն համանդամայն ի միում կիսի և միով բանիւ առնել. և կամ թէ կարօտանայր նիւթոյ և արհեստի, զի ի մէջ վեց աւուրց այնչափ

1 Յ.ԵՂԻ. Ա. 4։

բաժանմամբ արար զնոսա, և ասէն։ Վասնզի ասէն՝ թէ առ Աստուած չէր անցեալ և աւպառնի, այլ բոլորն համանգամայն ներկայ է առաջի նորա։ Այնպէս չէր ի նմա անկարուութիւն և կամ կարօտութիւն արհեստի և ժամանակի, այլ ամենայն ինչ կախեալ կայ միայն զկամաց նորա, որ է լինելութիւն աւանենցուն, և կամք իւր ընդ ինքեան է անսկիզբն և անժամանակ և յաւիտենական, և ասէն։

Ա՛ռ այս պարտիմք զիտել, եթէ Մովսէս կարի նրբախօս է ի Հաւատն ստեղծագործութեան, և համառօտ բանիւք բազում ինչ ծանուցանէ մեզ։ քանզի ասէ. «Իսկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիրն». ոչ ինչ յիշելով զժամն և զժամանակն, և ոչ զեղանակն՝ թէ ե՞րբ և կամ ո՞րպէս արար։ Ա՛յս այսու սակաւուք բազում ինչ ծանուցանելով եխից զերեսուն հակառակորդաց։ Լու ասա յարէ. «Լու երկիր էր անեւելութիւ և անպատրաստ, և խաւար ի վերայ անդնդոց», և ասէն. բայց զերկնից ոչ ինչ յիշէ։

Պատանօր իմա՝ եթէ բան նկարագրական մեկնութեան կամեցաւ Մովսէս ծանուցանել, թէ ընդ հանուր ամենեքեան յԱստուծոյ ակսան և ոչ ինքեամբ։ Ա՛յս և՝ Աստուած

կարողութեամբ, իմաստութեամբ, և կամեցողութեամբ իւրով արար զնոսա 'ի ձեռն կարգադրեալ բնութեան, և ոչ պատահմամբ կամ շփոթմամբ։ Այլ և կամեցաւ Մովսէս համառօտաբար զաժանմունս տարերց և տարրականաց, և զ զաստիճանս և զզանազանութիւնս էակաց ծանուցանել ըստ տանելոյ մարդկային իմացութեանց, զի գոնէ սակաւ ինչ լուսաւորիցին միտք ժողովրդեան իւրոյ 'ի բնական գիտութեան զոյգ ընդ հաւատոց, եթէ՝ Աստուած է որ առնէ զայս ամենայն, և ոչ բնութիւնն՝ որ է գործի Աստուծոյ, և կամ այլ որ։ Այլ և զի ծանուցցէ նոցա զաղնութիւն մարդոյ՝ գոլով ստեղծուած Աստուծոյ 'ի գերագանց ատիճանի յատուկ ստեղծագործութեամբ, և յատուկ բանական հոգւով կամ անձնաւորութեամբ պերճացեալ, և ոչ որպէս ըստ հասարակ կենդանիսն՝ անշունչ։ Այլ դիւրատահ և փոփոխելի բնութեան գոլով վիճակեալ՝ կայ 'ի մէջ հոգեկան և մարմնական կացութեան։

Զ. սոյն Նրբիմաստ ասութիւն Մովսէսի մեկնեն ոմանք ֆիզիկականք և այլազգ։ իբրու զի այսու վերջօրեայ արարչութեամբ կարեմք իմաստասիրել նա և զ ինելութիւն

իւրաքանչիւր անհատից, ասելով այսպէս. Իսկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր, այսինքն զարուն և զէգն. և երկիր էր աներևոյթ և անպատրաստ, և խաւար ի վերայ անդնդոց, և հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց, իմանամք զնորապէս ծնանելին։ Իսկ զոր յառաջնում աւուր ասաց՝ եղիցի լոյս, իմանամք նախկին կէտն գոյացութեան անհատին։ Իսկ բաժանումն ջուրցն նշանակէ զսերմունս. ջուրն վերին՝ զօրութիւն արական, և ջուրն ներքին՝ զօրութիւն իգական։ Հաստատութեամբն՝ զտեսակաւորիլն։ Խուսմամբ բանջարեղենաց՝ զաճումն և զբողբոջիլն անդամոց։ Լուսաւորօքն՝ զզգայարանս և զիմացականութիւնն։ Իսկ ի վերջն ընդ մարդոյ՝ և անասնոց լինելութիւնն, յուցանէ զմարդն լինել փոքր աշխարհ, որ է կնիք ամենայն ստեղծուածոց, որ փչմամբն Աստուծոյ զարդարեցաւ բանիւ։ Իսկ թէ՝ հանգեաւ Աստուած յաւուր եօթներորդի. զի իբրև պակ բոլորեաց զմարդն ի վերայ ամենայն արարածոց. որոյ անմեղ կեանքն դրախտավայել, և ծագումն Եւայի ի կողից նորա, պատուէրն ի զգուշութիւն ամրձեռնալոյ ի պտուղն գիտութեան բարւոյ և չարի. ապըր-

տամբութիւն նորա թելադրութեամբ օ-
ձակերպ անձնիշխանական հպիտանն 'ի հա-
ճութիւն անձնասէր կամաց իւրոց. զօրու-
թիւն կամ ներգործութիւնն անիծիլ, և
զրկուիլն 'ի փափկութեան վայրէն, և փա-
կել ճանապարհին ծառայն կենաց. այս ա-
մենայն ուշիմ և նրբամիտ վերծանողաց
յայտնապէս տեսանի 'ի պատկերի իւրաքան-
չիւր անհատից բնականաբար. զորոց եթէ
ցեր կամեսցի՝ գրեսցուք այլուր, ես և մաս-
նաւորաբար 'ի յառաջիկայ բանիս ուր հար-
կն և դէպք պահանջիցեն։

Իսկ ըստ խորհրդական մեկնութեան յոյժ
գաղտնի և խորին են խորհուրդք նորա, թէ-
պէտ և յայտնի և մեկին յոյժ որոց աչս ու-
նիցին։ Արդ՝ նախ փչմամբն Աստուծոյ Ա-
դամ՝ ծանուցանէ եթէ ձեռնադրեաց զնա
քահանայապետ, որով և հաղորդս արար աս-
տուածային զօրութեան, ներգործութեան
և սքանչելագործութեան [1]. յորմէ փոխան-
ցեաց ձեռնադրութիւնս այս մինչև ցՆոյ,
առ որով բարձաւ 'ի հասարակաց՝ յասելն
թէ «Մ'ի մնասցէ ոգի իմ 'ի մարդկանդ
յաղագս յաւիտեան, վասն լինելոյ դոցա

1 Ա. Պետ. Բ. 8. 9։ Բ. Պետ. Ա. 4։

մարմին ։[1] Լոյս ի Նոյէ սկսեալ եհաս ի ձեռն արժանաւորաց մինչև յՄելքիսեդեկ, և յԱբրահամ և յմարգարէս մինչև յՅովհաննէս Մկրտիչ՝ որ և կոչեցաւ ձեռնադրող Յիսուսի ըստ մարդկութեան. և ի Յիսուսէ մինչև ցկատարած աշխարհի անխափան տեւեսցէ և հանդիպեսցի յայնոսիկ որք խնդրեն զնա ամենայն սրտիւք և ջանիւք։ Լոյս երանելի որոց արժանաւորութեամբ ընդունիցին։

Լոյս ապա զոյդ ընդ վիպասանութեան ստեղծագործութեան մարդոյ ծանուցանէ և զմարդեղութիւն Բանին Աստուծոյ, ըստ հիմնադրութիւն և զհաստատութիւն սրբոյ Եկեղեցւոյ՝ շինմամբ ի կողէն Ադամայ զԵւա։ Լա և անիծանելով զօձն բանսարկու և ասելով[2]. «Լոգից թշնամութիւն ի մէջ կնոջդ, այսինքն եկեղեցւոյ, և ի մէջ զաւակի դորա, այսինքն Քրիստոսի և հետեւողց իւրոց. նա սպասեսցէ քում գլխոյ, այսինքն խորտակեսցէ. և դու սպասեսցես նորա զարշապարի, այսինքն մոլար հերետիկոսաց՝ որք երանեն արտաքս սրբոյ Եկեղեցւոյ, աւանդական վարդապետութեան» և այլն։

Իսկ ի մնացեալ խորհրդական դրուածս

1 Ծննդ. Բ. 3։ 2 Ծննդ. Գ. 15։

Մովսէսի գրեթէ այնչափ սքանչելի խորհուրդք իմաստութեան ծածկեալ կան, որոց առանց ատուածային ներշնչման և անխաբդաս ուսուցչի անկարելի է ուսիք հասուլինել, զոր և զկնի վերծանելոյ ուրուք՝ անհնարին է յայտնել անարժանից։ Մանաւանդ զի թէ և հաղորդիցի նոցա նշոյլ ինչ ի նոյն խորհրդոց, ոչ ինչ զօրեն իմանալ, եթէ չիցէ տուեալ նոցա ի վերուստ։ Ասացայսմ՝ ոչ հաւատան հակառակորդք, զի ինքեանք անգէտք են բոլորովին. և եթէ զբ յայտնեսցէ և նոցա՝ ոչ կամին հաւատալ զի զրկեալք են. ուստի որք գիտեն՝ ոչ ինչ փոյթ տանին ուսուցանել նոցա, բաց այնմ թէ՝ "Ասեին զՄովսէս և զմարգարէս, նոցա լուիցեն... իսկ եթէ Մովսէսի և մարգարէից ոչ լսեն, և ոչ թէ ի մեռելոց զբ յարիցէ հաւատասցեն"[1]։ Աբեմն թողցուք զնոսա յանհաւատութիւնս իւրեանց, և մեք հետևեսցուք կարգի բանիս՝ խօսելով այլազգաբար։

Դիցուք թէ խակրամանէ անժամանակաբար արար Աստուած զայս ամենայն. ուրեմն բովանդակ սեռք և տեսակք էակաց էին այսպէս խակրամանէ անտի որպէս և են այժմ։

1 Դ-ի. ԺԶ. 29։

Արդեաք ի նախնումն եթէ անասունք և եթէ մարդն այսու տեսակաւ և բնութեամբ էին զոր ունին այժմ, եթէ այլապէս՝ և արդ փոփոխեալ։ Կարծեմ եթէ ոչ զոր կարէ ասել՝ փոփոխեալ. քանզի սերունդք սեռից և տեսակաց բաւական վկայք են, և չիք ինչ նշմար փոփոխման բաց յոմանց պատահմանց, այսինքն երկարակեցութեանց և յաղթանդամութեանց, և յայլ այսոքինակ պատահմանց։ Այլ ընդ սեռի և տեսակի և բնութեան մի և նոյն գոլ ընդհանուր արարածոց միենչև ցայժմ՝ ինքեանք իսկ վկայեն, և յաւելուն և ացուցանել զմշանջենականութիւն իւրեանց, և այլն։

Այս զինչ փոյթ և օգուտ իցէ մեզ յանդգնաբար վիճել և երկմտիլ ընդ վեցօրեայ արարչութիւնն, կամ ընդ սկզբնաւորութիւն ժամուն և ժամանակին, և ընդ եզանակն զոր դրէ Մովսէս, զորոյ զմիտան չկարեմք դիւրաւ խմանալ։ Զինչ արդեաք միասկեմք և կամ մեղանչեցեմք երբէք, ի հաւատալ մեր՝ եթէ յառաջագոյն իցէ ժամանակն քան զարարչագործութիւն աշխարհիս, և կամ անտի սկզբնաւորեալ։ Այլ թէ արարածք ի մէջ վեց աւուրց, և կամ ի միում կիսոն՝ միով բանիւ արարան։ Կամ թէ՝

'ի միոյ միայնոյ մարդոյ սկիզբն կալաւ ազգ մարդկան, (բան որում հարկ իսկ է լինել բան բնական գիտութեան, որպէս և թբ-աբանութիւնն ուսուցանէ. զի ամենայն բազմաւորութիւն 'ի միակէ սկսանի բազմանալ.) և կամ թէ՝ աշխարհս լի էր մարդ-կամբ սկզբնաւորեալ 'ի զանազան ցեղատե-սից. իսկ Մովսէս Ադամաւ կամէր ծանուցա-նել մեզ զազգաբանութիւն որոշեալ ցեղի միոյ, և կամ զսկզբնաւորութիւն մարդ-կային սեռի՝ 'ի նոյն եղանակ, և այլն։

Մինթէ ոչ են մեզ բաւական վկայու-թիւնք 'ի ստուգութիւն բանից նորա այս ամենայն գոյութիւնք զոր տեսանեմք յաշ-խարհի. զի զոր ինչ և գրեաց վասն արա-բածոց՝ նոյն են բնաւին, և ոչ ինչ վրիպի 'ի բանից նորին։ Մանաւանդ զի հանդարտին ամենայն հետազօտութիւնք մեր 'ի յենուլ 'ի վերայ միոյ սկզբան. ապա թէ ոչ՝ երե-բեալ տատանիմք, և չգիտեմք զինչ երևա-կայել յորժամ զարտաւոր զիմբ յուզիլ պողբ-տալէ։ Արդեն չիցէ՞ մեզ բարիոք բան բա-նից Մովսէսի խորհնացուցն թողուլ զատա-պէլական զրուցատարութիւնս այլոց և հե-տևել բանից Մովսէսի, որում և հաւա-տացեալս եմք՝ եթէ 'ի ժամանակի միում

Հ 21135

Աստուած իւրով անհուն կարողութեամբ իմաստութեամբ և բարութեամբ՝ այսինքն կամեցողութեամբ արար և ստեղծ զամենայն էակս կարգաւորեալ բնութեամբ յայլ և այլ սեռ՝ տեսակ և աստիճան, և ոչ պատահմամբ՝ որպէս և յոյժ ապիտակինքն 'ի մոլորելոց զսոյն ևս բարբանջելով զոզանջեն, ոչ գիտելով թէ զի՞նչ է պատահումն, և զի՞նչ զօրութիւն նորա։

Վանգի պատահումն ըստ ինքեան ոչ ինչ գոլով՝ ոչ կարէ տալ, և ոչ իսկ կատարեալ տեսակ ինչ յառաջ ածել և ունել սերունդ բազմանալոյ, որպիսի է ջրին, և այլք ըստ նմանէ։ Այնպէս ժամանակ, մեղք և ճըճիք, և կամ վայրենի բոյսք, որք պատահմամբ գոյանան 'ի ձեռն սմանց պատճառաց, բայց չունելով սերունդս՝ ոչ 'ի համարի տեսակաց դասին, և ոչ իսկ տեսեն. այլ 'ի միում ամի կամ 'ի ժամանակի գոյանան, և 'ի միւսումն ոչնչանան, տպա թէ՝ չանհունն պարտ էին ձգիլ, և կարգաւորութիւն բնութեանն խափանիւր՝ եթէ պատահմամբ տեսակք յառաջացեալ լինէին. որ և այս անհնարին է։ Վանգի արարածք հունաւորեալք են և սահմանեալք, իսկ անհունն ոչ երբէք անկանի ընդ սահմանաւ՝

ըստ հանուրց փիլիսոփայից ։

Այս և զնոքդ կարելի է պատահմամբ այսպիսի կատարեալ տեսակաց յառաջանալ, և աքանչելի կազմուածք մարմնոյ գեղեցկաշէն յօրինիլ, ըստ որում պատահումն ըստ ինքեան կոյր գոլով՝ է իմն ոչ ինչ. և յոչընչէ ինչ յառաջանալ անհնարին է ։ Այնաւանդ զի եթէ պատահմամբ գոյացեալք էին, պարտ էին և 'ի վաղ ժամանակաց հետէ պատահմամբ կորնչիլ, և ոչ ընդ այսչափ բազմամեայ ամս տևել կարգաւորեալ բնութեամբ և ընթացիւք 'ի սերունդս իւրեանց ։

Իսկ եթէ ասիցեն ըստ ոմանց, թէ երեսուն և վեց հազարամեայ շրջանաւ հաստատութեան պարտին ամենեքին տևել, և յետ այնորիկ ընդունել զփոփոխութիւն կամ զնորոգումն, և այլն. ուրեմն չէ պատահմամբ ամենեքին, և ոչ իսկ զօրութեամբ լոկ բնութեան, այլ գերազանց և անվրէպ իմն կարգադրութեամբ ։ Այլ՝ եթէ կարգադրութեամբ, ապա կամեցողութեամբ. եթէ կամեցողութեամբ, ուրեմն գիտութեամբ՝ այսինքն իմաստութեամբ. և եթէ իմաստութեամբ, ապա և կարողութեամբ ։ Այլ՝ եթէ կարողութեամբ՝ իմաստութեամբ՝ և կամեցողութեամբ եղեն արարածք, ուրեմն

Աստուծոյ արարան և ոչ ի պատահմանէ, կամ ի լոկ բնութենէ։ Իւ եթէ Աստուծոյ և ի կամեցողութենէ նորին եղեն, ուրեմն կան և մնան պահպանեալք և կառավարեալք ի կարողութենէ՝ յիմաստութենէ և ի կամաց նորա. ուստի և առանց երկրայութեան ունին սկիզբն։ Իւ ամենայն որ ունի սկիզբն, ունի և զվախճան կախեալ զկամաց սկզբնաւորողին, որոյ զվախճանէ՝ աստուածային գիրքն նորոգումն ասէն և ոչ ոչնչանալ, բայց այնմ. « Իւ տեսի երկին նոր՝ և երկիր նոր »[1]։ Որոյ զնմանդն Աստուծոյ ինքեան է միայն գիտելի։ Նմանապէս և վասն ժամուն և ժամանակին ոչ ոք գիտէ, ոչ որդի՝ այսինքն մարդ, և ոչ հրեշտակ, այլ միայն հայր, այսինքն Աստուած[2]։ Ապայէս և ֆիլոսոֆայն, այսինքն բնական գիտութիւնն և արուեստն աստեղաբաշխութեան յայանի հաւատութեամբ ցուցանեն՝ թէ նորոգութիւն երկրագնոցս հարկիւ լինելոց է բնականաբար. և այն ի ձեռն հրոյ, որպէս և վկայեն մարգարէք, թէ « Հուր առաջի նորա գնասցէ »[3]. և թէ՝ հրով դատելոց է երկիր,

1 Յայտ. ԻԱ. 1։ 2 Մատթ. ԻԴ. 36։
— Լուսայ. ԿԵ. 17։ 3 Սաղ. ՂՀ. 3։

և այլք բազումք [1]։

Քանզի ասեն բնաղելիք, թէ ամենիմաստ Ճարտարապետ հիմնարկուն աշխարհիս 'ի բաժանել իւրում զչորեսին տարերս, բաժանեաց նաև զնոյն խակ իւրաքանչիւր տարրս 'ի նուրբ և յառաւել նուրբ, 'ի թանձր և յառաւել թանձր մասունս իւրեանց. յորոց և դոյացոյց զանազան էակս ըստ սեռի իւրեանց, այսինքն 'ի յօդս՝ օդային, 'ի ջրոյ՝ ջրային, և 'ի հողոյ՝ հողային, թէ՛ երևելաբար և թէ աներևութաբար, թէ՛ ենթալուսնեայ՝ և թէ 'ի վերս քան զլուսին. որոց միջակ՝ նուրբ՝ և թանձր և առաւել թանձր մասունք նոցա մնացին 'ի սոյն երկրագնդի 'ի զանազան պաշտօնս, և յէակս և 'ի կենդանիս։ Իսկ առաւել նուրբքն կերբեալով զհաստատութիւն ըստ մեծի մասին 'ի յօդս, և սկսեալ յերկրագնդոյս՝ անցին և կացին 'ի վերս քան զլուսին. և նոքա ևս 'ի զանազան պաշտօնս և յէակս, այսինքն յասուերդս և 'ի կամարս և 'ի կենդանական շունչս, և այլն։ Այնմանպէս և 'ի բաժանմանէ հրոյ, 'ի կարի նուրբ մասանց եղեն հրեղէն երկինք՝ որ է Աթոռ աստուածութեան, ըստ

1 Բ. Թագ. Ա. 7, 8։ — Բ. Պետ. Գ. 10։

այնմ թէ՝ ի հուր և ի լոյս անմատոյց բը-
նակի [1] ։ Եւ ի պակաս նուրբ մասանց եղեն
ընդհանուր ոգեղէնք աներևոյթք, և բնա-
կան ջերմութիւնք կենդանեաց, և ոմանք
յաստեղաց, և այլն ։ Եւ ի թանձր մասանց
նորա եղեն զանազան մարմինք և էակք ։ Իսկ
առաւել թանձր մասն նորա մնաց ի կեդ-
րան երկրի, որ է բնական ջերմութիւն նո-
րա, որոյ բնաղնին փիլիսոփայք կոչեցին հուր՝
կամ ջերմութիւն կեդրոնական, որպէս և ի
բազում տեղիս երևին յայտնապէս ի հրա-
բուղխս լերանց ։ Եւ դերբնականական վար-
դապետք եկեղեցւոյ՝ զեհեան անուանեցին
զսա. որ և մեծիմաստ Կոզմոբոլիտ բնաղնին
փիլիսոփայն յաւէտ արձակաբար բացատրէ
զսա յիւրում բնական փիլիսոփայութեան
գիրսն, և համաձայն ընդ այլոց փիլիսոփայից
հաստատէ՝ թէ հուրն կեդրոնական արդէն
ի կիր դարձուցեալէր զլոլոր երկրագունս
զոյս, եթէ ոչ տարածեալ ջրոյն յամենայն
մասունս հողոյ՝ իբրև զարիւն կենդանեաց
երակ առ երակ բարեխառներ զտապող և
զկիսիչ զօրութիւն և զներգործութիւն նո-
բին ։ Որ և նոքին բարեխառնութեամբ օդ-

1 Ա. Տիմ. Զ. 16 ։ — Սղ. ՃԳ. 4 ։

տէ հուրս այս 'ի գոյացութիւն երակակա-
նաց և բողբոջականաց 'ի ներքուստ եփե-
լով և հասունացուցանելով զնոսա, և այլն.
զորս լիովին տեսցես բացատրեալ 'ի տեղւոջ
իւրում։

Այս և սոյն ներհուն հեղինակք բնա-
զնին փիլիսոփայութեան գոլով քաջ վերա-
հասու նա և աստեղաբաշխական արուեստ-
ի, 'ի քնին առեալ ծանեան զդիրս և ըզ-
շարժմունս, զընթացս, նա և զսղղեցու-
թիւնս և զդուշակութիւնս ոմանց աստե-
ղաց։ Ինդ սրս գտին նա և զընթացս տրա-
նաւոր և գիսաւոր գոմեր կոչեցեալ աստե-
ղաց, որոց իւրաքանչիւր յերեւիլն՝ բազում
և զանազան ազդեցութիւնս եղեալ յերկրի
հաւաստեաւ գիտացին և տեսին, որք ըստ
մեծի մասին յոլով վնասակար և վտանգալի
ազդեցմունս և դուշակութիւնս արարին
յայսմիկ երկրագնոմ. նա և զանազան այ-
լայլութիւնս և փոփոխմունս պատճառեցին
'ի տարերս իւրաքանչիւրն ըստ սեռի և ըստ
բնական զօրութեան և ներգործութեան
իւրեանց, այսինքն՝ օդայինք 'ի յօդն, ջրայ-
ինք 'ի ջուրն, և հողայինք 'ի հողն, նոյնպէս
և հրայինք 'ի հուրն։ Ասի և ասեն ամե-
նայն փիլիսոփայքս այսոքիկ, թէ ըստ հար-

կաւորեալ ընթացից նոցա պարտ է երևիլ զկնի ոչ սակաւ ժամանակաց ասողմի գիտաւոր կարի զօրաւորագոյն հրային բնութեամբն, որոյ և 'ի մեծոց յոյժ քերեալ անցանելով զարեգականն շրջանաւ՝ խաւարումն պատճառեսցէ նմա. խափանեսցէ ընդ նմին և զլոյս լուսնի և զգիշերական ազդեցութիւն նորա որ 'ի վերայ ջրոյ՝ ընդդէմ արեգականն ջերմութեան և չորութեան. ուստի և 'ի սաստիկ ջերմութենէ նոյն գիսաւոր ասասէ՝ ջուրքդ ծովու և գետոց գոլորշացեալ ամբառնին յերկրէ, և հուրն կենդրոնական կորուսեալ զբարեխառնութիւն իւր՝ այրեալ դարձուցանէ 'ի կիր զհողագունան համակ իւրայնովքն։ Եւ այսպէս կիզեալ վախճան առնուն ամենայն բնակիչք երկրագնոցս։ Եւ ապա ամենիմաստ և ամենամեծ Ճարտարապետ նորին կրկին ասայ նմա նորոգութիւն այլ իմն կերպիւ՝ զոր նա միայն գիտէ [1]։ Եւ այսպէս կատարի բան Փրկչին՝ թէ «Խաւարեսցի արեգակն, և լուսին ոչ տացէ զլոյս իւր և զօրութիւնք երկնից շարժեսցին» [2], այսինքն փոփոխեսցին, կամ հրեշտակք աշխատեսցին յաւուր ընդ հանրական դատաստա-

1 Յոյժ. ԻԱ. 1։ 2 Մատթ. ԻԴ. 29։

նին 'ի ժողովել զընտրեալսն և 'ի տանջել զդատապարտեալսն, և այն։ Այնանպէս լը-
բումն առնուն և ամենայն մարգարէու-
թիւնք սրբոց և գուշակութիւնք ընդհա-
նուր փիլիսոփայից։ Որպէս և Պիւֆիան
գերահռչակ նոր հեղինակն և անդամն Հա-
մալսարանին Գաղղիացւոց՝ բազում վկայու-
թեամբ հաստատէ զայս ամենայն լինել բը-
նականաբար։ Չը յաւելու և ասել թէ 'ի
2255 թուականին Փրկչի յայտնեսցի գիսա-
ւոր աստղս այս ըստ գուշակութեան ար-
ևատի իւրեանց, այսինքն բովանդակ աս-
տեղաբաշխից. և հրով կիզեսցէ զընդհանուր
երկրագունսս, եթէ կամք արարչին կնքեսցէ
'ի նմին ժամանակի։

Սակայն մեք հաւատամք, եթէ մի մի-
այն Աստուծոյ ինքեան է գիտելի թէ երբ
և կամ որպէս լինելոցն է. զի զնորին կամսց
միայն կախեալ կայ, և ոչ զոք ունի ինքեան
խորհրդակից։

Իսահն սոյն նոր հեղինակս Պիւֆիան
քաջալերեալ սահիպ զիս զոյն ինչ առաւել
համարձակաբար խօսիլ ընդդէմ նոր հեղի-
նակաց դարուս, որք ուրանան զվերսին
ծնունդն մարդկային 'ի Հոգւոյ, նաև զկեանս
յաւիտենականս։ Ըստ սրում 'ի գիրս իւր

յայտնապէս խոստումանի զմարգարէութիւն զիմաստութիւն և զՀմուութիւն բնական գիտութեան Փրկչին մերոյ՝ որ վասն խաւարման արեգական և լուսնի և վասն հրակէզ ասչորման ընդհանուր երկրագնոցս՝ ասելով, եթէ յոյժ հաւաստի գիտութեամբ և իմաստնաբար խօսեցաւ Յիսուս 'ի վերայ այսր բանի, և այլն։

Երդ՝ ով նոր հեղինակք դարուս, նոյն ինքն Բանն իմաստութեան զբնական գիտութիւնն իբրու հատարակ ինչ զրուցատրութիւնս 'ի մէջ բերեր 'ի բանս վարդապետութեան իւրոյ, որով և կամիր զհոգևոր իմաստութիւնն և զԲանն կենաց միայն քարոզել։ Ընդէր ապա կամիս ցանիք զաչս ձեր ընդդէմ հոգևոր վարդապետութեան նորա, որ քարոզէր և քարոզէ՝ եթէ հաւատալով ձեր 'ի նա և վերատին ծնեալ եամբ 'ի հոգւոյ ստանայք զկեանս յաւիտենական, և լինիք որդիք Աստուծոյ և Ժառանգորդք երկնից արքայութեան։ ապա թէ ոչ՝ մատնիք 'ի կրակ ստ և 'ի տանջանս յաւիտենական։ Ով մեծի կուրութեան նոցա, որք ոչ այսպէս են և ոչ այնպէս, այլ որպէս փոշի հոսեալ 'ի հողմոյ. և կամ զօրէն ջայլեման, որոյ 'ի սեսանելն զրեան՝ պարպէ զթեւս իւր 'ի

թոիչ, և ի հարկադրիլ իւր ի թռչել, արձակէ զոտս իւր ի քայլ։

Այդպա ուրեմն հետևի եթէ ճշմարիտ են բանք Մովսէսի, և յայտնապէս տեսանի եթէ մարգարէաբար գրեաց առանց կարծեաց։ Բանդի Աստուած ի գոյացուցանել իւր զմարդն՝ գերազանց իմն պատուով և իմաստութեամբ զարդարեաց քան զամենայն կենդանիս, և եդ զնա ի գերագոյն աստիճանի կատարելութեան, ուստի ոչ է բնաւ երկբայելի եթէ չիցէ նմա շնորհեալ և այլ իմն գերագոյն իմացականութիւն, որով կարիցէ իմանալ և ճանաչել զանցեալս, զներկայս և զապառնիս։ Որպէս և տեսանեմք զօրհանապազ աչօք մերովք, զի բազումք բազում նախագուշակութիւնս առնեն բնականաբար զզանազան իրաց առանց ինչ վնասելոյ։ Բանդի այնչափ լուսաւոր է բանականութիւն մարդոյ, որ զմարգարէութիւնն բնութեամբ ունի յինքեան, բայց անզգուշութեամբ և վայրաբարշ մեղկութեամբ և զանցաւութեամբ իւրով ոչ զգայ, և ոչ ևս հաստատի ի նմա՝ պատահումն իմն համարելով. վասն զի ոչ հաւատայ եթէ ունիցի զայս ձիր շնորհեալ ինքեան յԱստուծոյ, ուստի և ոչ հետևի այնմ ըստ արժանւոյն՝ զի

հաստատեսցի յինքեան նոյն զօրութիւն։ Այլ յորժամ տեսանէ զկատարումն իրացն նախասացելոց և կամ ընդ միտսն խորհելոց, սկսանի պարծիլ և ասել խրոխտաբար՝ թէ ո՞չ ապաքէն խօսեցայ եթէ ՚ի սոյն յայս յանդիպցի իրն. և կամ սկսանի երդնուլ, թէ ստուգիւ եկն ՚ի միտս իմ եթէ յայս կամ յայն յանդիպցի իրն, և այլն։

Բայց գիտելի է զի երբակի է մարգարէութիւն. այսինքն՝ արուեստիւ, որ և գուշակութիւն ասի. բնական՝ որ է աղդումն. և գերբնական՝ որ է ճշմարիտ և անսխալ մարգարէութիւն։ Արուեստիւ, որպիսի է մոգուցն՝ վհկաց և աստեղաբաշխից և այլոց, որք զանազան իրաց գուշակութեամբ զբաղումք իրս նախագուշակեն։ Բնական, որ վասն մեծի պայծառութեան բանական լուսոյ աղդէ ինքեամբ, և նախատեսակալ իմանայ զինելոցն ՚ի հետևութենէ իրաց. (բայց սուրբ երկոքեան երբեմն սխալմամբ՝ ստին։) Գերբնական, որ հոգւոյն Աստուծոյ ծանուցեալ լինի սրբոց և ընտրելոց ընդ ժամանակս ժամանակս։ Բանզի մի և նոյն մարգարէ ոչ հանապազ մարգարէանայ, այլ յորժամ և կամիցի Աստուած յայտնել նմա խորհուրդ ինչ։

Իւ զայս է երբեմն զի և մերժեալքն Աստուծոյ կարեն ստանալ 'ի ձեռն ճգանց հանդերձ ժուժկալութեամբ, անդադար պարապելով 'ի յիշումն անուանն Աստուծոյ, ըստ այնմ թէ, «Տէր տէր ոչ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դեւս բազումս հանաք, և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք»։ Որոց տացի պատասխանի 'ի Տեառնէ, թէ «Ոչ երբեք գիտէի զձեզ. 'ի բաց կացէք յինէն ամենեքեան որք գործէիք զանօրէնութիւն»[1]։ Վասնզի ոչ իւրեանց արժանաւորութեամբ ընկալեալ էին, այլ զօրութիւն և ներգործութիւն և ազդեցութիւն յիշեալ անուանն Աստուծոյ առնէր զայն ամենայն։ (Իւ ահա այսպիսիք են որ սուրբք երևեալ յաչս մարդկան՝ պիղծք են առաջի Աստուծոյ. ըստ որում զշնորհն պարգևեալ ինքեանց Աստուծոյ՝ ոչ յայլ ինչ ածեն 'ի գործ, եթէ ոչ 'ի շահասիրութիւն, յանձնասիրութիւն և 'ի փառասիրութիւն իւրեանց, ոչ հետևելով Փրկչին որ 'ի հրաշագործելն ասէր. «Հայր վասն ժողովրդեանս որ շուրջ կան առնեմ՝ զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս»[2]։)

1 Մատթ. Է. 22, 23։ 2 Յովհ. ԺԱ. 42։

Որոյ զօրինակն ունիմք ի Հնումն ի Բազասամ և ի Սաւուղ ըստ վկայութեան սրբազան առաքելոյն. նմանապէս և ի Կայիափայ, որ գոլով ի քահանայութեան աստիճանի՝ մարգարէացաւ։ Իսկ ի ներկայումս յայտ իսկ են գիտելեաց, զոր յանուանէ գրել չէ ինչ փոյթ ասել՝ն, որք զօրութիւնս գործելով բազում ինչ մարգարէաբար գուշակեն, և կատարին լրատէս ըստ ասոյ նոցին, որոց և բազմաց ականատես իսկ եմք։

Արդ՝ որովհետև մարգարէութիւնն է երբ հասարակ պարգև Աստուծոյ առ մարդիկ, (որպէս և ընթեռնումք [1], զի երիցս խնդրակքն Սաւուղայ հասեալ ի Նաւաթ-հատամայ, և տեսեալ զժողովս մարգարէից, մարգարէացեալ և նոցա անփոյթ արարին զդաւթայ. մինչ զի սրտմտեալ Սաւուղայ ինքնին հետևեցաւ. և ի ժամանելն անդ՝ ինքն ևս մարգարէացեալ զանց արար զդաւթաւ՝ զոր խնդրէր կալնուլ, մերկանալով յարքունի կամ ի զինուորական զգեստուցն. ուստի և ասացաւ յառակս, թէ Ոչ Սաւուղ ի մարգարէս.) և ոչ ըստ օրինակի միւս սքանչելագործութեանց և հրաշից՝ յատկա-

1 Ա. Թագ. ԺԹ. 22։

ցեալ։ Զիարդ ապա ուրեմն 'ի կարծիս լինիցիմք մեք վասն Մովսէսի որ հոգւովն Աստուծոյ մարգարէանայր, և մատամբն Աստուծոյ գրէր զՀառն ստեղծագործութեան արարածոց խորին և սքանչելի խորհրդովք, զորս չէր պարտ անարժանից յայտնել։ Որպէս և պատուիրեաց Աստուած Եզրասայ ոչ տալ ընթեռնուլ անարժանից զխորհրդաւորս գրեանս զորս գրեաց 'ի դաշտին յայտնութեամբն Աստուծոյ 'ի ձեռն հրեշտակապետին Ուրիելի [1]։ Նոյն և սրբոյն առաքեալն Պօղոս պատուիրէ Տիմոթեայ զառ 'ի յինքնէ ուսեալն չյայտնել ամենեցուն, այլ միայն այնպիսի հաւատարիմ անձանց՝ որ կարողք են և ինքեանք ուսուցանել այլոց [2]։ Իսկ Փրկիչն մեր հրամայէ, մի տալ զրբութիւն շանց, և մի արկանել զմարգարիտս առաջի խոզից [3]։

Լի է արդարև Հառն ստեղծագործութեան և զեղուն սքանչելի խորհրդովք. և յանդուգն է ապաքէն որ համարձակի ասել, թէ Մովսէս առ 'ի խաբել զամենայն ժողովուրդն գրեաց այնպէս ըստ թելադրու-

1 Դ. Էզր. ԺԴ. 26. 46։ 3 Մատթ. Է. 6։
2 Բ. Տիմ. Բ. 2։

թեան կամացն իւրոց, և այլն։ Ի՛ սարսա-
փելի անզգամութիւն և թշուառելի յիմա-
րութիւն։ Վասնզի որ այսպէսն խօսի, չճա-
նաչէ նա թէ ո՞ւր իցէ Մովսէս, և զի՞նչ զօ-
րութիւն նորա ընդ մեծի իմաստութեանն։
Ո՞չ սպաքէն նոյն Մովսէս է որ առանց սրոյ
և պատերազմի յաղթեալ Եգիպտացւոց և
փարաւոնի՝ ետան ի գերութենէ նոցա զայն-
չափ բազմութիւն ժողովրդոց, և զԵգիպ-
տացիսն ծովահեղձ կորոյս։ Զի թէ չէր զօ-
րաւոր բանիւք և գործովք և լի իմաստու-
թեամբ, զնմանդ կարէր միայնակ զդէմ ու-
նել փարաւոնի, և պահանջելով զժողովուրդ
իւր մաքառիլ ընդդէմ մոգուց և գիսոնոցն
Եգիպտացւոց։ Ո՞չ սպաքէն կարող էր փա-
րաւոն յառաջնում նուադի անդ ի սուր
մաշեալ զնա՝ չարձակել զգերիսն, եթէ զօ-
րութիւնք և իմաստութիւնք չէին ի Մով-
սէս, և կամ փարաւոն և Եգիպտացիք չու-
նէին ի նմանէ երկիւղ։

Արդեօք նոքա որք չկամին հաւատալ
գրոցն Մովսէսի՝ կարիցե՞ն ինքեանք ոչ եթէ
որմունդ մի իշոյ, այլ զանձինս իւրեանց գանել
հանել բռնութեամբ արտաքս ի սահմանաց
տերութեան միոյ։ Ընդէր ապա ոչ ճանա-
չելով զչափ անձանց իւրեանց համարձակին

ասել, եթէ Մովսէս վայրապար և ի զուր խօսիցի, և անսայդ իցեն գրուածք իւր, և առանց խորհրդոյ։ Բանդի այլ որ չկամիցի հաւանիլ այլուամ ուժք, պարտ է զի ինքն կամ առաւել քան զնա գիտիցէ, և կամ քան զնա առաւել գործունեայ որ իցէ և ճարտար, ապա թէ ոչ՝ հարկ է լաւել եթէ հասեալ որ իցէ. փոսն զի ոչ կարելոյն առնել ինչ, ասել և զայլոց արարս և ոչ հաւանիլ, է յայտնել զչիմարութիւն և զանգգնութիւն իւր։ Վասն որոյ տեսցուք թէ ո՞յք են որ բամբասեն զՄովսէս և զայլ սքանչելագործ անձինս. և կամ թէ զի՞նչ զօրութիւն ստացեալ ունիցին, և զի՞նչ գաղտնի ներգործութիւն բնութեանն ճանաչիցեն։ Արդարև ոչ ինչ. այլ միայն ընթերցեալ են զհնագոյն պատմութիւնս զարտաքնոց, որոց բազումք առասպելք են. և նկարագրաբար տեղեկացեալ են Միհոլճա կոչեցեալ առակաբան առեղծանելեացն հնագունից՝ առանց գիտելոյ զիսկական նշանակութիւն նոցին։ Այս և խօսելով քանի ինչ լեզուս՝ ուսեալք են գոյն ինչ ճառամարանութիւն, և ի բերան առեալ բառս ինչ և շարադրութիւնս սեթևեթեալս՝ բայց առանց իմաստի. հաւակ ուրեմն յուշի կապեալ զերևելի

և հասարակ սահմանս ինչ հնագոյն փիլիսոփայից, որ յաղագս բնական գիտութեան ասացեալ են առ ի վարժել զդեռակիրթ աշակերտս իւրեանց։ Իւ այսոքիւք առ փիլիսոփայս զանձինս ունելով ոչ յայլ ինչ մըտածեն՝ եթէ ոչ մարդելոյդ և շոգմարաբ քանիւք և գրութեամբք իւրեանց պատրել զողջամիտ փարթամս, և կողոպտելով զնոսա ապրիլ նոցին պարգևաք. յորոց եթէ պակասիցին՝ խկոյն սովամահ կորնչին. և ապա ոչ ևս կարեն ազատաբար՝ այսինքն գիտութեամբ իւրեանց այլով կերպիւ հայթայթել զաւուրն պարէն. որ և ամօթ մեծ է փիլիսոփայից՝ կարօտիլ այլոյն, և կամ ընդունել ինչ յայլոց։ Վանդի ինքեանք պարտին առատաբար բաշխել և լցուցանել զկարօտութիւն այլոց, եթէ ճշմարտապէս ի վերայ հասեալ էին գաղանեացն բնութեան։ Իւ զայս ոչ ասեմ վասն աստեղաբաշխից, բժշկաց, մեքենաբանից, ուսուցիչականաց [1] և այլ ամենայն ազատ արուեստաւորաց. քանզի սոքա յարուեստից իւրեանց արդիւնաւորեալ շահին. այլ վասն այնոցիկ ասեմ, որք սին զատարկաբանութեամբ իւրեանց առ

1 Իտ. Matematico։

փիլիսոփայս զանձինս ունելով, և զօղանջելով իբրև զդորսս՝ ջանան սուել և խափանել զօրէնս եղեալս յաստուածակերպ արանց, և ինքեանք կամին լինել հեղինակ աղանդից, աղարտելով զամենայն գրութիւնս այնոցիկ որ գերբնական լուսով են լցեալ։

Արդ՝ որք բամբասենն զՄովսէս՝ զինչ արդեօք կարծիցեն, միթէ այնչափ իմաստութեամբ իւրով ոչ կարաց ի միտ ածել՝ եթէ զկնի ժամանակաց գուցէ եպերեալ անդամանիցի յընթերցողաց զգիրս իւր, և կորուսանիցէ զհամբաւ, զյարգանս և զհաւատարմութիւն իւր զոր ընկալաւ սէրբամբ, և այն։ Այլ ոչ. այլ գիտէր նա զոր ինչ գրէր. և գիտէր եւ եթէ բաղումք ի բազմաց հոգւովն Աստուծոյ ունին վերծանել զնորհրդական գրուածս իւր և փառս մատուցանելոց տուողին շնորհաց, որ ի վերուստ ծաւալեալ բաշխէ խնդրողաց ծառայից իւրոց որք հաւատով յուսով և սիրով դիմեն առ նա։

Այս դարձցուք մեք վերստին ի կարգ բանիս կրկնելով զբանն մեր [1], թէ Իսկ եթէ յանդգնեալ ոչ հաւատան բանից Մովսէսի,

1 Տե՛ս յէրէ. 8։

գանել գործոյն հաւատացեալն, այսինքն այն-
քան գերազանց շնորհաց որ ի մարդուս են՝
հաւատացեալն։ Վասն զի լուսաւորութիւն
միտաց, նախատեսութիւն իրաց, հնարագի-
տութիւն զանազան արուեստից և մակացու-
թեանց, այլ և ճանաչումն՝ դատողութիւն
և քննութիւն անցելոց ներկայից և ապառ-
նեաց. նաև իշխանութիւնն զոր ունի մարդ-
ն ի վերայ ամենայն կենդանեաց, մի ա-
պաբէն բաւական և գեր քան զչափն առա-
ւել յայտնի վկայք են ազնուութեան և
յատկութեան իւրոց։ Ի վերայ այսոցիկ ամե-
նայնիցի փոքր ինչ թուիցին արդեօք և մեծա-
մեծ սքանչելագործութիւնք զոր բաւական
է առնել մարդն։ Բանդի բայց ի մարդոյ ո՞
այլ ոք ի կենդանեաց կարէր նախատեսանել
որպէս նոյ, եթէ զկնի այնչափ ամաց եղեցի
ջրհեղեղ ի վերայ երկրի, որ և զտապանն
կազմեալ պատրաստէր ապրեցուցանել այ-
նու զտեսակ իւր և զայլոց կենդանեաց. բայ-
որում ցարդ մարդոյ միայնոյ է կազմել նաւս
և շրջել ընդ ալրաս Ովկիանու ի մակերևոյ-
թիս ջուրց, ուղղելով և մղելով զնոսա ըստ
կամաց իւրոց ի դիտեալ նպատակն՝ ընդ-
դէմ այնքան ահագին բռնութեան հողմոց
և ալեաց ջուրցն։

Ի՞նչ օր 'ի կենդանեաց կարէր արդեօք իբրև զՄովսէս այնչափ սքանչելիս գործել առաջի Եգիպտացւոց և Փարաւոնի. և սպառնալ զնովն անցուցանել զԽարայէլացիսն ընդ ցամաք՝ ընկղմելով զԵգիպտացիսն։ Լուր ընդ ամս քառասուն պաշտպանել և դարմանել զԻսրայէլացիս յանջրդին անապատի, ուտելեօք և ըմպելեօք և զգեստուք, ոչ ինչ կարօտութիւն ունելով յայլոց։ ԼՀայ ճշմարիտ և խմաստուն փիլիսոփայ որ կարէր զբնել և հաստատել օրէնս։ Ի՞նչ դազանաց կամ յանասնոց իբրև զՅեսու արդեալը զընթացս ընդհանուր մեքենայի երկրագնացս առ 'ի երկարաձգել զտիւն. նա և զՀոսուամն Յորդանանու ընդ կրունկն դարձուցանել։ Ի՞նչ թռչնոց՝ 'ի սողնոց և 'ի վիշապաց իբրև զԵղիա հուր յերկնից իջուցեալ երկիցս այրէր զդիսունս, և հրով երկնից կիզէր զողջակէզ իւր առաջի բրմոցն Բահաղու։ Ի՞նչ ձկանց կամ 'ի դազանաց և յայլ կենդանեաց իբրև զԵղիսէէ զմեռեալս յարուցանէր, և երբեմն և սակերօք իւրովք։ Թողից զոբս առ Քրիստոսիւ՝ 'ի հեռևողաց նորին գործեցան բանիւք։ Քանզի յոյժ երկարէաք 'ի բանս և ձանձրութիւն յաղով ընթերցողաց տայաք. ուստի և այսքանս որ վասն սքանչե-

լեաց՝ բաւականացի. զի որ ի փոքուն հաւատարիմ է, և ի բազմին հաւատարիմ է. իսկ որ ի փոքուն անիրաւ՝ և ի բազմին անիրաւ դատանիցի։

Դիտեմ որդեակ զի ասես, եթէ որք վասն ստեղծագործութեան են բանիցն գրելոց ոչ հաւատան, զիարդ այդչափ սքանչելեաց հաւատացեն. որք թող զի և ոչ միում ի դոցունց հաւատան, այլ և անկարելի գոլ ասեն, և այլն։ Բայց այդ յիմարութիւն մեծ է. Նախ՝ զի ոչ գիտեն ինչ զգաղտնեացն Աստուծոյ, և ոչ իսկ զգաղտնի ներգործութիւն բնութեան, այլ ապատանեալք են միայն յանհաւատութիւն իւրեանց՝ որ ծնանի ի կատարեալ յիմարութենէ։

Երկրորդ՝ զիարդ համարձակին ուրանալ զայնչափ զարմանալիս և զքանչելիս զորս արար Մովսէս, և զոր անկարելի է սրտել, ըստ որում բազում ազգք վկայեն, մանաւանդ նոյն իսկ Եգիպտացիք։ Արդէս և յայտ իսկ է, զի ի ժամանակագրութիւնս վիպասանաց ի Մովսէսէ մինչև ցայսօր երեք հազար հարիւր և հինգ ամք հաշուին. որով իմանի եթէ ի Մովսէսէ մինչև ի ժամանակս Պողոսեայ՝ որ ի ձեռն եօթանասնից զամե-

նայն գրեանս Մովսէսի եւ Թարգմանել 'ի լեզու Հելլենացւոց, ոչ էին անցեալ յոլով դարք և ժամանակք. և գտանէին տակաւին բազում Ճառք և վիպասանութիւնք առ Եգիպտացիս. (որք զկնի բազում դարուց այրեցան յՕամանայ Մահմետեան.) և էին այլազան օրինօք և ընդդէմ Հրէից հաւատոյ։ Որպէս և ինքն Պտղոմէոս էր 'ի հեթանոսական օրէնս այլ սիրող Ճշմարտաբանութեան։ Այդ՝ Թագաւոր ոք կարող և իմաստասէր որպիսի էր Պտղոմէոս, եթէ 'ի պատմագրութեանց Եգիպտացւոց չէր ստուգեալ զամենայն զոր ինչ գործեալ էր Մովսէս 'ի նայն իսկ Եգիպտոսի՝ 'ի կարմիր ծովուն և Յանապատին, զիարդ հրաշաբարեալքն զդիրան յազգի իւրում, և յարգանօք պատուէր ըզԹարգմանիչսն. և կամ ընդէր շնորհէր ազատութիւն հարիւր և քսան հազար Հրէից գերելոց, որք 'ի նայն ժամանակի ընդ իշխանութեամբ իւրով գրաւեալ կային 'ի տաճարապանս յերկրին Եգիպտացւոց։ Այդաբև եթէ չէր ստուգեալ 'ի պատմութեանց և 'ի նշանաց Եգիպտացւոց՝ փոխանակ այնչափ բարերարութեանց զոր արար ազգին Խաչայելացւոց, խեղթիւ հայելով 'ի նոսա՝ իբրու ստաբանս և խաբեբայս՝ տանջանս խստու-

թեան յաւելոյր 'ի վերայ նոցա։

Երբորդ՝ այնպիսի անձինք նա և զնիւ-թաւոր և զընական իրաց հրաշապէս գործելոց՝ մինչև տակաւին 'ի յայտ եկեալք, չուներլով տեղեկութիւն զնոցունց՝ անհնարին գոլ ասեն։ Որպէս եթէ որ ասէր նախ քան զգիւտ վառօդին, թէ լեռր մի փոչի դերինս քայքայեալ և զապառաժս խորտակեալ և զամուր ամուր պարիսպս հիմն 'ի վեր տապալեալ յօդս վերացուցանէ։ Եւ կամ եթէ յառաջ քան զտեսանել զհրահայելին որ 'ի մետաղաց կամ յսկայ շինի, ասէր որ նմա՝ եթէ այնչափ թափանցիկ զօրութիւն հրոյ ունի յինքեան, մինչ զ'ի մէջ ջուրց եղեալ զփայտն երեքկանգնեան կամ չորեքկանգնեան խորութեամբ՝ կիզեալ յաձիւն դարձուցանէ։ Օ՛նայն է իմանալ և վասն եթերասլաց գնացն որ անհուն բարձրութեամբ ելեալ յօդս՝ իջանէ դարձեալ յերկիր ըստ կամեցողութեան առն որ զնա կաւատարէ։ Զն և այլ բազում նիւթական նորահնար գիւտք, որոց մինչև 'ի յայտ եկեալ՝ անկարելիք համարէին, իսկ 'ի տեսանելն հաւատան ընդ գոյութիւն սքանչելատիպ ներգործութեանց նոցին 'ի բնութեան։

Այս մեծ ինչ է եթէ վասն Հչմարիտ

սքանչելագործութեանց անկարելի գոլ ասել-
ցեն, որ ոչ յայլ ուստեքէ՝ եթէ ոչ յանգի-
տութենէ և յանհաւատութենէ յառաջա-
նայ։ Որոյ վասն ասեմք, միթէ կուրութիւն
չՀՐԻՍՏՈՍԻ առ արեգակն զգալի՝ կարէ՞ խա-
ւարեցուցանել զսպայծառ լուսաւորութիւն
ճառագայթից նորա. նոյնպէս տգիտութիւն
և անհաւատութիւն նոցա զԱստուծոյ հա-
ւատն կարէ՞ խափանել[1]. քա՛ւ լիցի։ Բայց
ահա յայտնապէս տեսանեմք սրդեակ իմ, զի
ստորին և գիւրին արուեստք ռամկականք,
որպիսի են կօշկակարութիւն, դարբնու-
թիւն, դերձակութիւն և այլք, առանց հե-
տևելոյ ուսուցչի և առանց կրթութեան և
ջանից անհնարին է ուսանել։ Այս-
պիսի գերազանց և աստուածապարգև-
կարողութեան մարդոյ սրպէս կարեն ժամա-
նել, եթէ ոչ ըստ պատշաճի աշխատեալ հե-
տևիցին, հեռանալով ի մարմնականէն և մեր-
ձենալով առ հոգեկանն. որպէս և արարին
և առնեն որք ընկալանն զբանն ճշմարտու-
թեան։ Արդեօք ո՞ որ ճշմարիտ ճանապար-
հաւ և որպէս հարին պահանջի՝ հետևեցաւ
ամենայն ջանիւ և ոչ եհաս։ Արդարև և

1 Հռովմ. Գ. 3։

ոչ ոք։ Այլ այնպիսի անհաւատքն տմենեքին խոստացան ի միասին և անպիտանացան։ Իբ ըստ առաստելաբանութեան հրեշոց փիլիսոփայից՝ Եգիպտացոց համանմանին յաւերժահարանց, և արուք Սասիրայից՝ այսինքն այծամարդոց. որք ոչ այլ ինչ խորհին և խոսկան՝ եթէ ոչ ուտել և բմպել, պճնիլ և շպարիլ. միով բանիւ՝ պարել և կոքաւել ընդ միմեանս անասնաբար խառնակելով։ Իսկ որ լաւագոյնք եմք քան զնոսա՝ ոչ հոգամք եթէ ոչ գանձել և ժողովել, շինել և անկել, և որպէս մարդ ի պատկերի ի զուր խռովեալ շրջիլ ի գանձել, ոչ գիտելով թէ ո՞ւմ ժողովիցեմք [1]. վասն որոյ և հասարակապէս առ մեզ կատարի բան մարգարէին՝ թէ «Մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա»։

Դարձցուք վերստին ի շարս բանից մերոց՝ թողեալ ի մի կողմն զբանչէլագործութիւնս որք լինէին ի ձեռն մարդոյ. և խօսեսցուք ի վերայ բնական հանճարոյ՝ զօրութեան և իմացականութեան մարդոյ՝ որով զանազանի յայլոց անբան կենդանեաց։

1 Սղ. ԼԸ. 7։

Արդեօք զիարդ կարէ մի միայն բարեյարմար կազմուած և ձև անդամոց մարմնոյ, եթէ չիցէ ի նմա աղդողագոյն ինչ զօրութիւն և ներգործութիւն յատուկ ազնուական հոգւոյ, ստանալ բնական գիտութիւն՝ որով կարիցէ քննել և իմանալ զնութիւնս զզօրութիւնս և զներգործութիւնս ամենայն էակաց։ Զափել զայնութիւն և զերկայնութիւն երկրի, զմեծութիւն և զխորութիւն ծովու, զբարձրութիւն և զանհուն ընդարձակութիւն երկնի։ Դիտել զշարժմունս և զդիրս աստեղաց, և ճանաչել զաղդեցութիւնս և զգուշակութիւնս նոցա։ Փորձել և գտանել զբժշկական զօրութիւնս ընդհանուր իրաց՝ յոլովակերպ բաժանմամբ և բաղկացուցմամբ քիմիական և իւղեփեցական արուեստիւ։ Ի լոյս ածել մեքենայական գործիս. հնարել երաժշտութիւնս, և զայլ անթուելի արուեստական հնարագիտութիւնս, այսինքն գծագրել զդիրս, պատուաստել զտունկս, ոստայնանկել կերպասս. և բաղկացուցմամբ երակականաց՝ բոզբոջականաց և կենդանականաց ըստ իւրաքանչիւր սեռի զանհուն իրս ի նոցունց հնարել. գտանել զապակին, և ի նմանէ հնարել անթիւ օգտաւէտ անօթս, դիտակս,

խոշորացոյցս, և այլ բազում գործիս։ Այսով բանիւ՝ զի խորութեան երկրի և ծովու զոյացեալ զմեռաղս, զակունս և զքարին նրա և զայլ բազում նիւթս ի մակերևութիւն երկրին ճանաչելով արտահանել։ Եւ զայլ անթիւ հնարագիտութիւնս առնել՝ զոր անհնար է ինձ գիտել և ի գիր արկանել, այլ թողում այլոց իմաստասիրել, ըստ որում ոչ ոք կարէ ուրանալ՝ եթէ իմացականութիւն մարդոյ է որ առնէ զայս ամենայն։

Արդ՝ միթէ սոքա ամենեքին չէ՞ին հաւաստի վկայք ազնուութեան և յատկութեան մարդոյ. ուրեմն զի՞նչ կարելի է մարդոյ լինել իբրև զմի յանասնոց. մանաւանդ զի՝ իշխան տէր և թագաւոր է նոցա[1]։ Քանզի եթէ կամի՝ զամենայն գազանն հնազանդեցուցանէ ինքեան. զթռչունս ի ջուցանէ յերկնից, և զձկունս հանէ յանդունդոց ջուրց. զօձս և զկարիճս և զկոկորդիլոսս և զայլ բազում մեծատակար կենդանիս բանիւք թռչութեան իւրոյ ի ծոցս երկրի և ծովու առաքարշեալ բերէ արտաքրս ի հնազանդութիւն ինքեան։ Զմանապէս և զայլ բազում իրս գործէ իմաստու-

1 Յով. գ. 7։

թեամբ և կարողութեամբ՝ ընդ որ փոքր մեր ապշեալ հիանան։

Լսեին մի զանց արասցուք զղօրեղութիւն, զուժեղութիւն և զքաջութիւն մարդոյ։ Քանզի ոմանք առանց զինուս պատերազմեալ ընդ գաղանաց՝ յաղթեցին նոցա[1]։ Ոմանք միով և եթ ցաղով զառիւծս և զարջս սատակեցին[2]։ Ոմանք զերկաթի և զայլ ամուր կապանս և զշղթայս խզեցին։ Ոմանք զերկաթեայ դրունս ձեռամբ խորտակեցին, և զմեծամեծ շինուածս տապալեալ կործանեցին[3]։ Իւ այլք բաղումք պէսպէս և հիանալիս գործեցին, որք լի են ի գիրս արտաքին վիպասանից. մինչ զի և նախնիք աստուածացուցեալ անմահութիւն շնորհեցին նոցա վասն քաջութեանց։ Իւ կայսրն Մարկոս Աւրելիոս վասն առաքինութեանցն տայ նոցա զանմահութիւն համաձայն այլոց բազմաց փիլիսոփայից՝ ասելով. Դիտեմք զի մի միայն Աստուած է անմահ յերկինս. իսկ դիք բազումք որ եղեն յերկինս, են մարդիկ իբրև զմեզ, որ առաքինիք գոլով յերկրի՝ եղեն դիք յերկինս։

1 Դոպ. ԺԴ. Ե, 6։ 3 Դոպ. ԺԶ. Ե. 30։
2 Ա. Թագ. ԺԷ. 36։

Այդ՝ նոքա որ ոչ զայլ ինչ գիտէին՝ բայց միայն զբնական գիտութիւնն, և բռնադատեալք ի լուսոյ բանին ոչ կարացին ուրանալ զանմահութիւն քաջաց և առաքինեաց, յորոց և ոմանք յանձն առեալ զմահ՝ կացին մնացին հաստատուն ի վերայ այսր մտաց իւրեանց, որպէս Սոկրատ և այլք. քանզի տեսանէին զի բնութիւնն ինքնին վկայէ գոլ անմահութեան, և բաղձայ ունել զայն։ Այսպէս ասեմն ոչքան յամօթ և ի նախատինս իցէ մեզ ուրանալ զսա. որ բաց ի բնական գիտութենէ ունիմք և զգերբնականն՝ զաւետիսն յիսուսական վարդապետութեան, թէ որ ծնանի ի հոգւոյ, ոչ մեռանելով յաւիտեան՝ մնանէ յաքայութիւնն Աստուծոյ։ Եւ թէ՝ հաւատալով մեր նմա և բանից նորա, ունիմք յանձին մերում զկեանս յաւիտենականս։ Աւաղ և եղուկ կուրութեան մտաց մերոց։

Այդ՝ աղաչելով պատուիրեմ քեզ որդեակ իմ, մի և մի երբէք հպիլ յայնպիսի գրեանս մոլորեցուցչացն այնոցիկ, զի շնչաւոր և դիւական է գիտութիւն նոցա [1]. և մի երբէք աղտեղել զօձեալ և զմաքուր ունին

1 Յով. Գ. 15։

քո, որ գրուն՝ք են աստուածային բանիցն լսելութեան և ոչ կորստական առասպելաբանութեանց։ Ա՛յլ՝ի բաց խորշելով փախիր և հեռացիր՝ի նոցուն՝ց որպէս յիժից և՝ի քարբից, որք թիւնաւորելով պատճառեն զմահ յաւիտենական։ Քանզի տեսանելով տեսանեն և ոչ ճանաչեն, լսելով լսեն և ոչ իմանան [1]. կոյրք են և խուլք, և երանի՛ եթէ և համր էին։ Քանզի նա որ վասն դատարկ բանի համարս տալոց է, ապա քանի՞ առաւել և նոքա՝ որ զաշխարհս ողջոյն գայթակղեցուցանեն։ Այլ եթէ լաւ էր նոցա որք զմի միայն որ գայթակղէն՝ երկան իշոյ կախեալ զպարանոցէն անկանել՝ի ծով, ապա որք զանհուն բազմութի՛ մարդկան գայթակղեցուցանեն՝ զի՞նչ լինիցի նոցա [2]. վա՛յ ինձ։

Մրդեակ իմ, գիտես հաւատաւ, զի մինչ մեք ցրտացեալք՝ի ջերմ սիրոյն Աստուծոյ՝ դարձուցանեմք զերեսս մեր՝ի նրմանէ առ արարածս զգալի, բառնայ և նա ինքն զհոգի իւր՝ի մէնջ ասելով. «Դարձցի հոգի իմ՝ի դոցանէ, վասն լինելոյ դոցա մարմին» [3]. այսինքն զնեղդրծութիւն և զաղ-

1 Մատթ. ԺԳ. 14։ 3 Ծննդ. Զ. 3։
2 Մատթ. ԺԸ. 6։

դեցութիւն հոգւոյն իւրոյ բառնոյ։ Այս յայնժամ անասնականն կերպարան տիրեալ՝ ոգին ընչական թագաւորէ, և զաղդեցութիւն հոգւոյ՝ հոգւոյն ոչ ընդունելով արգելու զմեզ տեսանել զուզիղ շաւիղն փրկութեան։ Այս մնացեալ լոկ զդալի իմացականութեամբ մարմնոյ միայն՝ զուրկ ի հոգեկան և ի գերբնական շնորհաց, ոչ կարեմք վերծանել եթէ ոչ զայն զոր զդալեաւ միայն տեսանեմք և իմանամք, զի ոչ ոք կարէ ասել Տէր զՅիսուս՝ եթէ ոչ Հոգւովն սրբով [1]։

Վասն որոյ և մեք հանդոյն յիմար իմասանոց մինչ տեսանեմք եթէ և մարդիկ հասարակ ընթացիւք բնութեան ծնանին և մեռանին, և հաւասարապէս զդան զամենայն կիրս բնութեան իբրև զանասունս, զատիմք ըստ կարծեաց մոլորելոց՝ թէ որպէս զՀոգւոյ անասնոյ ոչ ոք կարէ ասել թէ ի՞նանեն ի վայր, կամ զՀոգւոյ մարդկան թէ երանեն ի վերս, այլ ամենեքին ի միոյ տեղւոջէ առեալ՝ ի մի տեղի երթան [2]։ Ուրեմն մինչ մարմնեքն ցրուին ի տարեբս յորոյ բաղկացան, և հոգիք երթան առ

1 Ա. Կորն. ԺԲ. 3։ 2 Յոգնվ. Գ. 20, 21։

հեղինակ իւրեանց, և սոքա ամենեքին ըստ պահանջելոյ բնութեան պարտին խառնիլ որպէս ջուր ընդ ջուրս, և կամ որպէս հուր ընդ հուրս։ Այսպէս զիաւրդ կարէ լինել վերստին յարութիւն և կենաց յաւիտենական, ըստ որում իւրաքանչիւր ընկղմեցան 'ի հեղինակս իւրեանց. քանզի՝ հոգի որ ելանէ՝ այլ ոչ ևս դառնայ [1], և այլն։

Սակայն յայսմ հոգեկորոյս որոգայթէ դիւրին է մեզ անձնապուր լինել՝ երբ ըզդաստացեալ դառնամք առ Աստուած. որ և ինքն դարձեալ առ մեզ՝ ազդէ և բանայ ըզմիտս մեր, որոյ ազդեցմամբ կարեմք իմանալ զուղիղ մեկնութիւն և զվարդապետութիւն հին և նոր կտակարանաց, որոց խորին և բազում են մեկնութիւնք. զի իւրաքանչիւր բան ունի յատուկ մեկնութիւն. որք թէպէտ ըստ նկարագրականերին ներհակք երևին միմեանց, բայց ըստ ներքին իմացուածոյն բոլորովին համաձայն են իրեարաց, մինչ զի առնեայնք 'ի վերայ միոյ ուղիղ գծի ընթանան։ Սակայն սրտաբեր ընթերցողին աստուածային հոգւով՝ և ոչ մարմնաւոր և դիւական շնչով ընթեռնուլ։ Այլ ինչպէս

1 Աղ. Հ. 39։

վերծանել զամենայն միտս նոցին՝ ուր տե-
սանի հակասութիւն ինչ յիմաստս. քանզի
վայրապար և ոչ տուռ մի գտանի ի նոսա
գրեալ, որք լի են և զեղուն խորհրդական
աստուածամբք։

Արդ՝ առ ի հաւատոցս և կատարե-
լապէս զերծանել յայսպիսի մոլորութեանց՝
պարտիմք նախապէս դնելով զհիմն ի վերայ
եռակի կերպանի՝ ճանաչել զԱստուած և
զանձինս մեր. և գիտել եւ, եթէ մարդն
գոլով մի, է երկակի և եռակի։ Երկակի,
զի է հոգի և մարմին, որք և ասին ներքին
մարդ և արտաքին մարդ՝ ըստ սրբազան ա-
ռաքելոյն Պօղոսի [1]. որք և ունին հաղորդա-
կցութիւն և համակրութիւն ընդ երրորդ-
ին։ Եռակի, զի է բաղկացութիւն մի յեր-
կոցունց, որ ոչ է զուտ հոգի և ոչ լոկ մար-
մին, այլ երրորդական միջակ կացութիւն մի
բաղկացեալ յերկոցունց, և տեսակաւորեալ
ի հոգւոյ՝ կոչեցեալ մարդ. որ և յատակապէս
ասի անձն, յորում կայանայ և մարդկային
բնութիւնն։ Վասն զի զուտ հոգին ոչ կոչի
մարդ, այլ հոգի մարդոյ. նմանապէս և լոկ
մարմինն ոչ կոչի մարդ, այլ մարմին մարդոյ.

1 Բ. Կորն. Դ. 16։

որպէս և բնական է մարդոյ ասել՝ հոգի իմ, մարմին իմ։ Այնպէս ինչ, որ է եան՝ այսինքն անձն, նա է մարդ ընդ հոգւոյ և մարմնոյ իւրոյ, որ ընկալաւ զկենդանութիւն և ըստեսակ իւր ի հոգւոյն՝ ի բաղկացմանն։

Գիտելի է և սա, զի յաստուածային գիրս՝ բառքս այսոքիկ Հոգի և Անձն, բազմիցս փոխաբերաբար առեալ լինին ըստ օրինակի լուսոյ և հրոյ, որք և սոքա փոխաբերաբար անուանին՝ ի բազում տեղիս, որոց և մեք հետևեցաք ասելոյն։

Այլ արդ՝ ահա սոյն անձնաւորութիւնս զորմէ ասացաք կոչիլ մարդ ընդ հոգւոյ և մարմնոյ իւրում, սա է որ անկեալ՝ ի նեղբոյ սկզբնական մեղաց և մահու, և վերստին ծննդեամբ՝ ի հոգւոյ՝ ստանայ զանմահութիւն։ Որովհետև հոգին անմեղ և անմահ է ըստ ինքեան, և է շարժող և կենդանութիւն անշարժ և անկենդան մարմնոյն։ Որ ելեալն գոլով կենդանութիւն և ունող զզօրութիւն տալոյ զկենդանութիւն, հարկաւ պարտ է լինել անմահ. և չէ փոյթ նմա վերստին ստանալոյ զանմահութիւն, նա՛ զի՝ հոգի կենդանի փչեաց Աստուած՝ ի մարդն։ Այլ սոյն անձն է որ ամէն և զարգանայ մարմնովն, և ժամանեալ՝ ի չափ հասակի կատա-

բելութեան՝ ստանայ զգիտութիւն և զհանճար, որ և հաւատալով 'ի Բանն Աստուած՝ ոչ մեռանիցի յաւիտեան, այլ փոխեսցի 'ի մահուանէ 'ի կեանս, ոչ մտանելով 'ի դատաստան ըստ անսուտ խոստման իւրոյ [1]։

Սա այս անձն դարձեալ 'ի բաժանիլ հոգւոյն 'ի Թանձր և յապականացու մարմնոյն՝ մնայ ընդ հոգւոյ իւրում իբր մարմին, այլ որպէս թէ հոգի. վասն որոյ և նոյն հոգին սովիմբ զանազանեալ յատկանայ՝ եթէ իցէ այս ինչ մարդոյ. ուստի և 'ի դառնալ հոգւոյն առ հեզինակն իւր սովիմբ՝ ոչ խառնի որպէս ջուր ընդ ջրոյ, այլ որպէս ոսկի անծախելի մնայ յատկացեալ 'ի մէջ հրոյ. որ և 'ի նորոգիլ իւրում, (երբ և կամք իցեն Աստուծոյ,) ընդունի 'ի սոյն Թանձր և յապականացու մարմնոյն՝ միայն զնուրբ և զթափանցիկ և զանապական նիւթս նորին. ըստ որում ունի համակրութիւն և հաղորդակցութիւն ընդ նմա 'ի պատճառս անձինն որ ստացեալ ունի զանմահութիւն, որ և միացեալ է ընդ ինքեան։ Այլ անբաժանելաբար վերստին միացեալ ընդ առեցեալ անապական մարմնոյն՝ ոչ ևս կարէ բաժանիլ. քանզի մաքրութեամբ

1 Յովհ. Ե. 24։

և անապականութեամբ միացան շնորհիւ քրիստոսական հաւատոյ, և արդեամբ ա-մենասուրբ մարմնոյ և արեան նորա։ Որոյ հաւատոյ ազդալի և երևելի իմն օրի-նակ ունիմք 'ի բնութեան, կարի հաստա-տութեամբ վկայեալ 'ի բազմաց բնաղնին և 'ի Ճշմարիտ փիլիսոփայից, որք զգաղտնիս բնութեան և զիմանալի գրուածս տեսա-կան գրեանցն բնութեան՝ լուսով բանին և փորձառու իմաստասիրական զննութեամբք վերծանեալ ծանուցին մեզ յետագայից։ Բայց անտեղի է մեզ ասասէն զնոսն 'ի գրի հարկանել, զի ունիմ 'ի մտի յայլում նուա-գի խօսիլ և զնմանէ, եթէ Տէր կամեսցի։ Իսկ այժմ առցուք ասասէն զԹեալ կարգի բանիս խօսել, եթէ աստուածային գիրքք բազում և խորին մեկնութիւնս բովանդակեալ ու-նին յինքեանս, և թէ յոլով հակասութիւնք երևին 'ի նոսին, յորս բազում երևելի և բնաղնին անձինք սխալեալ մոլորեցան. զի ոչ էին բաբեպէս հաստատեալ 'ի վերայ եռակի կեդրոնին, վասն որոյ և ոչ ընթերցան աս-տուածային հոգւոյ, որպէս զի կարասցեն ուղղապէս վերծանել զմիտս նոցին։

Ցիրաւի իմաստնացեալն ԱԱստուծոյ Սողոմոն, (որոյ բանք իբրև վճիռք ընդու-

նելիք են յեկեղեցւոյն ,) տայ հաւասարութիւն ամենայն հոգւոց՝ ասելով, թէ Ամենեքին ի միոյ տեղւոջէ առան, և ի մի տեղի երթան, տալով օրինակ զգեստոց և զաղբերց վերադարձումն ի ծով[1], և այլն։ Նմանապէս և քնարն աստուածային Դաւիթ ընդ Աստուծոյ խօսելով՝ ասէ. «Հոգի որ ելանէ, այլ ոչ ևս դառնայ»[2]։ Սակայն ոչ մեկնեցին աստէն զմիտս իւրեանց։ Բանզի Դաւիթ ընդ Աստուծոյ խօսէր, որում չէր փոյթ մեկնութեան, զի Աստուած գիտէր զմիտս նորա։ Նմանապէս և Սողոմոն ֆիլիզոփայաբար՝ այսինքն բնականաբար խօսէր և ոչ գերբնականաբար. որպէս և յայլ ուրեք գերբնականաբար խօսեցան, որպէս և տեսանի ի ստորև համառօտաբար։

Բանզի ահա նոյն իսկ Դաւիթ յայլում տեղւոջ խնդրէր Աստուծոյ ասելով. «Հոգւով պետութեան քո հաստատեա զիս»[3]։ Ուրդ՝ զինչ հաստատութիւն խնդրէր՝ եթէ ոչ ի ձեռն հոգւոյ ծննդեան հաստատութիւն անձամբ ի կեանս, որպէս և ասէր. «Կեցցէ անձն իմ՝ օրհնեսցէ զքեզ»[4]։ Լու-

1 Յովել. Բ. 7։ 3 Սղմ. Ծ. 14։
2 Սղմ. Հէ. 39։ 4 Սղմ. ՃԺԸ. 175։

կեցութիւնս այս ոչ վասն մարմնական կենցաղոյս կեցութեան ասէր. զի նոյն ինքն դարձեալ աղաչէր թէ «Տէր հան ի բանտէ զանձն իմ»[1]. և բաղձայր անանց կենացն ասելով. «Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ Աստուած. երբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ»[2]. Իբրև յայլում տեղւոջ առ ի յայտնապէս հաստատել զանապականութիւն կենաց՝ ասէ. «Ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն»[3], այսինքն զմահ։ Իբրև թէ՝ «Ո փրկէ յապականութենէ զկեանս քո, պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ»[4], այսինքն փրկէ ի մահուանէ, և պսակէ անմահութեամբ։ Իբրև դարձեալ թէ՝ «Ո ընու ի բարութենէ զցանկութիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո»[5]։

Ահա յայտնապէս խօսի վասն նորոգութեան կենաց. քանզի ցանկութիւն մարդոյ ի բարութենէ Աստուծոյ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ կեանք և անմահութիւն, որ է ճշմարիտ

1 Սղ. ՃԽԱ. 8։
2 Սղ. ԽԱ. 1, 2։
3 Սղ. ԺԵ. 10։
4 Սղ. ՃԲ. 3։
5 Սղ. ՃԲ. 4։

և խակական ողորմութիւն և սէր Աստուծոյ առ մարդիկ. զորոյ յաւիտենականութիւն այսու ծանուցանէ ասելով, թէ «Մարդոյ (այսինքն մարդոյ անասնացելոյ,) որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկի»[1], և այլն. «Խոտոյ ողորմութիւն Տեառն մնայ յաւիտեանս յաւիտենից 'ի վերայ երկիւղածաց իւրոց»[2]: Ահա յաւիտենականութիւն երկիւղածացն Աստուծոյ: Ուրեմն յայտնի իսկ է յայտնցանէ՝ թէ Դաւիթ ասելով. «Հոգի որ ելանէ, ոչ ևս դառնայ». ոչ կամէր ուրանալ զնորոգութիւն և զյաւիտենականութիւն անմահ կենաց, այլ ըստ հասարակ ընթացից բնութեան խօսէր: Նմանապէս և Սողոմոն մինչ ասաց վասն հոգւոյ՝ ոչ վասն մարդոյ ասաց և ոչ վասն աւիւծուն, այլ վասն կենդանական հասարակ հոգւոյ. ըստ որում ասացաւ 'ի վեր անդր, թէ հոգի մարդոյն ոչ է մարդն, նմանապէս և ոչ մարմինն: Այսպէս և հոգի աւիւծուն ոչ է աւիւծն, և ոչ իսկ մարմինն, այլ 'ի բաղկացմանէ նոցունց յառաջ եկեալ անձնաւորութիւնն, և այլն: Ուրեմն յայտ է, թէ Սողոմոն վասն հասարակ

1 Աղ. ՃԲ. 14: 2 Աղ. ՃԲ. 16:

կենդանական հոգւոյ խօսքը բնականաբար, աւստի և ոչ ինչ յիշեաց ասա զյաւիտենական մարդկային կենաց։ Իսկ մինչ կամեցաւ խօսիլ դերբնականաբար, յայտնապէս ասաց թէ՝ «Խաչ ոգիք արդարոց 'ի ձեռին Աստուծոյ են, և ոչ մերձեսցի 'ի նոսա մահ։ Թուեցան յաչս անզգամաց թէ մեռան . . . այլ յոյս նոցա լի է անմահութեամբ»[1]։ Իսկ թէ՝ «Արդարք յաւիտեան կեցցեն»[2], և այլն։ Ուրեմն ահա և Սողոմոն խոստովանի զյաւիտենականութիւն կենաց։

Խաչ ասէն զբառն հոգի՝ պարտիմք իմանալ վասն անձին։ Քանզի հոգին ոչ է յուսով անմահ՝ այլ բնութեամբ. ուրեմն վասն անձին ասաց, և կամ՝ վասն բանական հոգւոյն, որ է յատուկ իմն հոգի՝ մարդկային տեսակի և եթ շնորհեալ յԱստուծոյ, և ոչ անասնոց, որպէս և հաւատացեալս եմք։ Իսկ մոլորեալքն ոչ երբէք հաւատան յատուկ հոգւոյ իւրաքանչիւր մարդոյ՝ յոչընչէ նորաստեղծեալ անդստին 'ի շնչաւորել իւրեանց յարգանդի մօրն։ Վասն որոյ և մեք ոչ ինչ խօսեցաք և ոչ ևս խօսեսցուք ընդ նոսա զսոյն յատուկ հոգւոյ, զի զժուարին և անշ

1 Իմաստ. Գ. 1, 2, 3։ 2 Իմաստ. Ե. 16։

հնարին և ս է հաւանեցուցանել զնոսա. ըստ որում միայն հաւատով հաստատեցաւ յեկեղեցւոջ 'ի սրբոց հայրապետաց։ Ուստի առցուք վերստին զառաջիկայ բանս մեր խօսել 'ի վերայ անձին ըստ նոցին ֆիզիկական կարծեաց, որովհետև չկարեն ուրանալ։

'Դիցուք թէ Աստուած 'ի միոյ միայնոյ հոգւոյ եւ ամենայն կենդանեաց հաւասարապէս, որպէս և առարկեն՝ թէ մի և նոյն հոգի է յամենեսին որ բաշխէ իւրաքանչիւր ումեք զանազան և պէսպէս ներգործութիւնս և ազդեցութիւնս ըստ ընդունակութեան իւրեանց, և այլն։ Խաբուք է. այլ ոչ ապաքէն 'ի միտեսակ՝ բամբակէ կամ 'ի վշոյ գործեալ կտաւք գոլով ամենեցուն սպիտակք՝ ունին բազում զանազանութիւնս 'ի միմեանց, որոց միայն նրբութիւնն թանձրութիւնն, և գործուածն զանազանէ զգին արժողութեան նոցին։ 'Այսմանպէս եթէ ներկանիցին, 'ի պատճառս ներկոյն զանազանութիւն 'ի գինս ընդունին։ Այսպէս յորժամ մի և նոյն սեսակ նուրբ կտաւն և բարիոք ոստայնանկեալ՝ ներկանիցի 'ի հաստատ և յաղնիւ ծիրանեայ, որ ոչ երբէք կորուսանէ զգոյն իւր, ոչքան առաւել մեծագնի լինիցի քան զմիւսն։ Այս այս էր սակս, եթէ

ոչ վասն աղնիւ և պատուական ներկոյն զոր ընկալաւ։ Այպա ուրեմն աղնիւ և պատուական ագանագոյն ծիրանի ներկին բանականութեան, զոր անկորուստ ընկալաւ ի հաստատէն իւրմէ, չունիցի առաւելութիւն իմն աղնուութեան և պատուականութեան քան զմիւս անբան կենդանիս։

Իսկ եթէ ասիցեն, (որպէս և ասեն,) թէ գոլով մի և նոյն հոգի յամենեսին ունին ամենեքին զսոյն բանականութիւն և իմացականութիւն. և բերեն առ այս օրինակ զբազում կենդանիս, զորս յուցանեն յոլով իմացականութիւն ունել ըստ օրինակի բանական մարդոյս. բայց կազմուած մարմնոյ նոցա և ձև անդամոցն ասեն լինել պատճառ ոչ կարելոյ լրապէս ցուցանել զներգործութիւն հոգւոյ իւրեանց և խօսել։ Իսկ կազմուած և ձև անդամոց մարդոյն գոլով յարմար և ընդունակ, ընկալնու և տպաւորէ յինքեան զամենայն ազդեցութիւնս և զներգործութիւնս հոգւոյն, և յայտնէ զիմացականութիւն իւր խօսելով և գործելով, և այլն։

Արդ՝ թէպէտ դիւրին է մեզ ջրել զիրքասարաս առարկութիւն նոցա, օրինակ բերելով զԺութակն, որ ունելով լեզու յար-

մարաձև ըստ օրինակի մարդկան՝ պարզ և յստակ արտաքին իրքև զմարդ բառս ինչ ուսեալս. բայց ամենևին զուրկ գտանի ի բանականութենէ, զի չկարէ ինչ խօսել տրբամախոհութեամբ մտաց իւրոց։ Այլ թողցուք ի բաց և զսոյն, որում ունին պատասխանել, թէ նա ըստ փոքու մասին ունի յարմարութիւն և ոչ ըստ բոլորին. վասն որոյ ի մէջ բերցուք զայլ իմն առարկութիւն՝ ոչ ինչ պատասխանելով վերնոյն, իբր զի՝ եթէ էր նորա նմանութիւն ըստ բոլորին, յայնժամ մարդ կոչիւր և ոչ թուրթակ, և այլն։

Յասացելոցս յայտնի երևի, թէ նիւթ մարմնոյ մարդոյն ապնուագոյն է և պատուականագոյն քան զամենայն մարմին. և է յաւէտ նրբագոյն ինչ թել բարեյարմար այնպիսի հրաշալի գործուածոց, որով և ընդունակ եղև ազգեցութեան և ներգործութեան հոգւոյն և մեծամեծ օժտիւք Ճոխացեալ՝ յորոց զուրկ են այլ կենդանիք։ Վասն զի ամենայն կտաւ՝ որոյ նիւթն չիցէ լաւագոյն, ոչ կարէ բարեպէս ուսուցանելիլ, և ոչ իսկ քաջ զնեալին ընդունի։ Արդէս և կապարն վասն անարդութեան նիւթոյն ոչ յարմարի ամենայն գործեաց և անօթոց որք կազմին յոսկւոյ և յարծաթոյ։ Բանզի ամենայն մե-

տաղք որ յերբակս երկրի՝ 'ի ծծմբաղաստնդ-
կեայ հիւթոյ գոյանան . այլ մաքրութիւն
և անմաքրութիւն հիւթոյն և խառնուա-
ծոց և կամ զանազան աստիճանաւ բաղկա-
ցութիւնք և եփեցմունք զանազանեն զաս-
տիճանս անարգութեան և ազնուութեան,
հաստատութեան և անհաստատութեան
նոցին ։

Ամենապէս և 'ի բուսոջականս և 'ի կեն-
դանականս նիւթք խառնուածք և բաղկաց-
մունք բազում զանազանութիւնս պատճա-
ռեն ։ Վասն զի որքան նուրբ և ազնիւ իցէ
նիւթն և յարմար խառնուածն , այնքան և
բաղկացութեանցն հաստատ լեալ՝ զանազա-
նին տեսակք 'ի միմեանց ։ Որպէս յայտնի
տեսանի 'ի կենդանիս . յորս է՝ զի ապրի ընդ-
երկար , և է զի սակաւակեաց է . ոմն ուժեղ
և զօրաւոր , և ոմն տկար և անզօր ։ Ի՞նչ՝
որ օգտէ միւսմ, և վնասէ այլումմ. է ինչ որ
ապականի յայլմէ իրէ , և է որ զգայ ոչ ինչ .
Դատանին 'ի խաստ՝ զոր կերեալ ուրուք մե-
ռանի , և այլ ոք դեղ ցաւոց անձին դատանէ
անտի ։ Ի հուր մատուցեալ ուրուք այրի ,
իսկ ջայլամն և սալամանդրն իրրև զանջաք
խստոյ ուտէ զհուր , և զհրացեալ երկաթն
շիջուցանէ ։ Այս ամենայն պատճառի 'ի

նութեան ի խառնուածոյ և ի կազմուածոյ յայտնի փորձառութեամբ, որ և է հիմն աւարկութեան իւրեանց։ Իսկ որ ինչ վասն մեծի զօրութեան յաւուրկ սերմանն է, զոր Աստուած իւրաքանչիւր տեսակի շնորհեաց ի ստեղծանելն ի պահպանութիւն և յաճումն այլ և այլ տեսակի իւրեանց, ոչ ինչ կամեցայ խօսել աստէն, զի առհասարակ ամենեցուն յայտնի են այնք. ուստի ինքեանց թողեալ զնոսն խմաստասիրել, մեք ի կարգ բանիս ձեզ ասացուք։

Արդ՝ որովհետև կազմուած մարդոյ այնչափ ազնիւ է որ կարաց յարմար գոլ և ընդունակ ազդեցութեան՝ ներգործութեան՝ և խմացականութեան հոգւոյն առաւելքան զմիւս կենդանիս, ուրեմն չէք հակասութիւն ասել՝ եթէ և նիւթն և խառնուած մարմնոյ նորա ազնուագոյն իցէ քան զմիւս կենդանեացն, որ յարմար գոտաւ այնպիսի ազնիւ կազմուածոյ, որով և ներկաւ՝ այսինքն օծաւ հոգւովն, յորմէ անբան կենդանիք վասն անյարմարութեան իւրեանց զուրկ մնացին։ Հաղորդացուցանի ուրեմն՝ թէ որովհետև նիւթով՝ խառնուածով՝ և կազմուածով այնչափ առաւել ազնիւ է մարդ, մինչ զի կարաց ընդունել յատկապէս առա-

ւել իմն ազդեցութիւն 'ի հոգւոյն քան զանասունս, ոչ է բնաւ երկբայելի՝ եթէ չիցէ նմա և այլ իմն խորհրդաւոր ներգործութիւն հոգւոյ, որով 'ի հետևել և 'ի խընդրել իւրում ջանիւ՝ չկարիցէ ժամանել յաւիտենական կենաց, որում բնականաբար այնչափ բաղձայ։ Քանզի պատուականութիւն նիւթոյ՝ խառնուածոյ՝ և կազմուածոյ իւրոյ ցուցանէն լինել 'ի նմա և այլ իմն գաղանի և սքանչելի խորհուրդ ինչ ստանալոյ զանապականութիւն, զոր օրինակ է ոսկին. մանաւանդ զի՝ եթէ անգամ մի բընականաբար բաժանիցի և վերստին բազկանայցէ, բիւրապատիկ առաւել հաստատութիւն ազնուութիւն զօրութիւն և ներգործութիւն ստանայ քան զոր արդէն ունի. որ է Հշմարիտ օրինակ կենաց մահու և վերանորոգութեան մարդկան՝ ըստ սարասի հատին ցորենոյ, որ եթէ ոչ անկեալ յերկիր փտիցի, ոչ ինչ զօրութիւն բազում կարէ առնել[1]։ Նայց թողցուք և զոսին 'ի մի կոյս, քանզի արդարև չկարեն դիւրաւ իմանալ զդաղտնին զոր Աստուած ընտրելոց միայն շնորհեաց, և խօսեսցուք այլաբար. ըստ ո-

1 Յովհ. ԺԲ. 24։

բում խոստովանին՝ թէ հոգին երթայ առ Աստուած յորմէ առաւ, և մարմինն ցրուի 'ի տարերս՝ ուստի բաղկացեալն էր. ուրեմն ըստ վկայութեան նոցա՝ հոգին գոլով միշտ առ հեղինակին իւրում, ոչ է բնաւ ոչնչացեալ, որպէս և վկայեն՝ թէ որպէս յոչընչէ ինչ ոչ կարէ լինել, նմանապէս և ինչն ոչ կարէ ոչնչանալ։

Երդեօք մարմինն ցրուելով 'ի տարերս զերծանիցի յիշխանութենէ Աստուծոյ. ոչ ապաքէն մինչ չէրն մարմին մարդոյ՝ հաւաքեալ զայն 'ի բոլոր մեքենայից աշխարհի, (Ի բոլոր մեքենայից աշխարհի ասեմ. քանզի ոչ պարտիմք ըստ նկարագրականին խմանալ՝ թէ 'ի լոկ և 'ի հասարակ կաւոյ երկրի կազմեցաւ մարմին մարդոյ, այլ 'ի բոլոր և յընդհանուր մեքենայէ երկնի և երկրի, առ տեզաց և տարերց, որպէս և տեսանեմք ա հա յայտնի փորձառութեամբ. ապա թէ ոչ՝ չկարէր ունել համակրութիւն ընդ ամենեսին, և ոչ ևս կարէր կոչիլ փոքր աշխարհ ըստ վկայութեան բնախօսից. և մանաւանդ ըստ Ռեմուեստուս Յուլիոսի, որ բաղումս աւարկութեամբ հաստատէ 'ի բնական փիլիսոփայութեան իւրում, թէ Աստուած 'ի բոլոր մեքենայից առեալ զկաւն մարդկային

մարմնոյ ։) կազմեաց մարմին, և ապա փրչ-
մամբ հոգւոյ՝ արար զնա մարդ կենդանի։

Արդ՝ նա որ 'ի նախնումն կարաց առ-
նել զմարդն որ չէր տակաւին տեսակաւո-
րեալ անձնաւորութեամբ, այլ ըստ ասից
նոցա՝ էր հոգի և տարր բաժանեալ, այժմ
յերկրորդումն ոչ կարէ կրկին հաւաքելով
'ի մի զցրուեալսն՝ կացուցանել զնա կենդա-
նի 'ի վերայ հիման անձին, որ 'ի բաղկացու-
թենէ հոգւոյ և մարմնոյ գոյացեալ ընկալաւ
յաւիտենականութիւն 'ի ձեռն վերստին
ծննդեան իւրոյ 'ի Հոգւոյն, և մնաց ան-
բաժանելաբար միացեալ ընդ հոգւոյն՝ 'ի
բաժանիլն 'ի մարմնոյն։ Այս կարող է և ա-
մենակարող վերստին շաղկապելոյ և առնելոյ
զնա որպէս էրն մարդ կենդանի, և առաւել
ևս աղնիւ քան զոր էրն յառաջ։ Քանզի երբ
կինք և երկիր և ամենայն տիեզերքս գոլով
գործք ձեռաց իւրոց՝ ըստ օրինակի ապոյ ձե-
ռին պարզեալ կան առաջի իւր, և նա է որ
ընու զամենայն փառաւք իւրովք։ Բայց եթէ
այսմ կարողութեան Աստուծոյ ոչ հաւա-
տալով՝ անկարելի գոլ ասիցեն, որպէս և
վասն սքանչելեաց բարբանջեն. և կամ իբ-
րու խորհրդակից Աստուծոյ գոլով՝ դիտիս-
ցեն զդաղանիս նորին՝ եթէ չկամիցի երբեք

տալ մարդկան այսպիսի նորոգութիւն և կենաց յաւիտենական, և սիրելն զբանս և զգրեանս աստուածայինս, այնպիսիք ուրաչ ցոգք են զԱստուած, որք կամ առ երկիւղի և կամ 'ի ցոյցս մարդկան խոստովանին զԵռութիւնն Աստուծոյ, բայց սրտիւք ուրանան ըստ անզգամին որ ասաց 'ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած [1]։ Ապա թէ ոչ՝ պարտ էին հաւատալ բանից նորա որ ասէ, թէ «Աստուած կենդանեաց է և ոչ մեռելոց» [2]։ Եւ թէ՝ զի ես Աստուած եմ յերկրին կենդանեաց։ Եւ ես թէ «Ես 'ի կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք» [3], և այլն։ Արդարև սոքա են որք շրթամբք խոստովանին և սրտիւք անիծանեն, որոց բանք նոցա ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ թոյնք իժից, և ինքեանք որպէս յուշկապարիկք մարդակերպ գազանք ծովայինք, որք քաղցր և ախորժ ձայնիւ եղանակաւ իւրեանց թմրեցուցեալ զնաւորդս, և կալեալ փեռեկաեն և լսեն. յորոց պարտիմք խցելով զականջս խորշիլ իբրև 'ի թշնամեաց Աստուծոյ։

Դարձցուք վերստին 'ի բնաբան մեր,

1 Սղ. ԺԴ. 1։
2 Մարկ. ԺԲ. 27։
3 Յովհ. ԺԴ. 19։

թէ կարող է Աստուած համահաւաքել ըղ-
ցրուեալ մարմինն, և ազնիւ քան զառաջինն
կրկին կացուցանել կենդանի, ըստ այնմ թէ
«Կարող է Աստուած ի քարանցս յարուցանել
յարուցանել որդիս Աբրահամու»[1]։ Լ՛ը այս
եթէ ասիցեն. Լուրեամն ամենայն մարմինք
կենդանեաց որք ունին զմի և զնոյն հոգի,
և ըստ տեսակի իւրեանց անձնաւորեալք են,
պարտին ամենեքին առնուլ զայս նորոգու-
թիւն ի տեսակս իւրեանց։ — Ո՛չ երբէք։
Քանզի նորոգութիւնս այս ի տեսակս իւր-
եանց՝ որպէս և հաւատացեալն եմք, է միայն
վասն մարդոյ և վասն մարդկային տեսակի,
և ոչ այլոց կենդանեաց։ Վասն զի, Նախ՝ այլ
ամենայն կենդանիք թէպէտ ըստ կենդանա-
կան սեռի համասեռք են և համեմատ մարդ-
կային կենդանութեան, բայց տեսակաւ՝
նիւթով և ամենայն պարագայիւք յոյժ տա-
բորոշք են և անկատարք, և այնչափ զանա-
զանութիւն ունին ի միմեանց՝ որչափ զա-
նազանեալ է լոյն ի խաւարէ և տիւն ի
գիշերոյ, և կամ կապարն յոսկւոյ. որպէս
և սրբազան առաքեալն Պօղոս ասէ. «Լ՛յլ
մարմին է մարդկան և այլ մարմին անասնոց,

1 Մատ. Գ. 8։

այլ մարմին թուչնոց՝ և այլ մարմին ձկանց»[1]. որպէս և փորձն ցուցանէ թէ՝ ի համս և թէ՝ ի հոտս, և կամ՝ ի ներգործութիւնս և ի զօրութիւնս դեղոցն կազմեցելոց յամենայն մարմնոյ կենդանեաց. յորս մարդկային մարմինն և խառնուած իւր այնչափ ազնիւութիւն և զօրութիւն ունի, մինչև ոչ ոք՝ ի կենդանեաց համեմատ գտանիլ ինքեան։ Եւ զայս զօրութիւն ներգործութեան յայտնի տեսանեմք մինչ ստանայ զաստիճան մուսմայի, որոյ ազդեցութիւնն է թափանցիկ յոյժ և զօրեղագոյն՝ ի վերայ համայն կենդանական մարմնոց, զոր ոչ ոք յայլ կենդանեաց կարէ ունել զայս ընդհանուր ներգործութիւն, և համեմատիլ այնմ։

Երկրորդ՝ սոյն անկատարութիւն և անմաքրութիւն նիւթոյ միւս կենդանեաց ոչ յառաջ ածեն՝ եթէ ոչ անկատար անձն. վասն որոյ և ոչ երբէք կարեն անկատար անձինք նոցա անբաժանելոյ միաւորիլ ընդ կատարեալ և ամենամաքուր հոգւոյն. այլ որպէս կապար և կամ պղինձ՝ կամաք արուեստաւորին ժամանակ ինչ մնան խառնեալ ընդ ոսկւոյ և իբր միաւորեալ, բայց՝ ի գալ փոր-

1 Ա. Կոր. ԺԵ. 39։

ձին՝ իսկոյն բաժանին։ Քանզի կատարելութիւն և մաքրութիւն միոյն գոլով հակակիր անմաքրութեան և անկատարելութեան միւսոյն, ոչ կարացին հաստատապէս բաղկանալ անձամբ, և այլն։

Երրորդ՝ և մարդն իսկ թէ և նիւթով և տեսակաւ աղնուագոյն և կատարեալ գոլ ցուցաւ քան զվիւս կենդանիս, բայց սակայն եթէ ոչ ընկալցի և նա զվերստին ծնունդն ի սուրբ Աւազանէն՝ ի Հոգին սուրբ, և ոչ մաքրիցէ զանձն իւր առաքինութեամբ, (թէ և բազկանայ անբաժանելաբար,) ոչ կարէ ստանալ զսոյն բաղձալի նորոգութիւն, և յառնել ի մահուանէ ի կեանս, այլ փոխի ի մահուանէ ի մահ՝ ըստ վճռոյ Փրկչին մերոյ։ Իսկ միւս կենդանիք՝ որք չկարեն ամենևին ունել զայս վերստին ծնունդ, ոչ կարեն ունել նաև նորոգութիւն ի տեսակս իւրեանց։ Ուստի եզրակացուցանեմք՝ թէ մարդոյս միայն շնորհեաց Աստուած զսոյն անձառելի մարդասիրական խորհուրդ, և ոչ այլոց կենդանեաց։

Երդ՝ սոյն աղնիւ մարմին մինչ ընկալնու զվերստին նորոգութիւն իւր, ստանայ բիւրապատիկ աղնուութիւն՝ որ գերազանցէ քան զհրեշտակայինն. (ըստ որում և նոքա

մարմինք են հրեղէնք, ըստ այնմ, «Ի արար զՀրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր 'ի հուր կիզելոյ»[1].) քանզի միաւորի սա ընդ Աստուծոյ, և թագաւորէ ընդ նմա։ Եւ յայնժամ կոչի սա յաւէտ հոգի՝ քան եթէ մարմին, որպէս և սրբազանն Պօղոս ասէ, «Ամենեքեան մարմին շնչաւոր, ապականութեամբ, անարգութեամբ, տկարութեամբ, և յառնէ մարմին հոգեւոր՝ առանց ապականութեան, փառաւք և զօրութեամբ»[2]։ Սա կայն տայ և խորհուրդ մի նոր՝ թէ ամենեքին ննջեսցուք, բայց ոչ ամենեքին նորոգիցուք. քանզի փառաւոր նորոգութիւնս այս ոչ է՝ եթէ ոչ վերստին ծնելոց 'ի Հոգւոյ, և ուղղութեամբ և մաքրութեամբ սրտի հեռանելոց աւետարանական վարդապետութեան Քրիստին. որ և առաքեսցէ զՀրեշտակս իւր ժողովել զընտրեալս՝ այսինքն զվերստին ծնեալս, 'ի չորից հողմոց 'ի դատել զնոսա[3]. որոց վասն և պատրաստեալէ փառք և տանջանք ըստ արժանի գործոց իւրեանց։ Քանզի դոլով միանգամ ծնեալք ըստ հոգւոյ՝ ոչ ևս կարեն մեռանել. այլ որոց զարիս գործեալ

1 Սղմ. ՃԳ. 4։ 3 Մատթ. ԻԴ. 31։
2 Ա. Կորն. ԺԵ. 42, 43, 44։

ից՝ 'ի յարութիւն կենաց, և որոց զչար ա-
բարեալ ից՝ 'ի յարութիւն դատաստանաց[1],
որ չար ևս է քան զմահ, զոր որոնեն և ոչ
գտանեն, զի մահ մեղաւորին չար է[2]։ Լու-
վան սոցա իսկ ասացաւ, թէ Հաւ էր նո-
ցա՝ թէ բնաւ չէր իսկ ծանուցեալ զարդա-
րութեանն Ճանապարհ, քան զի ծանեան և
յետս կացին 'ի սուրբ պատուիրանէն որ նո-
ցա աւանդեցաւ »[3]. որպէս Յուդա՝ որ էր
մին յընտրելոցն երկոտասանից. բայց մինն
'ի ձէնջ, ասէ, սատանայ է[4]. որ և քանիցս
անգամ կոչեաց զնա 'ի զղջումն, մինչև առ
'ի նշան ետ նմա զպատառն. բայց ոչ զղջա-
ցաւ. և ապա մտեալ 'ի նա սատանայ, զբ-
կեցաւ 'ի փառաց աստուածային հաղորդա-
կցութենէ, և դասեցաւ ընդ բելիարայ՝ ոչ
կորուսանելով յաւիտենականապէս զանձ-
նական էութիւն իւր։

Իսկ որոց լուեալ զանուն Բանին Աստու-
ծոյ, և ոչ ինչ փոյթ յանձին կալեալ՝ հակե-
ցան զհետ աշխարհային զբօսանաց և հեշ-
տութեանց, և ոչ խնդրեցին կամ ջանացին
եղեն հասանել վերսին ծննդեան 'ի ձեռն

1 Յովհ. Ե. 29։ 3 Բ. Պետ. Բ. 21։
2 Սղմ. ԼԳ. 21։ 4 Յովհ. Զ. 71։

հաւատոցն Քրիստոսի, մասնեցան յաւիտե-
նականապէս 'ի կորուստ տանջանաց՝ որպէս
կամիլ մի 'ի դուռն։ Ամենապէս և ամենայն
հեթանոսք որք ոչ անասային երբէք, և ոչ իսկ
'ի խնդիր եղեն ճշմարտութեան, կորուսեալ
զանձինս մարդկութիւնն զոր ընկալեալ էին
բնականաբար 'ի գոյութեան նախկին ծնողի
իւրեանց, եղեն նմանք և հաւասարք անաս-
նոց անբանից։ Իսկ զորոց գտանին 'ի նոսա
այլասեռ հաւատովք՝ որք բնականաբար բա-
րիք՝ առաքինիք՝ բարեգործք՝ և երկիւղածք,
չէ մեզ փոյթ քննել ասել, քանզի արարիչն
նոցա բաղուս և զանազան օթևանս ունի
'ի տան իւրում[1], ուստի և զկամաց իւրոց
և եթ կախեալ կայ։

Արդ՝ որդեակ իմ, որովհետև յայսպիսի
աղնիւ և 'ի գերագոյն աստիճանի ստեղծեալ
զմեզ Աստուծոյ՝ զարգարեաց շնորհիւ հո-
գւոյն իւրոյ, պարտիմք ապա և մեք յամե-
նայն յաժարութենէ կամաց Ջանալ և փոյթ
յանձին ունել Ճանաչելոյ զԱստուած և ըղ-
մեր անձինս։ Այս գիտել ճշմարիտ և անեղբ-
բայ հաւատով, թէ գուռն և ճանապարհ
այսր վերստին ծննդեան՝ է մի միայն Քրիստն

1 Յովհ. ԺԴ. 2։

մեր Յիսուս Քրիստոս, և այսու ծանօթութեամբ որոշել և զանազանել զմեզ և զբարս մեր յանանական բարուց և վարուց։ Եւ հաւատալով զԱստուած, Աստուած և Աստուծոյ, (ըստ մեծին Ալպերտի) վարիլ յաժենայն գործս մեր մարդկաբար և ոչ անասնաբար, առ ի համանմանիլ Աստուծոյ իբրև որդիք սիրելիք, այսինքն իբրև զմարդ. որ արարաւ Աստուծոյ ի նմանութիւն և ի պատկերի իւրում. զոր և իբր ընչ և պայծառ հայելի ինքեան՝ կացոյց զնա ի մէջ ընդհանուր էակաց։ Արդ՝ եթէ պատկեր ինչ չունիցի զնմանութիւն հեղինակին, զիարդ ասիցի լինել պատկեր այս կամ այն ինչ իրի. նմանապէս և մարդն՝ եթէ չունիցի ի վերս և ի բարս և ի գործս իւր նմանութիւն ինչ Աստուծոյ, զիարդ կարէ լինել պատկեր Աստուծոյ։

Այս ուրեմն առ ի գիտել թէ որպիսի կամ որպիսի եղանակաւ պարտիմք վարիլ և ի գործ ածել զհնգեսին զգայարանս մեր, որք են հնգեքին քանքարք շնորհեալ մեզ Աստուծոյ առ ի յարգել և շահեցուցանել, զի կարասցուք նմանիլ Աստուծոյ և կոչիլ որդիք սիրելիք և պատկերք. գրեցեալ քեզ յառաջիկայս համառօտակի ըստ շա-

փու. Համբակու. թեան խմու. մ, զի մի թագու. ցանելով զքանքարն՝ նախատինս ի ցեսուն ընկալայց։ Եւ զու բացեալ զունկն մտաց և սրտի քո՝ լուր բանից խմոց, զոր խրատ պատգամ և հոգեշահ խրատ ընծայեմ քեզ։



ՄԱՍ Ե՛ՐԿՐՈՐԴ

ՑԱՌԱԳՈՍ ՀՆԳԻՑ ԶԳԱՑԱՐԱՆԱՑ

ԿԱՆԽԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա՛ՍԱՑԱՒ յառաջնում մասին, եթէ մարդն և անասունն համասեռք են կենդանական, և տարբերչք տեսակաւ, կարի յոյժ զանազանեալք 'ի միմեանց, և այն. բայց միահաղոյն ենթարկեալ հնգից զգայարանաց և բոլոր մարմնական կրից՝ բաց 'ի բանականութենէ, որով մարդն զարդարեալ այսուլուսով զանազանի 'ի նոցունց կարի իմն գեղարգոյն աստիճանաւ. մինչ զի և գովեստս ընկալաւ 'ի Փրկչէն, թէ "Ողբէք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց"[1]: Իսկ սոքա ամենեքին գոլով մարմնաւորք և բաղկացեալ 'ի չորից ապականացու տարերց՝ ենթակայ են ապականութեան և ծնելութեան հարկաւ: Բանզի առանց ապականութեան ոչ ինչ մարմնա-

1 Ղուկ. ԺԶ. 8:

ւոր գոյացութիւն կարէ ծնանիլ ըստ մէնուոյ հանուրց փիլիսոփայից, թէ ապականութիւն միոյն ծնուանդ է միւսոյն. և այս կրկնակի շարժմամբ, այսինքն յատուկ և հասարակ։ Յատուկ, զի իւրաքանչիւր տեսակ՝ զնոսին մի այն արտադրէ տեսակ և ոչ զայլոց, որ լինի միջոցաւ իւրոյ անհատին։ Իսկ այս՝ ապականութեամբ տեսակական այսինքն յատկական սերման, որոյ յապականութենէ յառաջացայի նորածին միւս անհատն նոյն տեսակի. որպէս և տեսանեմք 'ի բոզբոջական և 'ի կենդանական սեռս. իսկ յերբակական սեռի լինի այլազգ։ Հասարակ, որ յապականիլ տեսակի միոյ՝ փոխարկի յայլ իմն տեսակ 'ի ձեռն ընթացից բնութեան, իսպառ կորուսմամբ իւրոյ նախնական տեսակին. որպէս և փայտն յապականիլն այրեցմամբ՝ փոխարկի յածիւն, և 'ի փտիլ մոխրոյն՝ ըստ պահանջման բնութեան փոխարկի յայլ իմն իր. յորոյ ոմանք թէ և պահպանեն գաղտնի զորութիւն ինչ նախկին ներգործութեան բնական տեսակի իւրեանց, բայց այս ոչ է ամենեցուն հասարակապէս և ոչ իսկ բաղմաց։

Արդ՝ որոմհետև և մարդն իսկ գոլով մարմնաւոր, և ըստ պահանջման մարմնոյ՝ գրբ-

տանի ենթարկեալ ապականութեան և ծնընդեան, նա և բոլոր զգայարանաց և ամենայն մարմնական կրից ըստ օրինակի անասուն կենդանեաց, ոչ է հարկ յաղագս այսորիկ դատել զնա իբր համահաւասար միւս անասնոց։ Այլ որպէս ասացաւ 'ի վերոյ յառաջին մասին մերում, պարտ է ճանաչել զնա կենդանի ինչ ազնուականագոյն և պատուականն՝ հաղորդ գերագոյն հոգւոյ և մարմնոյ, և ընդունակ իմաստութեան և հանճարոյ յաղագս իւրոյ բնական իմացականութեան, որով և ունի յարմարութիւն և համակրութիւն հաղորդակցելոյ աստուածային բնութեան [1] և ստանալոյ հոգեպէս մշանջենական անմահութիւն և անապականութիւն։ Որոյ հոգին է յատկապէս ոգի և բնակարան Աստուծոյ։ Քանզի հոգի հոգւոյն մարդոյ՝ է նոյն ինքն Աստուած, յորում բազմեալ որպէս զեկամար 'ի նաւու՝ ազդէ յաստուկ ներգործութեամբ։ Որոյ զեկն է լոյսն բանականութեան, և զեկավարն նոյն ինքն Աստուած, որ կատարեալ պաշտպանել ընդունի մարդկային անձին 'ի միջ դժնդակ ալեաց ծովու աշխարհիս, և ընդդէմ բռնու-

1 Բ. Պետ. Ա. 4։

թեան սատակացեալ ներհակ հողմոցն փոր-
ձանաց փորձողին, որ երբեմն ցուցեալ ըղ-
քարինս՝ դրդէ հրամայել նոցա զի հաց լի-
նիցին. մերթ ՝ի վերայ աշտարակի կացու-
ցեալ զնա՝ ասէ արկանել զանձն իւր ՝ի վայր,
զի ՝ի հրեշտակաց բարձեալ՝ ոչ երբէք ըղ-
քարի զոտն հարկանիցէ։ Այլ երբեմն հա-
նեալ ՝ի լեառն բարձր մեծամտութեան՝ խոս-
տանայ տալ նմա զամենայն զդանձս և ըղ-
թագաւորութիւնս աշխարհի, եթէ փոխա-
նակ Աստուծոյ՝ նմա հետևելով զնա պաշ-
տիցէ [1]։ Որում եթէ անսացեալ մարդոյ, և
մանաւանդ անձնիշխանական կամքն իւրովք
հաւանեալ բանիցս նորա՝ կամիցի դնել զանձն
իւր ՝ի վտանգի, նոյն ղեկավարն ճարտար
որ բնակեալն է ՝ի նմա անբաժանելաբար,
(ըստ այնմ թէ՝ զորս ՝ի քէն յառաջ բերես
դու, թէ՛ իր՝ թէ՛ իրակութիւն, ոչ բաժա-
նիս ՝ի նոցանէ որպէս յետակս էութիւն.)
փրկէ զնա և հասուցանէ ՝ի խաղաղ նաւա-
հանգիստ, եթէ նաւն ընդ ղեկի իւրում
հնազանդեալ յանձնեսցէ զինքն կամաց ղե-
կավարին։ Իսկ եթէ յամառեալ դիմեսցէ
առ ներհակն՝ ոչ ինչ անսալով ազդեցութեան

1 Մատթ. Դ. Ց։

զեկավարին, բարձի Թողի լինի երթալ ըզ-
հետ կամաց սրտի իւրոյ, զի գնայ ըստ կա-
մաց անձին իւրոյ. ուստի և հանդիպեալ ա-
պառաժից՝ խորտակի և ընկղմեալ կորնչի ի
խորս անդնդոց ծովու։ Ի դէպ այսմ բար-
բառի և մեծն Օգոստինոս. «Ստուած իմ,
ասէ, որչափ որոնեցի զքեզ արտաքոյ քան
զիս, այնչափ մոլորեցայ և հեռացայ ի քէն.
զի դու ի ներքս յիս բնակեալ էիր, և ես
տգիտաբար որոնեցի զքեզ արտաքոյ»։

Իսկ մեծն Ալպերտ զայս դոյութիւն Ա-
ստուծոյ ոչ միայն ի մարդն՝ այլ նա և յամե-
նայն արարածս բնականաբար հաստատէ,
գրելով ի բնական աստուածաբանութեան
գիրքն իւր, թէ այնչափ ներկայ գտանի Ա-
ստուած յարարածս իւր, մինչ զի եթէ ի բաց
քարշէր զինքն յեկեցս՝ ամենեքեան յոչնչ
դառնային, որպէս և եղենն յոչընչէ։ Ի-
սրբազան առաքեալն Պողոս իբրև վճիռ հա-
տանէ, թէ «Նովաւ կեամք և շարժիմք և
եմք»[1]։ Ի-Ալպերտ յայլուս տեղւոջ կրկնէ
զնոյն ասելով. «Թէպէտ Աստուած է բնա-
կանաբար յամենայն էակս, սակայն է ի զա-
նազան կերպի. քանզի այլ է ի հրեշտակս,

1 Գործ. ԺԷ. 28։

և այլ ի դևս և ի սատանայն. այլ է ի գա-
զանս և այլ յանասունս. այլ է ի տունկս
և այլ ի տարեբս, և յայլս ։ Եմանալիս և
այլ է ի մարդս. (զանազանելով զարդարն
և զվերզաւարն.) որոյ ներգործութիւն ի
մարդս՝ յաւէտ սիրաբար է քան տիրաբար։
Այլ արդարև սիրաբար. վասն զի նման ըղ-
նեմանն սիրէ բնականաբար. վասն որոյ և կո-
չեցաւ մարդասէր և ոչ հրեշտակասէր։ Եւ
ոչ բուռն եհար զհրեշտակաց՝ այլ զզաւա-
կէն Աբրահամու [1], այսինքն զԱդամայ։ Ել
էջ յերկնից որոնել զանթիւ բազմութիւն
անկելոց դասուց հրեշտակաց, այլ զզատակե-
բայսն իւր զմարդ։ Ել յանձն էառ զոնօ-
րէնութիւն՝ կրել զկիրս զչարչարանս և զմահ
խաչի վասն հրեշտակաց, այլ վասն մարդոյ։
Եւ եղև ոչ հրեշտակ՝ այլ մարդ կատարեալ։
Կատարեալ ասեմ, և ոչ իբրև զմեզ անկա-
տար՝ զոլով հակեալ ի մարմին, յաշխարհս և
ի սատանայ. վասն որոյ ի չափ կատարելու-
թեան յարդարէ զմեզ հասանել սրբազան ա-
ռաքելոն Պօղոս՝ ասելով թէ. «Մինչև հաս-
ցուք ամենեքեան ... յայր կատարեալ ի չափ
հասակի կատարմանն Քրիստոսի» [2] յաղթող

1 Եբրայ. Բ. 16։ 2 Եփես. Դ. 13։

լինելով փոքածողին. և նմանիլ Քրիստոսի և ինքեան, որպէս և ասէ. «Նմանողք լինջ ե-ղերուք որպէս և ես Քրիստոսի»[1]:

Վանդի այր կատարեալ՝ է ճշմարիտ պատ-կեր՝ նման և հայելի Աստուծոյ. որպէս և ոմն յաստուածածանօթ բանաստեղծից՝ ի ճա-ռելն զաղնուութենէ և զկատարելութենէ մարդոյ, ասէ. Զմարդն զոր ես ասեմ, մի կարծիցես զմարդն անասնացեալ, այլ զմարդն որ է ճշմարիտ հայելի Աստուծոյ. և եթէ ունիցի զնմանէ ծանօթութիւն, անշուշտ զնա Աստուած կոչէիր, և փոխանակ բաբար զԱստուած՝ մարդացեալ Աստուած անուա-նէիր, ընդ որում ունի այնչափ նմանութիւն իբր ընդ հեղինակի իւրում:

Արդ՝ որովհետև մարդն է պատկեր՝ նը-ման և հաղորդ Աստուծոյ, միանգամայն և աթոռ՝ տաճար և բնակարան նորին յատկա-պէս, ոչ պարտիմք վասն մարմնաւոր և զդալի կրից իւրոց և վասն հնգից զգայարանաց զոր ունի հանգոյն այլոց կենդանեաց՝ համարել զնա իբրև զմի ի նոցունց: Ոչ պարտի և մարդն իսկ ինքնին վասն հնգից լծոյն եզանց (այսինքն հնգից զգայարանաց,) գնելոց՝ հը-

1 Ա. Կոր. ԺԱ. 1:

բաժարիլ 'ի Հարսանեաց կոչնականութենէ, հետևելով 'ի փորձել զնոսա [1]։ Այլ պարտ է 'ի գործ ածել զնոսա ըստ յարմարութեան և ըստ պատշաճաւորութեան տեսակի իւրոց, ծառայեցուցանելով զնոսա ինքեան առ 'ի քաղել 'ի նոցանէ օգուտս հոգւոյ և մարմնոյ իւրոց. և ոչ զօրէն անասնոց ծառայ լինել կրից իւրոց և զգայարանաց, և այնու խակապէս հաւասարիլ անասնոց անբանից և նմանիլ նոցա։

Վասն որոյ կամեցայ ասասէն խօսել ըզնոցանէ ուրոյն համառօտ ինչ բանս զի կարիցես 'ի գործ ածել զսոսա 'ի գործս առաքինութեան, և հաւաքել այնու պտուղս հաւատոյ՝ յուսոյ՝ և սիրոյ։ Յու այսու անսայթաք շաւղաւ ընթացեալ՝ ժամանել առ բաղձալի վախճանն միաւորութեան Աստուծոյ, և ժառանգել զանզրաւական ուրախութիւն 'ի Հարսանիսն անապական, զգեցեալ լուսափայլ պատմուճանս հարսանեաց, ճանաչել միշտ զԱստուած և գթել ինքն։

1 Գ-ի. ԺԴ. 19։

ՅՕԳՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Յաղագս դէսուելեաց։

«Եթէ ոչն քո առատ է՝ ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի. իսկ եթէ չար՝ ամայ ի խաւարի»։ ՄԱՏԹ. Զ. 22։

Ակն կոչի զդայարանն տեսութեան, զոր հաւասարապէս ունին ամենայն կենդանիք, այսինքն ասունք և անասունք, մարդք և սողունք և թռչունք և ձկունք. ի մի բան՝ ամենայն շարժուն կենդանի ունի ընկալեալ Աստուծոյ զայս գերագոյն պարգև, որով իւրաքանչիւր անհատ պահպանէ և կառավարէ զանձն, և է ուղեցոյց և առաջնորդ նորա։ Քանզի սովիմբ պահպանէ զինքն յամենայն երևելի որոգայթից, և սովիմբ հայթայթէ զպիտոյս և զճարակ անձինն. նա և այսու ընդունի զծանօթութիւն նիւթոց՝ զդունոց, զլուսոյ և զխաւարի, և զայլ ամենայն զգալի և մարմնաւոր իրաց, որք կամ օգտակարք և կամ վնասակարք են անձին կենդանւոյ։

Եւ զսոյն ազնիւ պարգև և զձիր հասարակաբար ընկալեալ են ի հասուչէն իւ-

բեանց ողջոյն կենդանիք, թէ հրայինք իսկն և թէ երկրայինք, թէ ջրայինք և թէ օդայինք, իւրաքանչիւր ըստ յարմարութեան և պահանջման տեսակի իւրեանց։ Ասասի և են ոմանք որ հեռատեսք են և ոմանք կարճատեսք. ոմանք 'ի տուընջեան տեսանեն, և ոմանք 'ի գիշերի, և ոմանք յերկոսին և։ Ոմանք և լուսով իսկ ճրագի կարեն տեսանել 'ի գիշերի, և ոմանք ոչ երբեք. ոմանք 'ի մէջ ջրոյ միայն, և ոմանք 'ի ջուր և 'ի ցամաք, և այլն։

Բայց այս ամենայն ազգք տեսութեանց զգայարանն և եթ օգտեն ընդհանուր կենդանեաց՝ յիրս բնականաբար եղեալս՝ այսինքն էացեալս, և այն՝ զանազան աստիճանաւ։ Բանդի ենթալուսնեայք՝ այսինքն թանձր շօշափելի և մարմնաւոր կենդանիք, զանեւրեայթ կենդանիս՝ իմա զհրեղէնս ոչ կարեն տեսանել։ Իսկ հրեղէնք տեսանելով զհրեղէնս՝ այսինքն զամենայն հոգեղէնս, տեսանեն նաև զայլ ամենայն նիւթական էացեալս բայց յԱստուծոյ, որ է անեղ՝ պարզ՝ և աննիւթ էութիւն անտեսանելի և անշօշափելի. զի ինքեանք գոլով նիւթեղէնք՝ այսինքն հրեղէնք, զանիւթն ոչ կարեն տեսանել, այլ զԱստուած տեսանեն միայն իմանալի աչօք,

որպէս և մարդն զաներևոյթն խմացակա-
նութեամբ միայն տեսանէ։ Բայց հրեշտակք
առաւել քան զմարդն ունին խմացականու-
թիւն, ըստ որում աղաւաք են 'ի թանձր տա-
բերէ. և 'ի հանդերձեալն մինչ ստանոյ մարդ
զփառաւոր նորոգութիւնն, առաւել քան
զհրեշտակս պայծառ և լուսաւոր խմացակա-
նութեամբ տեսանէ զԱստուած արդեամբ
մարմնաւորութեան բանին Աստուծոյ, և
վասն հաղորդակցութեան մերոյ ընդ ամե-
նասուրբ Մարմնոյ և Արեան նորին։ Քանզի
հրեշտակք ոչ հայիլ, ոչ մերձիլ և ոչ հաղոր-
դիլ կարեն, որպէս և վկայէ սուրբ գիրն,
յասելն Աստուծոյ ցՄովսէս, թէ «Ոչ կա-
րես տեսանել զերեսս իմ... այլ զյետսյոն
իմ տեսցես»[1], այսինքն զմարմնաւորութիւն
բանին իմոյ տեսցես. զոր և նախ քան զմար-
մնանալն ետես Եսայի, առաջի որոյ Սերովբ-
բէք և Քերովբէք սաւառնեալ թևօք նիւ-
թականութեան՝ սարսեալով ծածկէին զդէմս
իւրեանց, և ոչ կարէին հայել և տեսանել
զնա, կամ մերձենալ և հաղորդիլ[2]։ Որպէս
և Փրկիչն մեր ծանոյց, թէ «ԶԱստուած ոչ
ոք ետես երբէք, բայց միածինն Որդի որ է

1 Ելից. ԼԳ. 20. 23։ 2 Եսայ. Զ. 1։

'ի ծոց Հօր՝ նա պատմեաց»[1], ընդ որում հաւատացեալք միանալով՝ այսինքն ընդ միածնին Որդւոյն, կարեն մերձենալ առ Աստուած 'ի ձեռն շնչափման բանին կենաց. և առաւել քան զհրեշտակս լուսաւոր իմացակցութեամբ տեսանել զնա Որդւոյն։

Բայց թողցուք այժմ խօսիլ 'ի վերայ բնաբանիս այսորիկ, քանզի ներբամիտ աստուածաբանից և եթէ զամանէ ճառել. և դարձցուք 'ի կարգ բանին մերոյ, թէ Տեսութիւնք մարմնաւորաց օգտեն միայն յիրս բնականաբար էացեալս. և գրեթէ մի միայն վասն օգտի մարմնական կենացս. որոց 'ի զգիլն 'ի տեսութենէ պատահմամբ իւիք, բաղում վնասս և տառապանս կրեն։ Այլ տեսութիւն մարդոյ գերազանցէ յոյժ քան զնոցին. զի մարդն տեսութեամբ ճանաչէ նա և զզօրութիւնս և զգաղանի ներգործութիւնս ամենայն իրաց։ Եւ կարէ նա տեսութեամբ և եթէ գիտել թէ զինչ ինչ կարելի իցէ յառաջ ածել 'ի նոցունց, և թէ իմ իմիք օգտիցեն այնք և ծառայիցեն. ուստի և այսու ճանաչմամբ հնարէ 'ի նոցունց այլ և այլ իրս՝ որք բնականաբար չէին եղեալ։

1 Յովհ. Ա. 18։

Յաւելու 'ի նոյն այսու տեսութեամբ զանթիւ բաղկացութիւնս և արուեստս։ Ի ձեռս բերէ և ազգս ազգս գիտութեանց, և գործէ հիանալիս մինչև 'ի սքանչացումն բերել ըզտեսողս։ Այսն որոյ և տեսութիւն մարդոյ առաւել գերազանց և օգտակար է ինքեան, քան զայլ կենդանեացն՝ նոցին։

Սակայն ոչ է պարտ մարդոյ զայսոքիւք և եթ պատաղեալ բաւականանալ, այլ օգտակարագոյն ևս տեսութեանց զհետ լինել, և զօրութիւն յաւելուլ 'ի նոյն՝ զի մի խաբիցի։ Բանզի երբեմն դիւրաւ պատրի մարդ 'ի տեսութենէ. զոր օրինակ գաւազան ուղիղ մխեալ 'ի ջուր՝ երևի կոր, այլ մարդ բանականն գիտէ զնորին ուղղութիւն և ոչ խաբի։ Հարկ է նաև գիտել թէ զի՞նչ է ակն, և ո՞վ է որ տեսանէ և զիա՞րդ տեսանէ. և թէ զի՞նչ ինչ պարտի տեսանել զի կատարելութիւն ունիցի։

Այն կենդանեաց է մաքուր ջինջ և պայծառ հեղուկնիւթ ինչ շրջապատեալ 'ի նուրբ և 'ի պայծառ թափանցիկ թաղանթից, յորոց միջի երբև կաթիլ մի լուսոյ զետեղեալ կայ առաջի բիւրեղակերպ հայելւոյ, նմանեալ փոքրիկ թեփոյ ձկան, յորում ընկալեալ զօրութեամբ արտաքին լուսոյ զամենայն ձև

և զպատկեր առարկայից՝ ներկայացուցանէ իմացականութեան միջոցաւ ոմանց ներգիս որբ ձգին յուղեղն. և կոչի բիբ ական, որ եթէ պատահմամբ հանդիպիցի սաստիկ ջերմութեան կամ ցրտութեան՝ պնդանայ, և կենդանին կորուսանէ զզօրութիւն իւր։ Եր մանապէս եթէ վիրաւորեալ անօթն՝ և պատառիցին թաղանթք, կամ հատցին նեարդքն որբ ծառայեն ինքեան, յայնժամ կամ հեղմամբ հիւթոցն և կամ խափանմամբ շաւղին՝ ընդ որ յուղեղն ընթանայ, կորնչի տեսութիւն կենդանւոյն։ Եր երբեմն և ես եթէ յեռանդանէ արեան, և կամ՝ ի շարժմանէ այլոց խանաւ հիւթոց՝ արիւն և կամ ջուր մտաներից՝ ի մէջ բբի և թաղանթից, իբրև դքող ընդ մէջ անկեալ՝ խափանէ զտեսութիւն կենդանւոյն։

Բայց այսու ամենայնիւ ոչ եթէ կենդանին է որ տեսանէ և ոչ իսկ ակն, որ է գործն տեսութեան իբրև լուսանցոյց պատուհան պալատի մարմնոյն։ Այնպէս և ոչ զաւ և պարզ կենդանական հոգին է որ տեսանէ, և ոչ իսկ լոկ մարմինն։ Բանզի հոգին գոլով աննիւթ՝ ըստ ինքեան ոչ ինչ զգալի և նիւթաւոր կարէ տեսանել. վասն զի անիւթ գոյացութեան՝ ընդ հանուր տեսողու-

թիւն մի միայն Աստուծոյ ինքեան է յատակացեալ, որոյ անհիւթ գոլով՝ ունի և կատարեալ անձնաւորութիւն։ Այսպէս և լոկ մարմինն առանց կենդանական հոգւոյ գոլով մեռեալ՝ ոչ կարէ տեսանել։ Այսպա ուրեմն տեսողն նոյն ինքն եռական անձնն է որ բազկացաւ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ. և հոգւովն բնակի 'ի պալատան մարմնոյ իւրոյ իբր տէր և իշխան նորա. և հայելով յամենեսին ընդ այս նրբանիւթ պատուհանական, տեսանէ և ճանաչէ զամենեսին. որոյ և 'ի նկատելն յայսանէ զամենայն խոկմունս և ընդ ներքին զգացմունս իւր. այսինքն եթէ բարակացեալ է կամ զիջեալ, վրդովեալ՝ կամ հանդարտ, ուրախ՝ կամ տրտում, սիրահարեալ՝ կամ խոժոռեալ. ապշեալ, թմրեալ, արբեալ, կամ զգոյշ և պատրաստ. թշնամացեալ և կամ բարեկամացեալ։ Ի մի բան՝ գրեթէ մի միայն հայեցմամբ զբոլոր խոկմունս ներքին զգացմանց իւրոյ ծանուցանէ տեսողաց ընդ այս հրաշատիպ լուսամուտ, զոր ունի 'ի բանատեղծից՝ թարգման ներքին մարդոյն անուանէ։ Լոյս արդարև ճշմարիտ թարգման, մինչ զի և գաղանք և անասունք իսկ 'ի ներկասեալ յաչս մարդկան՝ զգան և ճանաչեն զներքին զգացմունս նոցին որ առ ինքեանս։

Եւ զբեթէ առ միմեանս խսկ ունին ի փոխադարձ հայեցուածոցն Ճանաչել և զգալ զկամս և զդիտաւորութիւն իրերաց։

Եւ արդ՝ յետ համառօտաբար դիտելոյ մարդոյ, թէ զինչ է ակն, և կամ ով կամ զնարդ տեսանէ, պարտի և դիտել՝ թէ զինչ ինչ պարտ է տեսանել, որպէս ասացաւ ի վերոյ, զի զանազանիցի յանանոց և կատարելութիւն ունիցի։ Այսացաք եթէ անբան կենդանիք զայս ձիր ատուածային վայելեն միայն ի պէտս և յօգուտ մարմնաւոր կենաց իւրեանց, վասն որոյ ուր և հային և յառեն զաչն՝ ոչ այլ ինչ տեսանեն եթէ ոչ զգալի արարածս։ Իսկ մարդն գոլով ազնիւ և կատարեալ քան զամենայն կենդանիս, պարտի նաև առատապէս վայելել զայս ձիր ատուածային քան զնոսին։ Ուստի ուր ուրեք յառեսցէ զաչս իւր, բաց ի զգալի արարածոց պարտի նա և տեսանել զԱրարիչն արարածոց իբրև ի հայելւոջ. քան որում ընդհանուր արարածք ի կենցաղս մեր հայելիք Աստուծոյ են, և ի հանդերձեալն Աստուած է հայելի արարածոց, քան այնմ թէ «Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման»[1]։ Սակայն ոչ

1 Ա. Կոր. ԺԳ. 12։

ամենեքին տեսանեն, այլ միայն որք կարաց-
ցին տեսանել ատ՝ ի հայելւոջ՝ կարեն նա
և ի հանդերձեալն տեսանել դէմ յանդիմ-
ման զփառս Որդւոյն Աստուծոյ. որպէս և
խնդրեաց ի Հօրէ, թէ «Լցցիցին (հաւա-
տացեալքն իմ) մի, որպէս և մեք մի եմք...
զի տեսանիցեն զփառս իմ»[1]։ Ահա աստուա-
ծային տեսութիւն և միաւորութիւն, որոյ
յայտնութեամբն նման նմա լինելոց են ամե-
նեքին որ սիրեցին զնա, և տեսանելոց են զնա՝
որպէս և էն, ըստ սրբոյն Յովհաննու[2]։

Աւասիկ ակն առատ որ զամենայն մար-
մինն պահէ ի լուսաւորութիւն Աստուծոյ։
Իսկ որ ունի ակն չար, (որ երբեմն ի սաս-
տիկ ջերմ նկատմանէ առ մարմնականս, և ի
սաստիկ ցրտութենէ առ աստուածայինս՝
պնդացեալ կուրանայ. և երբեմն պատառ-
մամբ թաղանթիցն յոչ պայծառ և յանուսոյգ
ճանաչմանէ զԱստուած, և կամ հատմամբ
ներդիցն հաւատոյ՝ յուսոյ՝ և սիրոյ, որք առ-
ուղղեն ընթացիկ ճշմարտութեան ծառայ-
էին ինքեան, խափանէ զգնացս տեսութեան
իւրոյ առ Աստուած. և մերթ ևս եռանդ-
եամբ արեանն ամբարտաւան և փառամոլ

1 Յովհ. ԺԷ. 11. 24։ 2 Ա. Յովհ. Գ. 2։

ընչասիրութեան, և կամ՝ շարժմամբ խոնա-
հիւթոյն հեշտութեան՝ կորուսանէ զիմա-
նալի տեսութիւն իւր.) լաւ է խլել զայն և
'ի բաց արկանել, զի գայթագղեցուցիչ է
ինքեան, որ զզգալիս և եթ տեսանէ՝ զան-
ցաւորս և զապականացուս, յորս հայելով
և տպաւորելով զնոսա 'ի հայելոջ բբի ա-
կան իւրում՝ սեւեռեալ մնայ 'ի նոսին, և լինի
ինքն ևս անցաւոր և ապականացու, և կո-
րուսանելով զլոյսն էութենական՝ մնայ յո-
չընչի և յանգոյ խաւարի։ Վասնզի խաւարն
ըստ ինքեան չէ ինչ, այլ է պակասութիւն
լուսոյ. և պակասութիւն լուսոյն ածէ ըզ-
խաւար. իսկ լոյսն է ճշմարիտ գոյացութիւն։
Վասն որոյ և մարդոյ առ 'ի զերծանիլ 'ի
խաւարէ ոչընչութեան և բնակիլ 'ի լոյս
գոյութեան, պարտ է նեղբին և արտաքին
աչօք նկատել յամենայնի. արտաքնովն ըզ-
պէտս և զօգուտս արտաքին մարդոյն ճանա-
չել, իսկ նեղբնովն զպէտս և զօգուտս ներ-
քին մարդոյն ընտրել. և յամենայն իրս և
'ի գործս զազգեցութիւն և զներգործու-
թիւն Աստուծոյ իմանալ և ճանաչել։ Այս
ինքն՝ տեսանելով զմեծութիւն և զանհնու-
թիւն տիեզերքիս, զմեծութիւն և զանհնու-
թիւն Աստուծոյ 'ի միտ առնուլ։ Տեսանե-

լով զկարողութիւն և զզօրութիւն իրաց ըղ-
գալեաց, զանչափ կարողութիւն և զզօրու-
թիւն Աստուծոյ ճանաչել։ Նկատելով ի
գիւտս ճարտարահնարս մարդկային մտաց,
ի հրաշատիպ արարչագործութիւն երկնային
կամարի, ի կարգադրութիւն դրից աստե-
ղաց և յընթացս նոցին, այլ և ի կանոնաւոր
շրջանս ժամանակաց և տարեաց, և ի զար-
մանալի կերտուածս և ի կազմուածս կեն-
դանական մարմնոց՝ անկոց՝ և այլ ամենայն
էակաց, զամենամեծ և զանսահման իմաս-
տութիւն Աստուծոյ ճանաչել։ Տեսեալ զգե-
ղեցկութիւն թռչնոց, ձկանց, կենդանեաց,
բուսոց, ծաղկանց և ընդ հանուր դպրոց, զան-
չափ սէր և զբարութիւն Աստուծոյ ճանա-
չել։ Տեսանելով զվայելչութիւն անտառաց
և կանաչագեղ սաղարթախիտ թփոց, դյոր-
դահոս բղխումն կարկաչատաղ գետոց և աղ-
բերց, զքաղցրաշունչ հնչումն զուարթաբար
ղեփիւռին. զմեծվայելչութիւն Տանն Աստու-
ծոյ զմտաւ ածել, և բաղձալ ըստ մարգա-
րէին՝ բնակել ի տան Տեառն ընդ երկայն
աւուրս[1]։ Տեսեալ զբարձրաբերձ լերինս ա-
պառաժուտս և սեպացեալս, զձորս անդընդ-

1 Սղ. ԻԶ. 4։

գախտոս, զգահավիժս վախիցս, զհրաբորբոք լերինս անմատոյցս և զծծմբաբուխ տեղիս ժանտահոտս, զսարսափելի սանդարամետս գժոխոց յուշ ածել, և փախչիլ յամենայն առթիցս գահավիժելոյ ի նմին։

Տեսանելով զահեղատիպ և զքաջամենալի գէմս առիւծուց, վիշապաց, և այլ ամենայն գիշատիչ և թիւնաւոր գազան կենդանեաց, զսարսափելի բարկութիւն Աստուծոյ ի միտ ածել։ Եւ ի կերպարանս նոցին նշմարել զգէմս գիւաց մերոց ոսոխաց, որք իբրև զառիւծ և զվիշապ գոչելով շրջին և խնդրեն թէ զո՞ կլանիցեն. և ջանալ անձնապուր լինել ի ժանեաց նոցին, և ոչ վատթար քան զանասունս գտեալ՝ անկանիլ յորոգայթս նոցա. զի նոքա մինչ տեսանեն զթշնամիսն՝ ամենայն փութով պնդութեան առնուն զիւրեանս։ Տեսեալ զդազիր որդունս և զգարշելի կենդանիս խառնակերս, ջանասցուք սրբել զմեզ յամենայն աղտոյ մեղաց, զի մի ամենամաքուրն Աստուած գարշեալ ի նոցանէ՝ մերժեսցէ զմեզ ի միաւորութենէ իւրմէ։ Տեսանելով և զգառինս անմեղունս վարեալ ի սպանդ, կամաւ ընծայեսցուք զանձինս մեր կամացն Աստուծոյ, և յօժարութեամբ զոհեսցուք զիւրքս մեր աշխարհայինս

'ի սէր և 'ի հնազանդութիւն օրինաց իւրոց։ Տեսանելով զանձրև տեղեալ յերկիր 'ի ժամանակի, և զցօղ առաւօտու իջեալ յերկնից 'ի դաշտ արդասալի, որով բողբոջեալ ածեն տունկք և վերստին զուարթացեալ դալարին բոյսք թարշամեալք, հեղլով զարտասուս զղջման՝ յուստացուք յաղօրմութիւն և 'ի գթութիւն մարդասիրին Աստուծոյ, զի ցօղելով 'ի հոգի և 'ի մարմին մեր զցօղ ամենասուրբ արեան իւրոյ՝ սրբեալ մաքրեսցէ յաղտոյ մեղաց մերոց, և նորոգեալ կենդանացուսցէ զթարշամեալ և զթառամեալ հոգի և զմարմին մեր 'ի կեանսն յաւիտենականս։

Հղկակացութեամբ ուրեմն, թէ ակն մարդոյ 'ի տեսանել զամենայն զգալի արարածս՝ պարտ է իբրև 'ի հայելւոջ տեսանել նաև զամենայն իմանալիս, և ճանաչել զոյն ամենայն որք են յօգուտ և 'ի վնաս ներքին մարդոյն։ Իւ այսու տեսութեամբ կարասվարել զարտաքին և զներքին մարդն, և ըստանալ զակն առատ՝ զի ամենայն մարմին լուսաւոր եղիցի. ապա թէ ոչ՝ չար ակամբ մնայ 'ի խաւարի, զոր Տէր ինքն զթացեալ լուսաւորեսցէ։

ՅՕԳՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս լեալոց։

«Եթէ ոչ ոչ լիցի ունկամբ՝
լիցի թիկամբ». ԱՌԱՔ.։

Ունկն է գուռն մտից պատգամաբեր սուրհանդակաց քաղաքի մարմնոյն կենդանեալ։ Բանդի սովիմբ ընկալեալ իմանայ իւրաքանչիւր կենդանի զամենայն ձայնս և զպատգամս ընդհանուր էակաց, որպէս մարդն՝ նմանապէս և անասունն։

Բայց անասունն միայն զձայնս զգալիս լսէ, և զոր ինչ բնականաբար կարէ զգալ՝ զայն իմանայ. որով և կառավարէ զինքն։ Որպէս և տեսանեմք, զի մինչ լսէ զորոտումն ամպոյ՝ ամիտոփի յորջս կամ 'ի խորշս իւր առ 'ի պահպանիլ 'ի կայծականց։ Մինչ լսէ զգաձայն պղատեսակ կենդանեաց թշնամեաց տեսակի իւրոյ, փախչի և հեռանայ առ 'ի զերծանիլ յսրոգայթէ։ Մինչ լսէ զձայն ընտանի կամ համատեսակ կենդանեաց, արշաւէ առ այն առ 'ի զբօսնուլ նովաւ։ Մինչ լսէ զբաղցր հնչումն ինչ 'ի բերանոյ մարդոյ, գիմէ առ նա քծնելով։ Իսկ մինչ լսէ սպառնալի ինչ ձայն, զթիկունս դարձու-

ցեալ 'ի նմանէ անեւոյթ լինի։ Նմանապէս գառինք կորիւնք և ձագք թէ՛ անասնոց և թէ գազանաց, թէ՛ հաւուց և թէ թռչնոց, և թէ այլ ամենայն կենդանեաց, սովիմբ լուեալ զձայն մարդոյ իւրեանց՝ վազվազեն դէպ առ նոսա առ 'ի պահպանիլ և բուծանիլ 'ի նոցանէ։

Խաչ գրեթէ ամենեցուն սոցա լսողութիւն սահմանեալ է միայն առ զգալն իրս և 'ի մարմնական պէտս իւրեանց։ Իսկ լսողութիւն մարդոյ գերազոյն իմն սահմանաւ զանազանի յոյժ 'ի նոցուանց։ Քանզի մարդն 'ի միոյ ձայնէ այլ և այլ հնչմամբ բազմանալով զոդն՝ կազմէ զզանազանութիւն բառից և բարբառոյ յօդաւորեալ 'ի ձեւն բնական գործարանացն կարգելոց 'ի նոյն, որով հնչումն ձայնին նշանակեալ՝ տայ լսել ընկերին զներքսամագրեալ խորհուրդս մտաց իւրոց։ Այս և այսու զօրութեամբ լսողութեան ըմբռնեալ յոլովակերպ իմացուածս բանից՝ ստանայ զիմաստութիւն և զհանճար և զամենայն նուրբ մակացութիւնս։ 'Ի մի բան՝ հասանեալ զլսողութիւն անասնոց ընդ լսողութեան մարդոյ՝ անասունն խուլ համարի քան եթէ լսող, որպէս և համարի նա և համի։ Խաչ յայտնա-

նէ ունի մարդն նա և ճաշակ լսողութեան զանազան երգոց, նուագոց, և քաղցր եղանակաց թռչնոց, կենդանեաց և այլ ամենայն գործեանց նուագարանաց։ Այս և ճոռոմաբան ասացուածոց և ծիծաղաշարժ կատակերգութեանց, և այլ բազում ախորժալուր ձայնից և բանից, զորոց անասունք ոչ կարեն երբեք առնուլ զճաշակ։

Սակայն ոչ է մարդոյ ի սոսին կալ մնալ բաւականացեալ, և ոչ իսկ ի զգալի ձայնս և ի բանս և եթ վարել զլսելիս իւր. այլ հարկ է և իմանալի ձայնից և բանից ունկն դնել և լսել զիմանալի պատգամս ընդհանուր էակաց. որք ձայնիւ բնութեան, ըստ մեծին Ալպերտի, աղաղակեն բարձունք՝ թէ նա որ արար զմեզ՝ բարձրագոյն է քան զմեզ. գեղեցիկքն գոչեն՝ թէ նա գեղեցկագոյն է, կարողքն՝ թէ կարողագոյն, և լուսաւորքն՝ թէ նա է լոյսն համօրէն աշխարհիս, վայելչքն՝ թէ նա է վայելչութիւն արարածոց։ Մինչ բանիւ՝ ընդհանուր արարածք միաբանեալ ի ձայն բնութեան աղաղակեն անդադար, թէ «Նա արար զմեզ և ոչ մեք էաք»[1]. ըստ այնմ թէ «Նոքա դոքա լեռ-

1 Սաղ. ՂԹ. 3։

ցեն՝ քարինքդ աղաղակեսցեն »[1]։ Այս սոքա ամենեքին յաղաղակել իւրեանց՝ հանգոյն Սերովբէից և Քերովբէից գոչեն ասելով. « Լի է ամենայն երկիր փառաւք նորա »[2]։ Որք ի կողմանէ Արարչին քարոզ մեզ կարգեալք՝ իւրաքանչիւր ըստ բնական շարժման իւրոյ անընդելի ձայնիւ քարոզեն, այսինքն երկինք երկնաւորաքն աղաղակեն, թէ « Ով է որպէս տէր Աստուած մեր ի բարձունս բնակեալ, և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի »[3]։ Հաստատութիւնն երկնից լուսաւորաքն քարոզէ. « Ահա է Տէր մեր և մեծ է զօրութիւն նորա. իմաստութեան նորա ոչ գոյ բաւ »[4]։ Երկիրս երկնաւորաքն քարոզէ և ծանուցանէ. « Յամենայն երկրի են փառք քո »[5]։ Տարերքս փոփոխս յաջորդութեամբ իւրեանց ցուցանեն՝ թէ նա միայն է անփոփոխ և մշանջենական։ Տունկքն ձրմեռնային լերկութեամբ իւրեանց և դարձեալ գարնանային վերանորոգութեամբ ներշանակեն, թէ անցաւոր է աշխարհիս կեանք. և որ չիցէ չորացեալ յարմատոյն հաւատոց,

1 Ղուկ. ԺԹ. 40։
2 Այսայ. Զ. 3։
3 Սղ. ճԺԲ. 8։
4 Սղ. ճԽԶ. 8։
5 Սղ. ԺԶ. 7։

վերանորոգի՝ ի հանդերձեալ կեանսն։ Հուսկ ապա հոգմունք ընչեալ՝ ի ջրից ծագաց աշխարհիս՝ պատգամաբերք են մեզ և յորդորիչ՝ ի զգաստութիւն՝ ասելով. զոյշ լերուք և պատրաստք, զի ահա գայ նա՝ ի դատել զկենդանիս և զմեռեալս։ Վասն որոյ և մեզ պարտ և արժան է մշտաբաց ունել զուշին մեր առ ամենայն ձայնս հոգեշահ բանից, զի մի ապա՝ ի թիկունս մեր ընկալցուք զձայնին զօրութիւն գաւազանաւն երկաթեաւ։

Եւ արդ՝ զի մի առաւել երկարիցին բանք մեր, ասասցուք ասասն համառօտաբար և զայլոց պարտաւորութեանց մարդոյ՝ որ յաղագս լսելեաց. որով ընկալեալ զհոգեշահ բանս խրատուց՝ կարասցես զերծանիլ և զանազանիլ յանասնական նմանութենէ։ Նախ քան զամենայն պարտ է մարդոյ՝ ի վար արկանել զուշին իւր՝ ի լսել զպատգամն Աստուծոյ՝ ի սուրբ Գրեանց, որք են կրկնակի. այսինքն տեսական կամ բնական, և գործնական։ Տեսական կամ բնական գրեանք են ընդհանուր արարածք, որպէս ասացաւ՝ ի վերոյ՝ թէ անդադար աղաղակեն և քարոզեն մեզ զպատգամն Աստուծոյ ձայնիւ բնութեան, ըստ այնմ թէ «Երկինք պատմեն զդ

փառս Աստուծոյ և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն »[1]։

Իսկ գործնական դրեանք են հին և նոր կտակարանք աստուածային բանից, որք անստերիւր վարդապետութեամբ ուսուցանեն մեզ հաւատալ զԱստուած ճշմարիտ և զոր առաքեացն զՅիսուս Քրիստոս, ըստ այնմ թէ « Այս են յաւիտենական կեանք՝ զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս »[2]. որում հաւատալն է ճշմարտապէս վերստին ծնուիդ և կեանք յաւիտենական։ Արժան է ընդ նմին լսել և բարոյական դրեանց սուրբ վարդապետաց, որք խրատեն զմեզ խստութիւն՝ ի չարէ և առնել զբարի, խնդրել զխաղաղութիւն և երթալ զհետ նորա։ Խցել զականջս՝ ի զաղջամի և յառասպելախառն դատարկաբանութեանց և՝ ի թիւնաւոր հոգեկորոյս բանից, ՝ի գիւտհնար կարծեաց հերետիկոսաց և աղանդաւորաց, զի մի ապականեալ սրբոյ ծիցին դրունք մտից քաղաքի մարմնոյն։ Այս և խոյս տալ՝ ի լսելոյ զհեշտալուր բանս և զսխտարծարծ երգս մոլեկանս. այլ փոխանակ նոցա ունկն մատուցանել՝ ի զբօսանս

1 Սղ. ԺԹ. 1։ 2 Յովհ. ԺԷ. 3։

իսկ անձին՝ հոգևոր օրհնաբանութեանց և երդոց մեղեդեաց, որով ներքին և արտաքին մարդն բազմապատիկ զուարճութեամբ ցընծացեալ բերկրի և անարատական հոգւով միխթարի, զորոց չկարեն զուգակշիռն շնորհել մարդոյ սփոփանս աշխարհային երգք նուագաց, այլ յաւէտ ստրջանս ածեն մարդոյ ընդ կորուստ ժամանակին։

Հուսկ ուրեմն պարտէ մարդոյ ամենայն յօժարութեամբ 'ի պատրաստի ունել զլսելիս իւր, զի կարիցէ լու 'ի լու լսել զձայնն երանական, թէ «Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւն 'ի սկզբանէ աշխարհի»[1]։ Որ մեծի երջանկութեան մարդոյ, որ գոլով լաստեղծեալ 'ի կաւոյ՝ թագաւորեսցէ ընդ Աստուծոյ յաւիտեանս յաւիտենից։ Եւ այսմ երանութեան լինել արժանաւոր՝ ոչ եթէ դժուարութեամբ լինէ, այլ միայն հաւատով, յուսով և սիրով, այսինքն սիրելով զԱստուած և զընկերն իւր՝ բարիս առնելով նմա, որով ստս մնայ անձն իւր 'ի հանդիստեան և 'ի հանդերձեալն ընդ Աստուծոյ թագաւորել, ոչ ինչ կորուսանելով յամե-

1 Մատթ. ԻԵ. 34։

նայնէ զոր ուներն. քանզի զոր բաշխեացն ընկերաց իւրոց կարօտելոց՝ ընկալցի բաղմապատիկ յառատաբաշխ աջոյն Աստուծոյ 'ի տրիտուր. և արժանի եղիցի լսել զձայն Հօր երկնաւորի առ ծառայն իւր հաւատարիմ, թէ "Մուտ յուրախութիւն Տեառն քո"[1]:

Իսկ որ հակեալ իցէ անասնաբար 'ի մարմին իւր և յաշխարհ, և յամառեալ խնդրոյս զկանչս իւր որպէս լժի և քարբի, զի մի լուիցէ զձայն թոչի ճարտարի, և մի առցէ դեղ 'ի դեղատուէ՝ իմաստնոյ. յայնմ աւուր մեծի դարձուցեալ զերեսս իւր յանաչառ դիմաց դատաւորին՝ լուիցէ թիկամբն իւրով, թէ "Երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա"[2]: Յորմէ Տէր փրկեալ ազատեսցէ:

1 Մատթ. Իե. 23: 2 Մատթ. Իե. 41:

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԲՈՐԴ

Յաղագս հոգոց էամ ոնդից։

"Եւ հոգի սատուածելոյն ևգ
յանգուանեցաս ո. ՅՈՒ. ԻԷ. Ն.
"Զհետ հոգոյ իւրոց քոյ ընթացարք մեք ո. ԵՐԳ. Ա. Ն.

ՊՈՆԴՈՒՆՔ կոչի մինն 'ի հնգից զգայարանաց, որ է գործի շնչառութեան և հոտառութեան ընդհանուր կենդանեաց առհասարակ։ Բանզի ամենայն մարմնաւոր կենդանի այսու գործեաւ առնու զշունչ, (թէ և բերանովն ևս, բայց ոչ այնքան դիւրաւ,) որով ճաշակելով զոդն ապրի ըստ մարմնոյ։ Այնպէս սովաւ զգայ զհոտ ամենայն իրաց հարկաւորաց և ոչ հարկաւորաց. և այսու ընտրէ զախորժակն բնութեան իւրոյ և կամ զուրկ լինելն անտի։ Այս և այսու զանազանէ զնեխեալն և զանարատն, զապականեալն և զմաքուրն, զօգտաւէտն և զվնասակարն։ Ի վերջէ սովին ճանաչէ զզօրութիւնս դեղոց բեմից, զանազան ծաղկանց, խոտոց, պտղոց և այլ ամենայն 'ի պէտս անձին գործածելի և օծանելի իւղոց, զմանայ, խնկեղինաց, սուաշխից, բալասանից, և այլն։ Այս և սմանք

'ի կենդանեաց ճանաչէն հոտառութեամբ զբարեկամս և զթշնամիս ասան տեսուն իւրեանց, որպէս է շունն։ Իսկ զարթուցանէն սովաւ զիշատչութիւնն իւրեանց, և սմանք սովիմբ գտանեն զճանապարհն, և այլք բազմամբ յոլով օգուտս հայթայթեն ինքեանց զօրութեամբ հոտառութեանն։ Այն և կենդանիք որք 'ի կարի հեռաստանէ զդան ըզհոտս։ Այս սոյն հոտառութիւն այնչափ ազդու է յոմանս 'ի կենդանեաց, մինչ զի գերազանցեն յոյժ քան զմարդիկ 'ի ճանաչել և 'ի զանազանել զիր ինչ յայլմէ։ Այս թէպէտ մարդն իսկ հոտառութեամբն ճանաչէ և որոշումն դնէ ընդ մին և ընդ միւսն, որպէս խատեակ 'ի պատմութեանց Եսաւայ առնոյր զհոտ Եսաւայ՝ մինչ զդեցեալ ունէր զոյնս Յակոբ, բայց ոչ այնչափ ազդեցութեամբ՝ որչափ առ անասունս է տեսանել։ Բանզի կամեցաւ Աստուած զի մարդն յաւէտ բանականութեամբն ընտրեսցէ և ծանիցէ զամենայն ինչ՝ քան եթէ զդայարանօք։ Իսկ և անասունք թէպէտ առաւելեալ գտանին քան զմարդիկ այսու զդայութեամբ, բայց և այնպէս սահմանեալ է և 'ի նոսա. զի որքան պարգևեալ ունին 'ի բնութենէ՝ այնքան և եթ զդան։ Իսկ մարդոյն հոտառու-

թիւն գրեթէ յանսահմանս տարածի. քանզի զբնութիւն և զզօրութիւն ընդհանուր իւրաց մի միայն հոտառութեամբ կարէ իմանալ. եթէ զդայն ընդ ի ոչոզականութեան իւրում։ Քանզի անհնութիւն և անսահմանութիւն իմացականութեան մարդոյն է պատճառ՝ որով միաք իւր զբաղեալ տարածեալ և ցրուեալ գոլով ի բազմապատիկ իրս և ի գործս, ոչ կարէ զամենայն ճանաչմունս իւր ունել միշտ ի պատրաստի ի յիշողութեան իւրում։

Մարդն կարէ ճանաչել նա և զաղդեցութիւնս և զաստիճանս դեղերէից և կերակրոցն եփելոց և այլ ամենայն իրաց։ Այս և կարէ հոտառութեամբն դատել զհաստութիւնէ կամ զփափկութենէ պաղոց և այլն, զոր անասունք չունին կատարելապէս. զի ոչ եթէ դատելով զդան, այլ ըստ ազդման բնութեան իւրեանց. մանաւանդ զի բնակաւնաբար էացեալ իրաց զդան միայն զհոտ։ Իսկ մարդն նա և զբաղկացեալ և կամ իւղեփեցական արուեստիւ ի բազում մասունս բաժանեալ՝ իմա ի ջուր, յաղ, յիւղ և ի փոշի դարձեալ իրաց զզօրութիւնս կարէ ճանաչել և իմանալ. և թէ յիրպիսի և կամ մինչ իրաց բաժանեալք և կամ բաղկացեալք

իսկեն այնք։ Յայտ իսկ է ուրեմն թէ մարդն այսու զգայարանաւ եւս գերազանցէ յայժ զանասնովքն։

Սակայն ոչ է բաւական մարդոյ մնալ ի սոսին, այլ պարտ է գիտել նա եւ զգաղտնի զօրութիւնս եւ զազդեցութիւնս հոտոց, որք ազդեն մինչև ոգեղենաց իսկ։ Վասնզի տես ի գիտնոց՝ թէ հոտն է իբր կերակուր ոգեղենաց. յորոց ոմանք սխորժելով ի հոտ ինչ առքարշեալ ժողովին, եւ ոմանք տհաճեալ տարամերժին եւ հալածին։ Մինչ զի եւ հրեշտակաց իսկ հաճելի գոլ ասեն զանազան բուրմունք անուշահոտ ծխանելեաց. ըստ որում ընդհանուր ոգեղէնք, ասեն, գոլով հրայինք, նմանապէս եւ հոտք ամենայն իրաց գոլով հրային զօրութիւնք եւ մասունք նոցա, ունին պատշաճաւորութիւն եւ համակրութիւն ընդ միմեանս։ Ուստի եւ ի հնումն մինչ հրեշտակք բերէին զպատգամս Աստուծոյ միջնորդութեամբ տապանակի ուխտին ժողովրդեանն Իսրայէլի ի խորանին վկայութեան՝ կամ ի տաճարին Սողոմոնեան, առանց անուշահոտ ծխանելեաց ոչ կարէր քահանայապետն մտանել ի ներքս վարագուրին, ուր զտիւ եւ զգիշեր հանապազ խունկս արկանէին։ Այսն որոյ եւ Հրէայք

գկնի բարձման տապանակին և կործանման տաճարին՝ մինչև ցայսօր ոչ ուրեք համարձակին խունկս մատուցանել ի սոյն գիտաւորութիւն, որպէս և երբեմն ի գերութեան իւրեանց ի Բաբելոն՝ ասէին երեք մանկունքն ի հնոցին. «Ո՛չ ողջակէզք պատարագաց և ոչ խունկք օրհնաց»[1]։ Որ և ի Սեֆերօթ կոչեցեալ ոգեղինական գիտութեան իւրեանց ունին յատկացուցեալ զանազան ծրխանելիս վասն զանազան ասոմիճանի ոգեղենաց։ Եւ հրեշտակապետն Ռափայէլ ելերգիւ ձկանն ծխելոյ հալածեաց զդևն ի Սառայէ կնոջ Տուբիայ[2]։ Եմանապէս և մոգք ի ձեռն զանազան ծխանելեաց բազում զարմանալիս գործեն, զորս ոչ ի դէպ համարիմ անցուցանել ասէն ի գրի։ Այլ զայս ամենայն վասն այնորիկ գրեցաք՝ զի յայտնի լիցի թէ քանի՞ դաղտնի զօրութիւնք իցեն ի հոտս և ի հոտառութիւնս մարմնաւոր և զդալի իրաց։

Այդ՝ եթէ զդալի և մարմնաւոր իրաց հոտք և հոտառութիւնք այսչափ զօրութիւնս և ներգործութիւնս ունին, ապա հոգևոր և իմանալի բուրմունք անուշից քանի՞

1 Դան. Գ. 38։ 2 Տոբ. Ը. 2։

առաւել ազգաւ և օգտակար ներգործութիւնս ունիցին, որք ոչ թէ զոգեղէնս և կամ զհրեշտակս առքարշեն ի հոտոտութիւն, այլ զնոսն ինքն զԱստուած. որպէս և ուստեղանէ սուրբ Գիրն, թէ հոտոտեաբ Աստուած ի պատարագս Աբելի, Սեթայ, Նոյի, Աբրահամու, Մովսէսի, Եղիայի, և ամենայն ընտրելոց և սրբոց արանց. որ է իմանալի և հոգեւոր հոտառութիւն, այսինքն հաճութիւն և ընդունելութիւն Աստուծոյ։ Վասն որոյ և Դաւիթ աղաչէր. "Լուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր. համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի"[1]. այսինքն հաճոյ և ընդունելի եղիցին։

Նմանապէս և հոտք անուշից կոչին ըստ մեռանող սէր սրբոց մարտիրոսաց, որք սիրով Աստուծոյ վառեալք զանձինս իւրեանց՝ բազմապատիկ տանջանաբք ի զոհ ընծայեցին. որոյ վասն և ասէր սրբազան Առաքեալն, թէ "Հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած"[2]։ Այլ ուրեմն և սէր Աստուծոյ առ մարդիկ քանի՞ գերազանց անուշահոտութիւն իցէ, նմանապէս և կենդանաւոր բանք նորին. զորս մարմնապէս ոչ կարելով մեր ընդունել զնո-

1 Սղմ. ՃԽ. 2։ 2 Բ. Կորն. Բ. 15։

սա, անձառելի մարդասիրութեամբ իւրով գթացեալ պարգևեաց մեզ հոգի աստուածային, զի կարասցուք գոնէ նոքաւ ընկալնուլ զայս աստուածային անուշահոտութիւն. որպէս և պարծանքն Աստուծոյ Եբրայեցի աստուածախօսն Յովհ. վկայէ ասելով, թէ «Յիս հոգի աստուածեղէն (եդ) յանգուցեալ նորա», այսինքն մարդոյն։ Բանզի թէպէտ բուրումն աստուածային սիրոյ առ ամենայն արարածս սփռեալ գտանի, սակայն գիտէ Աստուած զի հոսան ընդ ունգունս անցանէ, և ըստ ընդունակութեան իւրաքանչիւր կենդանեացն ունգոյ է և ներգործութիւնն։ Յիս ըստ որում ունգունք անանոյց գոլով մարմնաւորք՝ միայն զմարմնաւոր աղդեցութիւնս կարեն ստանալ, վասն որոյ և յանգունս մարդոյ եդ Աստուած նաև զհոգի աստուածեղէն, զի զհոգևորն և զաստուածայինն ևս կարիցեն ընկալնուլ, ըստ օրինակի ջուրց՝ որք ընդ երակս երկրի անցեալ՝ զնոցին ստանան զօրութիւն և ներգործութիւն։

Որեւեմն ոչ է պարտ մարդոյ զբաղեալ մնալ 'ի մարմնաւոր հոտս հեշտացուցիչս և օգտակարս միայն մարմնոյ լոկոյ. այլ որոնել և ընդունիլ նաև զհոտ բուրման աստուա-

ծային սիրոյ՝ հոգւովն աստուածեղէն զոր ընկալեալ ունի յանդունս իւր. և նովին աշնուշահոտ իւղով օծանէլ զի մի ախտացեալ զախտս մեղաց՝ մեռցի զմահ յաւիտենական։ Վասն որոյ և Սողոմոն յորդորէ զմեզ ասելով. «Ո՛հետ հոտոյ իւղոց քոց ընթացուք մեք»։ Լոյս հոտ իւղոյն Աստուծոյ է նոյն ինքն Աստուած՝ Բան՝ և սէր իւր, զոր Սողոմոն Իւղ թափեալ անուանեաց Յերգս երգոց իւրոց։ Իսկ սրբազան առաքեալն Յովհաննէս սէր կոչեաց զԱստուած՝ ասելով. «Աստուած սէր է, և որ կայ 'ի սէրն՝ բնակեալ է Աստուած. և Աստուած 'ի նմա բնակէ»[1]. այսինքն օծանի հոգեկան սիրովն Աստուծոյ և կոչի օծեալ Ցեառն, ըստ այնմ թէ «Լոյս գուք օծութիւն ունիք առ 'ի սրբոյն»[2]. այսինքն Աստուծոյ և 'ի սիրոյ նորա։ Լոյս այսու հոգեկան բալասանի օծութեամբն ծնայք վերըստին ըստ հոգւոյ 'ի կեանս յաւիտենական, և ոչ ևս տեսջիք զապականութիւն ըստ օրինակի մարմնոյ օծելոյ ազնիւ բալասանիւք։

Արդ՝ որովհետև կարէ մարդն ընդունել և զբուրումն աստուածային հոգւոյն,

1 Ա. Յովհ. Դ. 16։ 2 Ա. Յովհ. Բ. 20։

պարտ է ընդ նմին հետևել ազգեցութեան և ներգործութեան հոգւոյն, որոյ պտուղքն այսինքն ներգործութիւնք ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ սէր, հեզութիւն, խնդութիւն, խաղաղութիւն և բարութիւն, որք են ճշմարիտ իւղք անուշահոտք տարգելիչ կենաց և առաջնութեան հոգւոյ և մարմնոյ։ Լուսոյ և առաքեալն Պօղոս ոչ որպէս Յաղոմն այլաբանօրէն խօսի, այլ յայտնապէս պատուիրէ մեզ երթալ զհետ սիրոյ և խաղաղութեան։ Վանդի ամենայն կատարելութիւնք սիրով լինին ասէ, և առանց նորա եթէ ոք զլեզուս հրեշտակաց խօսիցի և զմարմին իւր դիցէ յայրումն, ոչ ինչ օգտէ [1]։ Բայց որում՝ և Փրկիչն մեր վճռեաց ասելով. «Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան. Ի սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և զընկերն քո իբրև զանձն քո» [2]։ Եվ զարմանալի շարակցութեանս. զի զերիան ի մի համակարգեալ թուէ, այսինքն զԱստուած, զընկերն և զանձն. ապա ուրեմն թուի թէ առքս երեքին առ ինչուենակք են միանգամ։ Լուսոյ և սրբազան առաքեալն Յովհաննէս ասէ,

1 Ա. Կրդ. ԺԳ. 1։ 2 Մատթ. ԻԲ. 37։

«ՅԹէ որ ասիցէ եթէ սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն ետես՝ զիա՞րդ կարիցէ սիրել... զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր»[1]։ Բանզի եղբայր մեր գոլով իբրև զմեզ մարդ, է պատկեր Աստուծոյ. և ո՞ համարձակիցի անարգել և արհամարհել զդեղովք նկարեալ կամ դքանդակեալ պատկեր Թագաւորին. զի թէ և ի կարևոր նախարարաց ոք իցէ և ի սիրելեաց Թագաւորին, ո՞չ ապաքէն անխուսափելի կայ ի դատապարտութենէ մահու։ Այսպէս մեք զիա՞րդ համարձակիմք ատել կամ անդոսնել զեղբայր մեր՝ որ է պատկեր Աստուծոյ, ո՛չ դեղովք նկարեալ և ոչ գրչաւ քանդակեալ, այլ բանիւ հոգւով և կենդանութեամբ. նա և օթարան և տաճար է Աստուծոյ. մանաւանդ զի նոյն ինքն Աստուած հաճեցաւ ընդունել զերևելի կերպարան մեր։ և եղև իբրև զմեզ մարդ կատարեալ, և անուանեցաւ մեզ եղբայր և ընկեր։ Ի՞նչ համն յանդոսնել մեր զեղբայր մեր՝ զնա անդոսնեմք, որպէս և ասաց, թէ «Որ զձեզ անարդէ՝ զիս անարդէ»[2]։ Այլ թէ՝

1 Ա. Յովհ. Դ. 20։ 2 Ղուկ. Ժ. 16։

«Որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, և կամ ասիցէ յիմար կամ մարու, պարտաւոր լիցի ի գեհենն հրոյն»[1]։ Աւրեմն հարկադրեալ եմք սիրել՝ յարգել և օգնել ամենայն կերպիւ, եթէ կամիմք անուանիլ քրիստոնեայք։ Այսն որոյ և Փրկիչն մեր ի կտակի իւրում տայ նշան հաւատացելոց ըզսէրն՝ ասելով. «Յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս»[2]։ Քանզի օծեալք գոլով իւղովն սիրոյ՝ ճանաչէք զմիմեանս և ճանաչիք յամենեցուն բուրմամբ նորին։ Ով ըսքանչելի անուշահոտութիւն, որ զհոտ Աստուծոյ բուրէ յինքեանէ. և երանի որ ունիցի զսոյն յանդուն իւր, զի յայնժամ ի բաց մերժեալ զերկիւղն՝ անպատկառ ներկայանայ առաջի Աստուծոյ, որում արժանի լիցուք ամենեքեանքս. ամէն։

1 Մատթ. Ե. 22։ 2 Յովհ. ԺԳ. 35։

ՅՕԴՈՒԱԾ ՀՈՐՐՈՐԴ

Յաղագս գործոց և ճաշակիցն։

" Որպէս զի քաղցր են ի քիմս իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ ». ՍԱՂՄ. ՃԺԸ. 103.
" Ճաշակեցէք և տեսէք , զի քաղցր է Տէր ». ՍԱՂՄ. ԼԴ. 9.

ԲՈՒՄՔՆ է գործի համոյ և ճաշակի կենդանեաց առ հասարակ , ըստ որում առնասնոյն՝ նոյն՝ և մարդոյն . որով զանազանէ զհամեղն և զանհամն , զքաղցրն և զդառն , զթթուն և զլեղին , զանոյշն և զյոտին կամ զոտիսն , զախորժելին և զանախորժն քմոյ իւրոյ ։ Այլ այսու առեալ զճաշակ՝ գտանէ զախորժն ի կերլիս , զորս ուտելով բուծէ զմարմին իւր , և ածէ ի հասակ ։ Այլոյ քիմք անասնոյ մի միայն զհամն և զճաշակս զդալն և մարմնական կերակրոյ զգան , իսկ մարդոյն պարտի և զիմանալի կերակրոյ հոգւոյն առնուլ զճաշակ . զորմէ ասասցուք ի ստորև համառօտակի ։

Այնմանայն կենդանի որպէս ասասցաք՝ այսու գործեաւ առնու զճաշակ ուտելեաց և ըմպելեաց , և այսու ընտրէ զախորժն բնու-

թեան իւրոյ. որպէս և անասունքն զխոտեղինաց, գազանք զդիշոց, թռչունք զնդեղեղնաց, նոյնպէս և այլ կենդանիք ըստ ազգի իւրեանց և ըստ պահանջելոյ բնութեանն։ Թէպէտ գտանին և գազանք որք ոչ բնաւ կարեն զանջարեղէնս առնուլ 'ի բերան, և են որք ուտեն ախորժանօք, և ոմանք խակ մերթ ընդ մերթ ըստ ազդելոյ բնութեանն՝ 'ի գարման ցաւոց իւրեանց որոնեալ խոտ ինչ՝ ճարակին։ Դմանապէս գան և անասունք որք սովորութեամբ ուտեն նա և զմսեղէնս։ Բայց սոքա ամենեքին յատուկ իմն համարին և ոչ հասարակ ինչ յազգս իւրեանց. քանզի ընդհանրապէս գազանք մսեղինօք և անասունք բուսով բուծանին, և երկոքին ազգք 'ի սկզբանն կամաւք սնանին։ Գտանին և 'ի թռչունս որք մսակերք են և 'ի համարս գազանաց դասին, և են որք միայն ընդեղինօք կերակրին և սուրբ կոչին։ Այսպէս և անասունց ոմանք խոտաճարակ են և սուրբ կոչին, և ոմանք թէ և խոտովք սնանին՝ այլ պիղծ համարին. որպէս և 'ի մէջ հաւուց և թռչնոց խակ է տեսանել։ Եւ այս ամենայն ոչ առանց պատճառի, զոր 'ի ստորև համառօտաբար դրեսցուք ըստ կարի իմացուածոյ մերոյ։

Իսկ մարդն է միայն ի սեռ ի կենդանեաց որ ընդհանրապէս ամենայն իրօք կերակրի, և ոչ ինչ է նմա անուտելի։ Այսն զի Աստուած ի նախնումն թէպէտ զմրգեղէնս, զընդեղէնս և զամենայն օգտաւէտ բանջարեղէնս միայն ետ մարդոյ ի կերակուր, բայց յերկրորդումն առ Նոյեա՝ նա և զամենայն չորքոտանիս և առհասարակ զամենայն անասունս, զթռչունս և զձկունս հրամայեաց նմա ուտել ըստ ախորժելոյ բնութեան նորա։ Բանզի յառաջնումն պատուիրեաց չուտել զի մի մեռանիցի. բայց մարդն ոչ անսայցեալ հրամանին՝ եկեր, ոչ կարելով յաղթել անկարգ ըղձից իւրոց. վասն որոյ և յերկրորդումն թոյլ ետ նմա ուտել որպէս անոգջանալի հիւանդի։ Իսկ ապա բժշկին հոգւոյ նորն Ադամ՝ ըստ ախորժանաց զուտելն և զըմպելն կարգեաց նմա առ ի դեղ հոգւոյն՝ ասելով, առէք կերէք և արբէք զմարմին և զարիւն իմ։ Բայց որ յամառեալ ի կամս իւր ոչ կամիցի ուտել ի բժշկութիւն անձին իւրոյ, զանգիւտ կորուստն ժառանգեսցէ. և մեք դարձցուք ի բնաբան մեր։

Եւ այսպէս ամենայն շարժուն և մարմնաւոր կենդանի ունի հարկաւոր կարօտութիւն կերակրոյ, որով կեայ և աճի և զար-

գանայ։ Բանզի ամենայն մարմին կենդա-
նեաց կերակրովք աճէ, և գրեա թէ նոյն
իսկ կերակուրքն անդրադարձին ի մարմին
կենդանեաց։ Եւ յայտ իսկ է՝ զի մարմին կեն-
դանեաց ի կարի փոքրագոյն նիւթոյ սեր-
մանց գոյանան, մինչ առ ոչինչ համարիլ.
որք և զկնի յղանալոյ՝ մինչ ընդուներն զկեն-
դանական շարժումն յարգանդի անդ, ան-
դէն ի նմին կիսէ սկսանին և կերակրիլ, և
նովիմբ աճիլ և կազմիլ մարմին մարդոյ կամ
անասնոց ըստ տեսակի և ըստ արգանդի իւ-
րեանց։ Բանզի ամենայն արգանդք եգ կեն-
դանեաց ունին յարմար և բաւական նիւթ
կերակրոյ ի պէտս յղացեալ ձագուց իւր-
եանց։ Այսպէս և ձու թռչնոց՝ որ է արգ-
անդ նոցա, ունի յինքեան պարունակեալ
բաւական նիւթս առ ի աճումն մարմնոյ
ձագուցն յինքեանս գոյացելոց։ Եւ յետ
ծննդեան անդէն է զի կոթամբ և է զի ընդ
գեղինքս, և կէսք բուսովք, որդամբք և մը-
սեղինքս բուծանին մինչև յաճումն հասակի
իւրեանց ըստ ազգի. և յետ այնորիկ ճա-
բակ և սնունդ նոցին օգտէ ի պահպանու-
թիւն տեսակի իւրեանց մատակարարելով
այնու զսերմն կենդանական, մինչև ըստ ըն-
թացից բնութեանն հասանին ի ծերու-

թիւն և 'ի մահ։

Այսպէս ուրեմն ամենայն կենդանիք բնականաբար կարօտք են կերակրոյ, որով և եթ աճէ մարմին նոցա և զօրանայ։ Այսն որոյ և ամենառատն Աստուած ոչ ինայեաց տալ իւրաքանչիւր տեսակի զկարիս որ կերակուրն ըստ ախորժանաց բնութեանց նոցա, ըստ այնմ, «Դնա նաս զձեռն քո, կերակրես զամենեսեան քաղցրութեամբ կամաց քովք»[1]։ Որ և անհուն իմաստութեամբ և բարութեամբ իւրով կազմեալ հաստատեաց զգործս քմաց՝ որով զգան և ճանաչեն զախորժելին բնութեան իւրեանց, և ըստ այնմ առնուն զկերակուր։ Այլ որչափ և կենաց և գոյութեան մարմնոյ կենդանեաց իցէ պատճառ կերակուրն, նոյնչափ և առիթ մահու և ապականութեան նոցին գտանեմք զնոյն լեալ։ Վասնզի ապականացու մասունք ուտելի իրաց մտեալ յաւելիւն կենդանւոյն՝ թանձրացուցանեն զնրբութիւն նորա. և այն թանձրութիւն սբեան հատեալ յապականութիւն բնական՝ առ սակաւ սակաւ թողու զվատթար հիւթս 'ի մէջ ներքագոյն երակաց ընդ որ անցանէ արիւնն. զորոց զչրջանն խափանեալ

1 Աղ. ճԽԴ. 16։

Ի նուրբ երակն՝ ախտացուցեալ տկարա-
ցուցանէ զմարմինն. ուստի և զանազան
ցաւք և հիւանդութիւնք՝ ոչ պատահմամբ
այլ բնականաբար պատճառեն մարմնոյն։
Եւ յառաւել թանձրութենէ արեան կամ
սառականայ և կամ թուլանայ բնական ջեր-
մութիւն նորա, որ արծարծեալ շարժէ ըզ-
կենդանութիւն մարմնոյն։ Եւ այսպէս սկը-
սանի պակասիլ զօրութիւն ջերմութեան.
և ի պակասիլ նորին ի վերայ հասանէ առ-
սակաւ սակաւ ցրտութիւն, որով և միւս
միջակ երակքն սկսանին նուազիլ. ջիւք կամ
նեարդք թուլանան, և հերայն սպիտակա-
ցեալ ի ծերութիւն խոնարհի։ Եւ և ա-
պականեալ և թանձրացեալ արիւնն՝ ոչ կա-
րէ կատարել զշրջան իւր, և հարկաւ ի վե-
րայ հասանէ մահն։

Եւ այս արագ ապականութիւն արեան
յառաջ գայ յանյագ ուտելոյ և ի բազմա-
տեսակ ճարպալից կերակրոց. որպէս փորձն
ինքնին ուսուցանէ։ Զի կենդանին սակա-
ւակեր՝ որ միատեսակ մաքուր և ոչ դիւրա-
տպականելի իրաք կերակրի, առաւել առ-
ողջ է և երկարակեաց քան զայն՝ որ խառ-
նակ և դիւրատպականելի իրաք ճարակի։
Որոյ օրինակ ունիմք զոճն և զայլ բազում

կենդանիս. նա և զմարդիկ՝ որք որչափ և ժուժկալ իցեն և չափաւոր ի կերակուրս, այնչափ առողջ են և երկարակեացք։

Իւր արդարև եթէ էր հնար մարդոյ առնապական իրօք կերակրիլ, կարելի էր նմա անմահութեան հասանել. որպէս և հաւատամք թէ նախահայրն մեր Ադամ ի դրախտի անդ փափկութեան անապական պտղովք ծառոյն կերակրեալ՝ ունէր զանմահութիւն. իսկ ի կորուսանելն զնա՝ անկաւ ի ներքոյ մահուան բնականաբար։ Բանզի անէծքն Աստուծոյ, թէ «Հող էիր և ի հող դարձցիս»[1], զբկեաց զնա յանապական կերակրոյ. և հրեշտակն սրով շուրջանակի պաշարեցաւ ճանապարհ ծառոյն կենաց ի սրովբէից, զի մի ձգեալ մարդոյն զձեռն՝ կերիցէ և կեցցէ յաւիտեան մարմնով, (և ոչ թէ հոգւով,) զի կատարեսցի հրաման իւր։ Այս և բաց ի կերակրոց է և այլ իմն պատճառ կարձելոյ կենաց մարդոյ, զոր ի կարգի բանիցս որ յառաջիկայդ՝ գտցես ի կարճոյ ասացեալ, զի ատա խօսիմք միայն զկերակուրս և զներգործութեանց նոցին։

Ուրեմն մարդն գոյով բանական և ապ-

1 Ծնն. Գ. 19։

նուազագոյն խմացականութեամբ զարդարեալ՝ ոչ է պարտ իբրև զմիւս անբան կենդանիս վերիպեալ ի ճաշակս համոյ՝ անխտրաբար զեղեալ ի կերակուրս։ Քանզի կարէ մարդն քննել և խմանալ զամենայն գազանի զօրութիւնս և զնեբգործութիւնս համայն ուսելեաց, բազմապատիկ առաւել քան զանբան կենդանիս. բայց որում՝ նոքա ոչ կարեն զգալ եթէ գոյութիւն մարմնոյ իւրեանց ի կերակրոց յառաջ գայ և սնանի. և թէ յորոց միանգամ ստանայ զսնուանդ և զգոյութիւն, զնոցին բնութեանցն իսկ ստանայ ըղհաղորդութիւն և զհամակրութիւն։ Քանզի յայտ իսկ են զի ոմանք ի կերակրոց բաթացուցանեն զմիտս մարդոյ, և ոմանք նրբացուցանեն. ոմանք շարժեն զցանկականն, և ոմանք պատճառեն զոգեխոհութիւն։ Ոմանք զ ազանաբարոյս առնեն, և ոմանք մեղմացուցանեն զբարս. ոմանք մեղկացուցանեն և ոմանք արիացուցանեն. ոմանք թուլացուցանեն և ոմանք զօրացուցանեն։ Ոմանք խելացնորս առնեն և ոմանք պայծառացուցանեն զխմացականութիւնն. ոմանք առաջս կապեն զմարմինն, և ոմանք ախտս յուզեն յանդամս. և այլք այլ և այլ զօրութիւնս կրեն, որոց վասն ուրոյն ուրոյն օրինակս ի մէջ բերել

յերեւելի գրեանց մեծամեծ հեղինակաց՝ ձանձրութիւն յոյժ լինէր ընթերցողաց, վասն որոյ թողուաք ինքեանց խմբատասիրել։ Ոչ ի զայս ամենայն մարդոյ և եթէ ճանաչել, իսկ անբան կենդանեաց ոչ երբէք. և զսակաւն ևս զոր զդան՝ ըստ չափու ընդունակութեան իւրեանց զդան ազդմամբ բնութեանն և ոչ գաւառութեամբ։ Այսն որոյ և Մովսէս յորժամ կամեցաւ կրթել և ի բարւոք բարս և յառաքինի վարս ածել զխրատեալսցիս, ետես զի օրէնք բնութեան միայն էին ի ձեռս իւր, և ոչ սրպէս Քրիստոսի՝ շնորհքն. ուստի և յետ ի բաց մերժելոյ զամենայն գազան կենդանիս, թէ ի չորքոտանեաց և թէ ի թռչնոց և ի ձկանց, որոշեաց նա և զամենայն սուրբ և զանսուրբ կենդանիս։ Սուրբ՝ այսինքն մաքուր կոչեաց[1] զնոսա՝ որք զկնճղակս ոսկրն հերձեալս և ուրոճս միանգամայն ունէին ի բերանի, որոց ի բարս ոչ ինչ վնասակարութիւն էր. իսկ սիղձ կոչեաց զայնոսիկ, որք զմին և եթ ունէին, որոց էր չարութիւն ի բնութիւնս. որպէս խաղին բղջախոհութիւն և որկրամոլութիւն, ըղտուն սխակալութիւն և

1 Բ. Օրէն. ԺԴ. 7, 8։

բինամենդրութիւն, ձիրքն վարաշտութիւն և նախանձ, իշխն ծուլութիւն և բթամտութիւն, և այլն։ Այնպէս և ի լուղակաց և ընտրեաց զայնոսիկ, որք թեւաւորք և թեփամորթք էին, և կոչեաց զնոսա սուրբս՝ վասն անախտակիր ազդեցութեանց նոցին։

Եւ այսպէս արգել ժողովրդեանն խորհրդելի ուտել զկենդանիս գրգռիչս վատթար բարուց և արծարծիչս ախտից, զի գոնէ բնականաբար ածցէ զնոսա յուղղութիւն և ի մտերմութիւն յաստուածային, իբրև զաղաւնին շիւղաբեր՝ և ոչ զօրէն ագռաւու ի գիշակերութիւն զառաջելոյ։ Այսպա թէ ոչ՝ զի՞ փոյթ էր Աստուծոյ հրամայել զմին ուտել և զմիւսն արգիլել։ Վասնզի օրհնեաց Աստուած զամենայն արարածս յատեղծանել իւրաւմ, վկայելով թէ բարի են և յոյժ բարի։ Վասն սրոյ և Փրկիչն մեր՝ որ տէրն է շնորհաց, ասէ, եթէ կերակուր ոչ պղծէ զմարդ ըստ հոգւոյ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ հայհոյութիւնք զկարողութիւնէն Աստուծոյ և զբանիցն վարդապետութեան նորա, և այլ ամենայն չարութիւն որ ի սրտէ յառաջ գան, այնոքիկ պղծեն զմարդ [1]։

1 Մարկ. է. 15։

Ղեսատի և սրբազան առաքեալն Պօղոս ասէ վասն կերակրոց, թէ «Ամենայն ինչ սուրբ է սրբոց»[1]. որպէս և ձայնն երկնաւոր գոչեաց առ սրբազան առաքեալն Պետրոս, թէ «Արի՝ զեն և կեր». և թէ «Զոր Աստուած սրբեաց՝ դու մի պղծեր»[2]։

Այս՝ թէպէտ կերակուր ոչ պղծէ զոմարդ, և զոր միանգամ օրհնեաց Աստուած և սրբեաց՝ սուրբ է, և ոչ ևս կարէ պղծիլ, սակայն գերբնականաբար պարտ է իմանալ զսոյն և ոչ բնականաբար։ Զի թէպէտ և օրհնեալ է, բայց զաղգեցութիւն և զներգործութիւն իւր ոչ է կորուսեալ։ Այսուամենայն մարդ որ ոչ է սուրբ, և չէ ժամանեալ յայն աստիճան շնորհաց՝ որով կարիցէ մաքրիլ և աղատ մնալ 'ի ներգործութենանց և յազդեցութենանց նոցին, չէ պարտ նմա վստահիլ յանձն իւր և անխորհրդաբար ուտել զոր ինչ միանգամ անկարդ բաղձանք իւր խնդրէ հանդոյն անասնոց։ Թէպէտ և մահադեղ ինչ արբուսցեն՝ ոչ վնասեսցէ, ասէ Փրկիչն. այլ այս հաւատացելոց և հոգեկիր անձանց ընտրելոց, և ոչ իբրև զմեղ 'ի մեզս զսառածելոց։

1 Տիտ. Ա. 15։ 2 Գործ. Ժ. 13. 15։

Ուրեմն մեծապէս հարկաւոր է մարդոյ պահել զզանազանութիւնն որ ընդ մարդ և ընդ անասուն. զի սոքա ուտեն և ճարակին միայն առ ի յագուրդ որովայնին, յաճուն անդամոց և ի պահպանութիւն կենաց իւրոց։ Իսկ մարդոյ բաց յայսոցիկ օրէն է քննել և խորհիլ դնել ընդ կերակուրս և ըմպելս, զի իցեն ինքեան յօգուտ և ոչ ի վնաս եթէ՛ ըստ հոգւոյ և եթէ ըստ մարմնոյ։ Վասն որոյ պարտի ընտրել զկերակուրս մաքուրս և առողջարարս, և ի բաց կալ ի համադամ բազմատեսակ խորտկաց. և այն մինչև ի չափաւոր յագուրդ անձին իւրոյ հանդերձ զգուշաւոր ժուժկալութեամբ. զի յղփութիւնն անհանգստութիւն պատճառէ անձին և ապականութիւն արեան, տկարացուցանէ զանդամս զանազան ցաւօք և հիւանդութեամբք, հուսկ ապա ածէ ի կանուխ ծերութիւն և ի մահ տարաժամ։

Պարտ է մարդոյ նաև զգուշանալ՝ զի մի կերակուրն զոր ուտելոյ է՝ իցէ կորստական, այլ զի օգտակար իցէ բազմաց։ Վասանօր ոչ են իմ բանք զհոգեկան կերակրոյ, այլ զմարմնականն։ Քանզի ի ճշմարիտ բնաղնին փիլիսոփայից այլաբանական ոճով և մարմնական կերակուրն կոչեցաւ ծառ գիտութեան

բարեաց և չարի. բարեաց՝ զի տայ կենաս, և չարի՝ զի պատճառէ զմահ։ Իսկ հոգեկան կերակուրն կոչեցաւ ծառ կենաց, զի զՀշմարիտ կենաս պարգևէ, ըստ այնմ. «Երթայք գործեցէք՝ մի զկորստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ 'ի կեանսն յաւիտենական»[1]։ Փրկիչն մեր Թէպէտ վասն հոգեկան կերակրոյ և եթ ասաց զայս, որպէս յայտ է, սակայն միանգամ խօսեցաւ Աստուած, և երկուս զայս լուաք[2]։ Բանզի գոլով նա իմաստութիւն Հօր՝ զոյդ ընդ հոգևորին գիտէր և զմարմնականն և զբնականն, ըստ որում ինքն էր հաստիչ ընդհանուր բնութեանս. վասն որոյ և միով առակաւոր բանիւ՝ բազում ինչ և այլ տայր ուսնկողոց իւրոց իմաստասիրել։

Արդ՝ առ 'ի գիտել թէ զմարդ անկորուստ մարթի է լինել և մարմնական կերակրոյ, ըստ որում յետ ուտելոյ՝ զՀարկաւոր զօրութիւնն նորին յինքն ձգեալ ստամքսին, զաւելորդն արտաքս վտարէ. ապա զմարդ իցէ անկորուստ. — առ այս զգուշութիւն մնայ մեզ խոստովանել. և որ ունիցի ականջ՝ լուիցէ։ Բանզի Աստուած սահմանս եդ

1 Յովհ. Զ. 27։ 2 Սաղ. ԿԱ. 12։

ծովու՝ և ասէ. «Յայդ վայր եկեսցես՝ և այլ մի անցանիցես»[1]։ Իսկ թէ քանի օգտաւէտ իցէ միաւեսակ պարզ կերակուրն և ժուժկալութիւնն մարդոյ ի յոլովատեսակ խորտկաց. ի դէպ համարիմ ասասէն գրել քեզ պատմութիւն մի յայտնի փորձառութեամբ՝ հանդիպեալ այդր ի քաղաքիդ Զմիւռնիոյ, որում մ. ականատես իսկ եղէ ի հասակի պատանեկութեան իմում. և դուք իսկ զբաանէք այդր կենդանի վկայս։

Պ-ԳՄ-ՐԻ-Ն։

Էր ի քաղաքիդ ոչ ի վաղ ժամանակաց Քիւրա օղլու տէր Կարապետ անուն քահանայ ոմն, աւագերէց սրբոյ Եկեղեցւոյն Յոհաննեսի՝ որ այդր կառուցեալ կայ։ Սա ի փոխիլ իւր յաշխարհէս՝ թողուզկին իւր այրիացեալ և աւստր մի մահտեսի Վարդերես անուն և դուստր մի Եղիսաբէթ կոչեցեալ։ Արդ՝ երիցակինս այս ժամանեալ յութանեբորդ ամ կենաց իւրոց՝ զկնի քանի ինչ ամաց մահուան առն իւրոյ, կորուսանէ զաչս աչաց իւրոց և մնայ ի տան մահտեսի

1 Յովհ. Ա.Ը. 11։

Վարդերեսի որդւոյ իւրոյ. որ էր յայնժամ ամաց իբրև քսանից, անմօրուս՝ ուներլով միայն ընչացս Թխադոյնս նորաբոյս։ Իսկ ծերուհիս գոլով և յամենայն ատամանցն զբրկեալ՝ սկսանի ճաշակել հաց լոկ Թրմեալ յանապակ գինւոջ, որով կեայ ամս երեսուն կայր աչօք և ատամնաԹափ։ Իւ՝ ի ժամանել հարիւր և տասն ամաց հասակի իւրոյ, յաւուր միւմ յամարային եղանակի յարուցեալ ընդ առաւօտն մահտեսի Վարդերեսի՝ ի քնոյ իւրմէ, դիմէ յաղբիւրն որ՝ ի մէջ տան՝ լուանալ զերեսս իւր ըստ սովորուԹեան. և՝ ի դառնալն՝ ի սենեակ իւր անձեռոց՝ ի ձեռին, և յանցանել յառաջոյ սենեկի ծերուհի մօրն իւրոյ՝ ասէ զձայն նորա որ ասէ. Օրհնեալ է Աստուած որդեակ իմ Վարդերես, որ հասոյց զիս յայս հասակ տեսանել զքեզ սպիտակախառն ալեօք, (քանզի մօրուս արձակեալ ունէր յայնժամ)։ Իսկ որդին գիտելով զկուրուԹիւն մօրն, և կարծելով իմն եԹէ երևակայապէս խօսի, հարցանէ ցնա ասելով. Այր իմ, ուստի՞ գիտես զսպիտակուԹիւն մօրուաց իմոց։ Իւ՝ նա ասէ. ահ որդեակ իմ, ահա տեսանեմ իսկ աչօք իմովք։ Զարմացեալ ընդ այն որդւոյն, և՝ ի ստուգուԹիւն տեսուԹեան աչաց նո-

րին՝ ցուցանէ նմա զմտաւունս իւր հարցանելով զԹիւ նոցին, երկիցս և երիցս փորձելով զնա. որոյ պատասխանեալ անվրէպ ըստ Թիւն՝ հարցանէ ապա և զդոյն հանդերձիցն զոր զգեցեալ էր։ Եւ այն ինչ ստուգեաց զտեսանելաւոյց մօրն՝ գնացեալ համբուրէ զձեռս նորա խնդրելով զօրհնութիւն։ Տեսանէ յայնժամ զի և ատամունք նորա վերաբուսեալ էին՝ բայց սրածայրք։ Ընդ որ փառս մատուցանելով Աստուծոյ՝ կոչէ զընտանիս իւր ի տեսութիւն՝ մանաւանդ թէ ի զարմացումն եղական դիպուածոյն, կամ լաւ ևս ասել՝ հրաշից։ Եւ ապա հրատարակեալ խսկոյն համբաւս այս ի քաղաքիդ, արք և կանայք յամենայն ազգաց խուռն ընթանային ի տուն անդր ի տեսութիւն նորա՝ ընծայաբերք լինելով. և փառաւոր առնէին զԱստուած ի վերայ այսր ամենայնի՝ որ եղևն և զարմանային, զի համարէին նշանս ինչ տեսանել։

Իսկ բժիշկք և գիտնականն անձինք բընդանինք ժամանակին որք յազգաց ազգաց գտանէին այդր, հաստատեցին բնականաբար լեալ զիրսդ, այսինքն զօրութեամբ և ներգործութեամբ հային և գինւոյն, զոր ընդ երկար ժամանակ ունէր ի կիր առեալ ի սը-

նուէնդ մարմնոյն։ Բանդի ասէին՝ թէ առ սակաւ սակաւ վտարեցին նոքա զվիթարս և զվատթար հիւթս յերակաց աչացն, որք խաւփանէին զառեսութիւն նորա՝ ձգելով զբոբ աչացն զու�բաժաբեր։ Իսկ լուսոյ ականն ոչ ինչ գոլով վնասեալ, 'ի փարատիլ մթարիւցն՝ սկսան կրկին տեսանել։ Այս և մաբրեալ արեանն՝ զօրութիւն ածման ընկալան նիւթքն, որք և արտադրեցին զատամունան նորաբաբոյս, զորս 'ի լեզու տաճկաց Բէյնէր պէնէ կոչեն. և ասի թէ զկնի անցանելոյ հարիւր ամաց հասակի բուսանին, բայց այս ոչ ամենեցուն պատահի։

Ահա քեզ օրինակ ուրդեակ իմ, և պտուղ օգտաւէտ կերակրոց և արդիւնք չափաւոր կերելեաց և ըմպելեաց, որպիսի է հացն և գինին։ Բանդի կարի մեծ և զօրաւոր է օգտակարութիւն հացին և ոչ սակաւ գինւոյն, որք և լի են երկոքին և ի խորհրդսվք. որպէս և Աբրահամ յերթալն ընդ առաջ Մելքիսեդեկայ, հացիւ և գինւով պատուեաց զնա. և Եղիա այն ինչ հանդերձեալ էր ելանել 'ի լեառն Քորեբ առ 'ի քառասնօրդեալ անդ 'ի պահս, նկանակ հացի և կուժ մի գինւոյ թոշակ մատայց նմա հրեշտակն Աստուծոյ։ Այնպէս և Քրիստոս մեր զկենարար խորհուրդ

փրկութեան հոգւոց մերոց՝ հացիւ և գինեւով աւանդեաց։

Այլ ուր գիցուք զի ընդհանուր ջրբաստանիք, զեռունք, թռչունք և ջրային լողակք միահամուռ բնականաբար բերին 'ի ճաշակումն հացին, զոր և ախորժանօք ուտեն. և չիք ինչ այլ 'ի ներքոյ արեգական քան զհացն ախորժ կերակուր ընդհանուր կենդանեաց։ Ուրեմն որ խոհեմն է 'ի մարդիկ՝ ըստ մեծի մասին հացիւ կերակրի, զի օգուտ և առողջութիւն ընկալցի յանձն իւր։

Բայց իմա և զայս, զի թէպէտ և գինին օգտակար իցէ և 'ի կարգի դեղոց համարիցի, սակայն աւելորդն մահադեղ է կենաց և բանականութեան։ Այլ այսչափս շատ համարեսցի զոր ինչ խօսեցաք զօգտակարութենէ և զչափաւոր կիրառութենէ կերակրոց և ըմպելեաց. և դարձցուք 'ի բնաբան մեր։

Ասացաք 'ի վերս անդր, թէ պարտ է մարդոյ քննել զամենայն զոր ուտել և ըմպել հանդերձեալն է, զի մի իցեն կորստական, այլ զի ունիցին բաղում օգուտս մարմնոյ։ Այս ոչքան առաւել պարտաւոր է խոկալ և որոնել զճշմարտապէս անկորուստ կերակուրն իմանալի, որ տայ կեանս յաւիտենական հոգւոյ։ Զանգի ոչ եթէ հացիւ միայն

կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ
'ի բերանոյ Աստուծոյ [1]։ Ի՛նչ որուամ հայն
զմարմինն բուծանէ, բանն զհոգին կեցու-
ցանէ։ Լու զի մարմնոյ կեցութիւն առժա-
մանակեայ է, իսկ հոգւոյն յաւիտենական.
մարմինն 'ի մեռանել իւրում կորուսանէ
զանձն, իսկ հոգին անկորուստ պահէ զայն։
Ուրեմն զի՞նչ օգուտ է մարդոյ, ըստ բանի
Փրկչին, եթէ զաշխարհ ամենայն շահեսցէ,
և զանձն իւր տուժելով թողուցու 'ի մե-
ռանել և 'ի կորնչել [2]։ Այսն որոյ անհրա-
ժարելի պարտք են մարդոյ ամենայն ջանիւ
'ի խնդիր լինել անկորուստ և անապական
կերակրոյ հոգւոյն, որ է բանն բերանոյն Ա-
տուծոյ. որոյ քաղցրութեան ոչ ինչ կարէ
երբէք համեմատիլ, որպէս և Դաւիթ ասէ.
"Որպէս զի քաղցր են 'ի քիմս իմ բանք քո՝
քան զմեղր բերանոյ իմոյ", այսինքն քան ըզ-
մարմնական և զհեշտալուր բանս մարդկային
զբօսանայ, և կամ քան զմեղրօրինակ և
քաղցրաճաշակ կերակուրս կազդուրիչս մար-
մնոյ. որ և զճաշակ բանիցս տեառն առեալ
անվրէպ փորձառութեամբ, մստահութեամբ
ինն հրաւիրէ 'ի նոյն և զամենեսին՝ ասելով.

1 Դ՚-ն. Դ. 4։ 2 Մ՚ն. Ը. 36։

«Ռաշակեցէք՝ և տեսէք զի քաղցր է Տէր առ այնոսիկ՝ որք հաւատով և յուսով սիրեն զնա և խնդրեն բոլորով սրտիւ»։ Բանզի նա յագեցուցանէ զքաղցեալ անձինս մեր, նա բանայ զմիտս մեր. նա ազդէ 'ի մեզ ըզկամս իւր. նա վերականգնէ զմեզ 'ի գլորմանէս. նա ձեռնտու և օգնական լինի մեզ 'ի ներզուիթեան մերում. նա փրկէ զմեզ 'ի վնասանգէս. նա առաջնորդէ մեզ 'ի շաւիղս արդարութեան. նա տանի զմեզ 'ի կեանս յաւիտենականս, և նա լուսաւորէ զհոգի զմարմին և զանձինս մեր. ըստ այնմ, «Որոգեն բանք քո ոտից իմոց և լոյս տան շաւղաց իմոց»[1]։ Այս թէ «Պատուիրանք Տեառն լոյս են, և լոյս տան աչաց. երկիւղ տեառն սուրբ է, և մնայ յաւիտեան»[2]։ Այրեցին սմա ըղձասցուք և մեք, և ամին փոխադարձացուք. զի սա է որ վերստին ծնանի զմեզ յորդիս Աստուծոյ։ Այս սովին որոշիմք յանասնոց, և 'ի ձեռն սորա մտանեմք 'ի կեանս յաւիտենականս։ Բանզի սա է ճշմարիտ կերակուրն հոգւոյ, իսկական մարմին Փրկչին մերոյ. ըստ այնմ թէ, «Հացն զոր ես տայց մարմին իմ է, և որ ուտիցէ զք 'ի սմանէ՝ մի մեռանիցի.

1 Աղ. ՃԺԸ. 105։ 2 Աղ. ԺԸ. 8։

և ԵԹԷ ոչ կերիցէ զմարմին որդւոյ մարդոյ, ոչ ունի կեանս յանձին »[1]։

Այսմանապէս սա է Ճշմարիտ ըմպելի զոլվարար հոգւոյ և արիւն Փրկչին մերոյ. և որ միանգամ ըմպիցէ 'ի սմանէ՝ ոչ ծարաւի երբէք. որպէս և ասէր ցկինն Շամրտացի. « Որ ըմպէ 'ի ջրոյն զոր ես տայ նմա, մի ծարաւեսցի յաւիտեան »[2]։ Այս է աղբիւրն կենդանութեան, որ ըստ օրինակի յորդահոս գետոյ բղխի յորովայնէ նորա. այսինքն Հոգին Ճշմարտութեան՝ զոր մատուցանէ հաւատացելոց իւրոց՝ գալ և ըմպել զնոյն ձրի. որ և աղաղակէ 'ի տաճարի բնութեան ընդհանուր տիեզերիս. « Եթէ ոք ծարաւի իցէ եկեսցէ առ իս՝ և արբցէ. որ հաւատայ յիս՝ որպէս և ասէն գիրք, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան։ Այս ասէր վասն հոգւոյն զոր ընդունելոց էին... զի չէր հոգի, քանզի Յիսուս չէր փառաւորեալ »[3]։

Հուսկ յետոյ յիշեա սրդեակ իմ զոր ասացաւն 'ի վեր անդր, թէ մարմին կենդանեւոյն 'ի միոյ կաթլոյ սերման գոյացեալ,

1 Յովհ. Զ. 5։ 3 Յովհ. Է. 37—39։
2 Յովհ. Դ. 13։

ուտելով զկերակուրն դոյապոխէ 'ի տեսակ մարմնոյ իւրոյ, և նովիմբ աճեալ և զարգացեալ հասանէ 'ի կատարելութիւն, ստանալով զներգործութիւն և զազդեցութիւն իւրին զոր ուտէ։ Այնպէս և հոգին ընկալեալ զքանն Աստուծոյ, և հանապազորդելով 'ի նոյն 'ի սնունդ հոգւոյ, միանայ ընդ նմա և աճեցեալ զարգանայ նովիմբ. և ստացեալ զներգործութիւն և զազդեցութիւն նորա լինի և ինքն նման Աստուծոյ, որպէս և էն, ըստ բանի սրբազան առաքելոյն Յովհաննու, թէ "Յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լիներոց եմք"[1]։ Ահա դուռն և ճանապարհ՝ որով շահելով զանձն ոչ կորուսանէ հանդերձ տուժելով։ Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Այս ուրեմն զամենայն փոյթ 'ի մէջ առեալ՝ սրբեսջիր զախտորժանս քո անյապաբար ուտելով զքանն Աստուծոյ, զճշմարիտ կերակուրն հոգւոյ և անձին, և զճշմարիտ պտուղն ծառոյն կենաց՝ որ տայ քեզ կեանս յաւիտենականս փոխանակ այնորիկ՝ որ ածէ ապականութիւն մարմնոյ քո, և ապա անձին և հոգւոյդ. յորմէ ցեր փրկեալ ազատեսցէ. ամէն։

1 Ա. Յովհ. Գ. 2։

ՅՕԴՈՒԱԾ ՀԻՆԴԵՐՈՐԴ

Յաղագս ջրաշփելեաց, այսինքն յիւրաց, ընդ որս դատաւորքին և ընթանալիս, այսինքն ոչխ։

«Եւ ձեռք մեր ջրաշփեցին ի վերայ բանին կենաց։» Ա. ՅՈՎՀ. Ա. 1։
«Եթէ աչք ձեռն քո։ կամ ոտն գայթագղեցուցանէ զքեզ։ հատ զնա և ընկիր ի քէն։ զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ։ և մի ամենայն մարմինդ քո արկանիցի ի գեհենն։» ՄԱՏԹ. Ե. 30։

Օ ԳՈՒՑԱՐԱՆՆ այս շօշափելեաց՝ մարթէ ասել եթէ յատկապէս մարդոյ միայնոյ իցէ պարգևեալ Աստուծոյ, քան առ հասարակ ամենայն կենդանեաց։ Վասնզի յանասունս սակաւագոյնք են որք զոյն պարգև վայելեն, և այն անկատար իմն եղանակաւ։ որպիսի է արջն, ջրշուանն, նմանապէս և կապիկն։ Ի վերջինս յայս իբր երեսուն և երկու ազգք համարին, որոց ի կարգս դասի և օրանգ օրէնգ կոչեցեալ կենդանին ի բարբառս Հնդկաց, որ դասանի ի Գոնդօ անուանեալ կողմանս։ Լուանի սա նմանութիւն զկերպարանաց և զանդամոց ընդ մարդ և ընդ բաքիան կապիկ, զոր ի տեսանելն ուրուք զա-

ռաջինն, համարի զնա այր լեռնասուն և վայրենի. որ և ընտելանայ և պաշտէ զծառայութիւն մարդկան, և երբեմն ևս բրօք կռուի ընդ մարդիկ և ընդ գազանս։ Զն և այլ կենդանիք, որոց ձեռք դոյզն ինչ ծառայեն, այլ ոչ կատարելապէս. և չունին ըստ գայութիւն կատարեալ շօշափելեաց, այլ առաւել ծառայեն փոխանակ ոտից, վասն որոյ և հաստարակաբար կոչին չորոտանիք։

Իսկ մարդն միայն է 'ի սեռի կենդանեաց որ կատարելապէս վայելէ զայս ձիր աստուածային, որով և շօշափելով զամենայն ինչ՝ ըստ գայ և որոշէ զկերմութիւն և զցրտութիւն, զդիմութիւն և զչորութիւն նոցա. այլ և զկակղութիւն և զկարծրութիւն այլովքն հանդերձ՝ որ ընդ զգայարանաւք շօշափելեաց անկանին։ Զինչ զի և կոյրք բայց 'ի գունոյ՝ զամենայն յատկութիւնս և զգանազանութիւնս էակացն այսու զգայարանաւ որոշեն յայտնի փորձառութեամբ։ Զոյց յայտցանէ ձեռք մարդոյ նպաստեն ինքեան և 'ի բաղումս արուեստս և 'ի ծառայութիւնս. գործեն զարմանալիս՝ մինչև 'ի հիացումն կրթել ըստ սեսողս, և ոչ հաւատալ նոցա եթէ իցեն այնոքիկ գործք ձեռաց մարդկան։ Զանազի ըստ բնաձևից՝ ձեռն մարդոյ է գործի արս-

ուեստին, և արուեստն գործի բնութեան, և բնութիւնն գործի Աստուծոյ։ Այսու որում Աստուած գործէ 'ի ձեռն բնութեան, և բնութիւնն 'ի ձեռն արուեստին 'ի բաղում իրս՝ զորս ունի անկատար թողեալ, ոչ կարելով 'ի լրումն ածել 'ի սակս տեղւոյն կամ օդոյն և կամ այլոց պատահական պատճառաց. և արուեստն գործէ 'ի ձեռն ձեռին մարդոյ, ուստի և տասացաւ յոմանց, թէ զոր օրինակ բնութիւնն է կապիկ Աստուծոյ, նոյնպէս և արուեստն է կապիկ բնութեան։ Այսոն զի զոր ինչ միանգամ գոյացոյց Աստուած, լրացոյց զնոսա տալով իւրաքանչիւր տեսակի յատուկ իմն բնութիւն և օրէնս, որոյ կարգադրութեամբ յարատևեսցեն 'ի սեռ և 'ի տեսակ իւրեանց։ Իսկ բնութիւնն զպատահական թերութիւն իւր լցուցանէ գործակցութեամբ արհեստին. ըստ որում արհեստն զհետ երթայ բնութեան, և ոչ բնութիւնն զարհեստին. զի արհեստն ընդդէմ բնութեան ոչ ինչ կարէ առնել։ Այսպէս և արհեստն եթէ ինքնին և եթէ 'ի ձեռն բնութեան չկարէ առնել ինչ, եթէ ոչ ձեռն մարդոյ օգնիցէ նմին։

Այսպա ուրեմն ձեռն մարդոյ է յատուկ ձիր, օժիտ և պարգև աստուածային շնոր-

հեալ ինքեան միայնոյ, զի գործեալ այնու զարմանալիս հաւատեսցէ զկատարելութիւնն իւր, և ցուցցէ զանձն լինել յատուկ գործ ձեռին Աստուծոյ, և կենդանի բանական զանազանեալ յոյժ յանբան կենդանեաց։ Այլ թէ է ճշմարտապէս ստեղծեալ ի պատկեր և ի նմանութիւն Աստուծոյ. ըստ որում իբրև զԱստուած գործէ հիանալիս՝ բայց ի ստեղծագործութենէ։ Այլ արդարև ճշմարիտ է խմաստասիրացն բան՝ որք ասացին, եթէ չէր մարդ յաշխարհի, անկատար մնային արարածք։ Բանզի այնչափ կատարելութիւն գտին ի մարդումն, մինչ զի ոմանց կոչել ըստ՝ փոքր աշխարհ, և ոմանց՝ մեծ։ Այս և նոյն ինքն իսկ Աստուած մարդոյն յանձնեաց զերկիր՝ գործել զնա և պահել, կացուցեալ զնա փոխանորդ իւր և իշխան և տէր ի վերայ ամենայն արարածոց։ Բանզի յոր վայր չգուցեն մարդիկ, անապատացեալ մնայ տեղին և վայրենաբնակ, թէ և բնութիւն զբաւարձանայցէ անդր և վայելուչ զտեղին գործիցէ։

Արդ՝ որ քան զամենայն կենդանիսն ազնուագոյն և կատարեալ իցէ մարդն, և այսչափ գեղեցիկ յատկութեամբք զանազանեալ յանբանից սեռէ, զիա՞րդ չունիցի և յատ-

կութիւն իմն վերատին ծնանելոյ ի հոգւոյ և մատանելոյ ի կեանս յաւիտենականս։ Մի-թէ անհուն բարութիւնն Աստուծոյ, որոյ առանց խնդրելոյ ուրուք յէակացս, ոչ ինչ իսնայելով ի բարութիւն իւր՝ շնորհեաց նուցա զգոյութիւն, և յաւել ի նոյն այսչափ ձիրս առատապարգևս, խնայիցէ՞ ինչ արդեօք մարդոյ, որ մեծապէս ժամէ և խնդրէ զկեանս և զանմահութիւն։ Բաւ լիցի։ Բանզի որ խնդրէ՝ առնու, և որ բաղխէ՝ բացեալ լինի նմա, և որ հայցէ՝ գտանէ. նոքին միայն որք անփոյթ առնեն զշնորհիւս և ուրանան զԱստուծոյ բարութիւնն՝ զուրկ գտանին ի կենաց։ Եւ զի՞նչ ապաքէն. Աստուած որ ճըշմարիտ կեանքն է և կենդանութիւն, չիցէ՞ նմա բնական հաղորդելոյ զինքն տարածոյս և զարարածսն, իւրոյ բարութեան. այո՛ և կարի իսկ քաջ։ Այլ քանի՞ մեծ յանդգնութիւն իցէ ասել, եթէ կենդանիս այս պատուական և կատարեալ՝ իբրև զանկատարս իմս իբրև զանբանս՝ ի կորուստ մատնիցի։ Ցիրաւի արդեօք կորնչի, բայց ոչ հարկաւ, այսինքն բնականաբար որպէս զանասունս, այլ կամաքն և մասնաւոր անձնիշխանութեամբ իւրով, այսինքն ոչ խնդրելով և ոչ զհետ լինելով կենաց անձինն։ Բանզի Աստուած ոչ

բանադատել զոր 'ի փրկութիւն, (զի թէպէտ ստեղծ զնա առանց նորա, բայց ոչ արդարացուցանէ զնա առանց նորա,) այլ հրաւիրէ. ապա թէ ոչ՝ զի՞նչ վարձք էին փրկելոց, և զի՞նչ ողորմի և կրճուն ատամանց հաւատացեալ անհաւատից։

Ո՞հ մեծի կուրութեանն՝ որոց տեսանելով տեսանեն՝ և ոչ տեսանեն, լսելով լսեն՝ և ոչ խմանան, եթէ զնոյն կենաքն յաւիտենական արդէն ունիմք 'ի մեզ բնակեալ, զոր և ամենայն ջանիւ և սիրով պարտիմք պահպանել զնոյն և ոչ կորուսանել իբրև զանբանս։ Վասն որոյ խօսին՝ առանց 'ի միտ առնելոյ զոր խօսին, զի բարձեալ 'ի նոցուն ազդեցութիւն ատուածեղէն հոգւոյն՝ վասն անհաւատութեան իւրեանց, թանձրացեալ են սրտիւք և կուրացեալ աչօք, զի մի տեսցեն՝ և դարձցին և բժշկեսցին։ Բանզի ուրացութեամբն չկամին և ոչ 'ի խնդիր լինին, ուստի և ոչ գտանեն զթողութիւն մեղաստ և ոչ 'ի հանդերձելոյն։

Օ՛ն ապա թողցուք զնոսա 'ի կուրութեան իւրեանց, և մեք հետևեսցուք կարգի բանիցս. եթէ զդայարանս այս ձեռաց է յատուկ պարգև շնորհեալ Աստուծոյ մարդկային տեսակի և եթ, և ոչ ամենայն կեն-

գանեաց առհասարակ. որ և այսու զարմանալիս գործելով՝ նպաստամատոյց լինի բընութեան 'ի լուսն թերութեան նորին։

Սակայն ոչ է մարդոյ պարտ և արժան զայս օրինակ գործի պատուական ծառայեցուցանել միայն 'ի մարմնական և 'ի զգալի իրս. և ոչ շօշափել այնու զաշխարհայինս և եթ, և ոչ ձգել զնոյն 'ի ծառն մահաբեր, այսինքն 'ի չարիս, 'ի զրկանս, 'ի սպանումն, յաւար և 'ի կապուտ, 'ի գողութիւն. այլ 'ի ծառն կենաստու, այսինքն կարգել զնա 'ի պաշտօն բանին Աստուծոյ, և զնա միայն շօշափել՝ կարկառելով յամենայն գործս բարեաց, որք են յատուկ գործք Աստուծոյ։ Քանզի ողորմել աղքատաց, և լցուցանել զպէտս կարեաց ընկերին՝ գործ է Աստուծոյ, որպէս և ինքն իսկ Քրիստոս վկայէ հանդերձ յորդորելով զմեզ. "Եղբարք գթածք որպէս և հայրն ձեր գթած է"[1]։ Եւ զի արդարև ողորմածն ստուգապէս շօշափէ զՔանն կենաց առաքինական գործովք իւրովք, յայտ է։ Քանզի զբարեգործութիւն և զողորմածութիւն այնոցիկ՝ որ զքաղցեալն կերակրեցին, զծարաւին արբուցին, զմերկն

1 Ղուկ. Զ. 36։

զգեցուցին, օտարին ասպնջական եղեն, հիւանդին և բանտարկելոյ չոգան 'ի տես, զոյնոսիկ զամենայն ինքեան համարելով Բանն Աստուծոյ՝ ասաց, եթէ «Որ արարիք միում 'ի փոքրիկանցս յայսցանէ՝ ինձ արարիք»։ Այս ասա ըստ ճշմարիտ բանին իւրոյ շօշափեցին նոքա առաքինութեամբք իւրեանց զբանն կենաց։ Այլ որք յօժար կամօք և առատասրտութեամբ գործեն զայնոսիկ 'ի փառս Աստուծոյ, առաւել քան զթոփման հանդերձ երանութեամբ կարեն ասել ըստ սրբազան առաքելոյն Յովհաննու. «Այլ ձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց»։

Ուրեմն պարտ է մարդոյ զձեռն 'ի բաբեգործութիւնս արկանել, սպեղանել զվէրս, բժշկել զհարատաճեալս, կանգնել զդլորեալս, նորոգել զվանդարեալս, լցուցանել զպէտս կարօտելոց, և մի երբէք տեղի տալ գայթակղութեան ձեռին. և մի ընդհակառակն 'ի գործ ածել զայն 'ի գողութիւն, 'ի գանս, 'ի կռփանս, և որ 'ի սոցին սակի են չարիս, և լիցի այն առիթ գայթակղութեան անձինն. քանզի լաւ է հատանել զնա և 'ի բաց արկանել, քան անկանել նոքաւ 'ի գեհեան։

Այսմանապէս և ոսք, որ են առաւել գործի ընթացից քան շօշափելեաց, հարկ է

մարդոյ ուղղել զնոսին 'ի յաւիտենական հայրենիսն իւր, և ընթանալ նոքօք 'ի ժամանել յօթեւանս հանգստեան հոգւոյ և մարմնոյ իւրոյ, հաստատելով զնոսին 'ի ճանապարհս ուղղութեան և արդարութեան. ըստ այնմ, «Հաստատեա զշաւիղս իմ 'ի ճանապարհի քում, զի մի դայթակղեսցին գնացք իմ»[1]. և թէ «Այն իմ կացցէ յուղղութեան, յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ Տէր», այսինքն՝ յերկինս 'ի ժողովս անդրանկաց։ Այլ թէ որպէս կարեմք ուղղել զոտս մեր 'ի ճանապարհս արդարութեան, ոչ այլով իւիք՝ եթէ ոչ հետևելով միայն աստուածային բանից, որք են իսկապէս լոյս և ճրագ և առաջնորդ շաւղաց մերոց։ Այսպէս ուրեմն ըստ հետ երթեալ բանին Աստուծոյ՝ ուղղեսցուք զոտս մեր 'ի ճանապարհս առաքինութեանց, այսինքն փութասցուք անդանդաղ 'ի տեսութիւն հիւանդաց արդեամբք օգնելով նոցա. առանց յուլանալոյ ձեպեսցուք յայցելութիւն՝ մանաւանդ եթէ յաղտութիւն գերեւաց և բանտարկելոց, և ճանապարհալ հասցուք յօգնութիւն վտանգելոց։ Հուսկ ուրեմն յարատևելով յամենայն ազգս բարեաց

1 Աղ. ԺԶ. 5։

գործոց՝ կարձեցուք զոտս մեր ի շաւղաց անօրէնութեան. և փոխանակ ի կրկէս և ի թատերս մարմնական հեշտակիր զբօսանաց և ի պարահանդէս ուղղելոյ զնոսին՝ ընթացուք ի հոգևոր տեսարանս աստուածային երգոց և յունկնդրութիւն պատգամացն Աստուծոյ։ Այսպէս թէ ոչ՝ գայթակղիչս մեզ և որոց տեսանեն համարելով զնոսին, լաւ է հատանել, և կաղ մնանել յարքայութիւնն Աստուծոյ, քան երկոքեան մարմնովքն անկանել ի գեհեան. յորմէ փրկեալ ազատեսցէ զմեզ Տէր։

Եւ արդ՝ ընկալ ուրդեակ իմ զսակաւամանեայս բանս՝ զոր ըստ կարեաց տկար մըտայս իմոց հիւսեալ ի վերայ հնգից զգայարանաց մատուցանեմ քեզ, որք են հնգեակ քանքարք մայր դրամոց (սերմայէի), սուրեալ Աստուծոյ մարդկան սեռի առ ի շահեցուցանել և յաւելուլ ի նոսա այլ ևս հինգ, այսինքն զհոգևոր զգայարանս, զորս ընդ մարմնականին միաւորելով՝ մատուցանել Տեառն, և լինել տէր տասանց քաղաքացն։ Որպէս և երկոքեան մարմնովքն՝ այսինքն հոգւովք և մարմնով շահեալ զպատգամս երկուց կտակարանաց, կամ հոգևոր և մարմնաւոր առաքինութեանց՝ պարգևի նմա լինել տէր և իշխան ի վերայ չորեցունց քա

ղաքաց, իմա զերծանելով 'ի չորից ապականացու տարրական ծառայութեանց, և տիրաբար վայելել յանտարը և 'ի հոգևոր կենդանութիւնն անապական, մշանջենաւորապես իշխելով ընդ Աստուծոյ 'ի վերայ համօրէն արարածական բնութեանս։ Այս մի ըստ օրինակի քանքարաթաքոյց ծառային, թաղելով և խորելով զնոսին 'ի ծրարս երկրաքարշ հեշտութեան և ապականարար կրքից մարմնականաց՝ պատժապարտ գտանիցի յաւիտենական կորստեան։ Զանգի ըստ անսուտ բանի Քրիստոսին՝ օգուտ և երջանկութիւն մարդոյ կայանայ 'ի շահել զանձն իւր, այն է զկեանս յաւիտենականս. ըստ այնմ թէ՝ «Ո՞ւր օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ», որով և ամենայն ակնկալութիւնք 'ի դերև ելանեն։

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ԲԱՆԻ

ԵՒ ՈՄԱՆՑ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿՐՕՑ, ԱՑՍԻՆՔՆ ԾՆՆԴԵԱՆ, ՆՆՋՄԱՆ, ԵՒ ՄԱՀՈՒԱՆ

ԿԱՆԽԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սկսցուք սատէն գրել և յաղագս ոմանց գլխաւոր կրից մարմնականաց, այսինքն ծննդեան, ննջման և մահուան, որք են անհանջելի և հարկաւոր կիրք ընդհանուր կենդանեաց՝ նոյն և մարդոյն։

Բայց նախ քան զսոսին խօսեացուք ի կարճոյ զբանէն, առ ի գիտել թէ զինչ է բանն, զինչ բանականութիւնն և զինչ խօսքն. ըստ որում երեքին սոքա հասարակաբար բան յորջորջին։ Եւ ապա խօսեացուք թէ որովք եղանակաւ պարտ է մարդոյ ի գործ ածել զսոսին, որով կարասցէ զանազանիլ ի կիրս իւր յանասնաւորութենէ, և

լինել մարդ կատարեալ առ ի զնմանութիւն բերել յանձին զհեղինակին իւրոյ, որոյ ի պատկերի և ի նմանութեան արարաւ. որպէս զի մի գտանիցի պարտաւոր պարգևողին բարեաց և գերագոյն շնորհաց՝ որով զարդարեալ պատկեաց զնա, և կացոյց տէր և իշխան ի վերայ ընդհանուր արարածոց. մինչև զհրեշտակս իւր կարգեաց ի պաշտօն և ի պատգամաբերութիւն և ի պահպանութիւն նոցա յերևելի և յաներևոյթ պատահարաց։ Բանզի թէպէտ և մարդն ըստ մարմնոյ փոքր ինչ խոնարհ արարաւ քան զհրեշտակս, բայց ըստ հոգւոյ մեծ է յոյժ քան զնոսա և իմաստնագոյն. զի զհաղորդութիւն և զնմանութիւն ունի զԱստուծոյ, և միաւորեալ թագաւորէ ընդ նմա։ Իսկ հրեշտակք սպասաւորք են Աստուծոյ, և կարգեալք ի պաշտօն մարդկան, որպէս է տեսանել յաստուածային գիրս. յորում յայտնի ցուցանի առաքումն նոցին առ Ղովտ[1], և առ Եղիա՝ ի պաշարիլ իւրում ի զօրացն Ասորւոց, յորմէ և ընկալաւ զնկանակն և զգինին[2]. նմանապէս և առ Տոբիա[3], և առ Դա-

1 Ծննդ. ԺԹ. 1։ 3 Տոբիթ. Ե. 5։
2 Գ. Թագ. ԺԹ. 5։

նիէլ՝ այն ինչ փակեալ կայր ի գրի առեալ։ Առ սրբազան առաքեալն Պետրոս՝[2] մինչ ի բանտին կայր, առ Կուռնելիոս[3], և առ այլս բազումս։ Աւասիկ գերազանցութիւն մարդոյ, որոյ չիք զուգահաւասար յընդհանուր արարածս. եթէ գիտայ երբէք լինել մարդ կատարեալ ըստ օրինակի սիրելեացն Աստուծոյ և սիրողացն զնա, կարէ ընդունել զնոյն արժանաւորութիւն, ապա թէ ոչ՝ անբանագոյն քան զանբանս համարի և անսրգ քան զանասունս։

1 Դ.անի. Զ. 22։ 3 Գ.ործ. Ժ. 3։
2 Գ.ործ. Ե. 19։

ՅԱՂԱԳՍ ԲԱՆԻ

«Եւ բանն մարմին եղև և բնակեցաւ ի մեզ։» ՅՈՎՀ. Ա. 14.
«Ի բանից քոց արդարացիս և ի բանից քոց դատապարտեսցիս։»
ՄԱՏԹ. ԺԲ. 37.

ԵՐԲԱԿԻ իմանամք զբանն. նախ զբանն աստուածային՝ որով երկինք և երկիր և ամենայն ինչք և էակք հաստեցան, որ է անսկզբնաբար ծնունդ, Ճշմարիտ պատկեր, Ճառագայթ փառաց, զօրութիւն և իմաստութիւն Աստուծոյ Հօր ամենակալի. զոր լատինք կոչեն Վերբում, այսինքն Բան Աստուծոյ։ Երկրորդ՝ զբանն մարդկային, որ է տրամախոհութիւն մտաց և իմացականութիւն նորին. որ 'ի սրտի իւրում խորհի, և տրամադրէ զոր ինչ և կամի. և կոչի սա 'ի մեր լեզու բանական-բիւն, և 'ի լատինս բոյցիէնիա, որ զնոյն ունի նշանակութիւն։ Երրորդ՝ բան կոչի ըստ քերականաց՝ պարբերութիւնն այն մարդկային խօսից, որ յայտնէ զտրամախոհութիւն մտաց նորա. որ 'ի լատինս փոխարեալ լսի, որ է խօսք կամ խօսակցութիւն։ Այլ զսոյն լաւ ևս կարեմք

ասել մարմին բանի՝ քան եթէ բան։ Բանզի զբանն զոր սրամտիսի մարդ 'ի միտս իւր, սովիմբ մարմնացուցեալ արտայայտէ. վասն որոյ և ոչ կարէ ասել իսկապէս բան, այլ խօսք կամ շարամանութիւն բառից. ապա թէ ոչ՝ հարկ էր բան կոչել և զարտաբերութիւն թութակին, որոյ ամբողջ պարբերութիւն մի ուսեալ 'ի բերան՝ արտասանէ իբրև զմարդ։ բայց սակայն ոչ է բանաւոր՝ այլ անբան։ Լերեմն բանն ոչ է երեք, այլ երկու. որոց մինն է իսկական՝ անեղ՝ և աստուածային, և միւսն պատկեր նորա, զի է որպէս Ճառագայթ 'ի հայելւոջ։ Բանզի իմացականութիւն մարդոյ ոչ ուստեք է՝ եթէ ոչ 'ի հոգւոյն, զոր Աստուծոյ փչմամբ իւրով պարգևեալնմա՝ կոչեաց զնա 'ի պատկեր իւր, որով և անուանեցաւ բանական կամ բանաւոր, այսինքն ունող բանի։

Արդ՝ թէպէտ և ասացաւ եթէ ոչ են երեք՝ այլ երկու, բայց յարմարագոյն ևս է ամփոփել զնոսին 'ի մի միայն։ Բանզի զոր օրինակ անհնար է երկուս Ծայրագոյն սկիզբ բուն առնել, կամ երկուս Ծայրագոյն էութիւնս և գոյութիւնս կամ հեղինակութիւնս. այլ մի միայն սկիզբն, մի էութիւն, մի գոյութիւն և մի միայն հեղինակ ամենայն

էից. և ամենայն էութիւնք և գոյութիւնք
'ի միոյ միայնոյ յանեղ և յանսկիզբն սկզբնէ
սկզբնաւորեալք. նմանապէս կարեմք զմի
և եթ ասել բան, և այլ ամենայն բանք և
բանաւորութիւնք 'ի նմանէ ուներն զսկզբ-
բնաւորութիւն իւրեանց։ Իւ որպէս ամե-
նայն էացեալք առանց անսկզբնական էու-
թեան և ոչ կէտ մի ժամանակի կարեն մնալ
'ի գոյութեան, այսպէս և ամենայն բան և
բանաւորութիւն առանց անսկզբնական բա-
նի ոչ երբէք կարեն լինել բան, ըստ սարասի
մարմնոյ՝ որ չկարէ բնաւ կալ կենդանի ա-
ռանց հոգւոյ։ Իւ սոյն այս բան անսկզբ-
բնական է՝ նոյն ինքն Բանն Աստուծոյ, որով
ամենայն ինչ եղեն, ըստ այնմ, « Խսկզբանէ
էր բանն, և բանն էր առ Աստուած. և Աս-
տուած էր բանն։ Նա էր խսկզբանէ առ Աս-
տուած։ Ամենայն ինչ նովաւ եղև. և առանց
նորա եղև և ոչ ինչ՝ որ ինչ եղևն։ Նովաւ
կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան. և
լոյսն 'ի խաւարի անդ լուսաւոր էր, և խա-
ւար նմա ոչ եղև հասու »։ Խաւար կոչէ
ասէն զմարդն անսանաբար 'ի մարմին դարձ-
եալ, յորմէ եբարձ Աստուած զոգին ասել-
լով. « Խարձցի հոգի իմ 'ի դոցանէ վասն
լինելոյ դոցա մարմին ». վասն սրոյ և զկնի

ասէ. «Յիւրան եկն, (իմա առ մարդիկ՝ որք ունէին զինքն, այսինքն զբանն.) և իւրքն զնա ոչ ընկալան, (այսինքն ոչ ծանեան.) իսկ որք ընկալան զնա, (իմա՝ որք ծանեան զնա,) ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատացեն յանուն նորա. զոր ոչ յարենէ, և ոչ 'ի կամաց մարմնոյ, և ոչ 'ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան. Եւ բանն մարմին եղեալ, և բնակեաց 'ի մեզ». որով և զերծելոյ 'ի խաւարէ՝ տաճար և բնակարան Աստուծոյ կոչեցաք, ըստ այնմ, «Ոչ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ, և Հոգի Աստուծոյ բնակեալ է 'ի ձեզ»[1]: Որպէս և նոյն ինքն Բանն Աստուծոյ վկայեաց անհաւան Հրէից՝ ասելով. «Ոչ յօրէնս ձեր գրեալ է. ես ասացի թէ աստուածք իցէք. Իսկ եթէ զնոսա աստուածս ասէ, առ որս բանն Աստուծոյ եղև, և չէ մարթ եղծանել գրոյն»[2], և այլն: Այսպէս ուրեմն եթէ մի է իսկական և ճշմարիտ Բանն Աստուծոյ, յորմէ ընկալեալ ունիմք զսոյն բան և զանանկանութիւն, որ է պատկեր և ճառագայթ նորա, որ և գոլով օրհնեան և բնակարան ինքեան՝ յատկացեալ և զանազանեալ եմք յա-

1 Ա. Կորն. Գ. 16. 2 Յովհ. Ժ. 34.

նասուն կենդանեաց, և կոչեցեալք նմանիք Աստուծոյ և որդիք նորա, պարտիմք մեծաւ հոգունակութեամբ յարգել և պաշտել զոր 'ի մեզ բանն է, որով որդիանամք Հօր Աստուծոյ, զի մի բարձցի 'ի մէնջ հոգևոր ազգեցութիւն նորին. և կորուսեալ զպատիւ որդիութեան՝ հաւասարիցիմք անասնոց անբանից և նմանիցիմք նոցա։ Քանզի Փրկիչն մեր ոչ վասն այլոց իրիք պատճառի հաւասարէ զմեզ ինքեան ասելով, թէ «Լինիցեմ ես առ Հայրն իմ՝ և առ Հայր ձեր, Աստուածն իմ և Աստուած ձեր»[1], եթէ ոչ՝ վասն մասնաւոր հաղորդակցութեան մերոյ ընդ ինքեան Բանին Աստուծոյ. վասն որոյ և յաւուցանելն մեզ զաղօթս՝ հրամայեաց կոչել վստահաբար զԱստուած Հայր մեր։

Արդ՝ եթէ ոչ ըստ արժանւոյն և ըստ պարտաւորութեան մերում պաշտիցեմք զբանն, և եթէ անձնիշխանական կամքս մերով զերկրաւ յածեցուցանիցեմք զնա յառասպելս և 'ի դատարկաբանութիւնս ծախելով, պարտաւոր դատանիմք տալ համարս յաւուրն դատաստանի՝ ըստ վճռոյ Փրկչին մերոյ։ Վասն որոյ և սրբազան առաքեալն Պօղոս հրամայէ, թէ «Լիցին բան տգեղ

1 Յովհ. Ի. 17։

'ի բերանոյ ձերմէ մի ելանիցէ »[1]։ Քանզի բանիւն զոր 'ի մեզ ունիմք՝ պարտիմք միշտ յիշել զանուն Աստուծոյ յամենայն շնչառութեան մերում հոգւով և մտօք. յաղօթս և 'ի փառաբանութիւնս շարժել, և 'ի դատարկաբանութենէ 'ի բաց խորշեցուցանել։ Այ և յառանին իսկ կենցաղավարութեան մերում պարտիմք բանս բարիս և օգտակարս ցանկ 'ի մէջ բերել, որ իցէ 'ի շահ ընկերին և մեզ գլխովին։ Խրատել զմանկունս, ուսուցանել տգիտաց, միսիթարել զգաւորս, սփոփել զվշտացեալս, յուսադրել զաքեալս, հաստատել զդայթադղեալս և շինել զմիտս երկմտելոցն 'ի հաւատս։ Մի բամբասել երբեք, մի վիրաւորել զսիրտ ընկերին. այլ շահել մանաւանդ բանիւ զընկերն՝ որ առաւել քան զմեծամեծ զոհս ընդունելի է Աստուծոյ, և ըստ Աւետարանին՝ մինչև մատուցեալ զպատարագն կանխել 'ի հաշտութիւն ընդ ընկերին։ Յարմարագոյն այսմիկ 'ի մէջ բերել և ոմն 'ի բանաստեղծիցն պարսից՝ ասելով.

Շահեաց զսիրտ քո ընկերին՝ որ ուխտ մեծ է,
Քան զնաւաբ ուխտաւորն՝ սիրտ մի մեծ է.
Զի վայրք ուխտիցն 'ի մարդկանէ են կառուցեալ,
Իսկ սիրտն ինքեան տեառն Աստուծոյ տուն կազմիցեալ։

1 Յոբ. Դ. 29։

Հուսկ ապա պատմել զփառս Աստուծոյ, և քարոզել զօրէնս նորա, և այնպէս ստանալ այնու զարդարութիւն և ազատիլ 'ի դատապարտութենէ. ապա թէ ոչ՝ նոյն ինքն բանն որ 'ի մեզ՝ ամբաստան կացցէ զմէնջ, որով կամ արդարացուք և կամ դատապարտեսցուք ըստ բանի Փրկչին, թէ "Ի բանից քոց արդարացիս, և 'ի բանից քոց պարտաւորեսցիս"[1]։

Դիտել պարտ է նա և, որպէս և ասացաք յերկրորդում մասին, թէ զոր օրինակ մարմինն աճէ, սնանի, զարգանայ և յարբունս հասանէ մարմնական կերակրովք, և գործէ զգործս պատկանեալս մարդոյ 'ի չափ հասակի ժամանելոյ. այսպէս և հոգին՝ սընանի, աճէ, զարգանայ և 'ի կատարելութիւն հասանէ հոգեկան կերակրովք, այսինքն բանիւն Աստուծոյ, որ է իսկական կերակուր և կեանք հոգւոյ, որով զօրացեալ ստանայ զներգործութիւն նորին, և գործէ զարմանալիս ըստ Աստուծոյ։

Ջանասցուք ուրեմն և մեք սնուցանել, աճեցուցանել և 'ի կատարելութիւն հասուցանել աստուածային բանիւ՝ զբանն զոր 'ի

1 Մատթ. ԺԲ. 37։

մեղ ունիմք ըստ վկայութեան Փրկչին, թէ «Հայր որս բանն Աստուծոյ եղև», և այնու կարողանալ գործել զգործս Աստուծոյ նման սրբոց և ընտրելոց արանց, որք հետևելով Բանին Աստուծոյ՝ այնչափ մեծամեծս գործեցին սքանչելիս բանիւ լոկով։ Առաջինն ի նոսա էր Ենովք, որ անդադար յիշելով զանունն Աստուծոյ՝ փոխեցաւ կենդանւոյն մարմնով յերկինս։ Նոյ արդարն ի բանս իւր՝ ընտրեցաւ ի փրկել զազգ մարդկան ի ջրահեղձ պատուհասէն, և ընկալաւ զուխտ հաշտութեան ընդ Աստուծոյ։ Աբրահամ հիւրընկալեալ զԱստուած՝ հայր հաւատոյ անուանեցաւ։ Իսահակ պատարագ հաճոյ եղեալ Աստուծոյ՝ առիթ օրհնութեան ազգաց եղև։ Յակոբ՝ Իսրայէլ այսինքն սիրելի Աստուծոյ կոչեցաւ. ըստ այնմ, «Զ Յակոբ սիրեցի և զԵսաւ ատեցի»[1]։ Յովսէփ ի գերութենէն Իսմայէլացւոց՝ յիշխանութիւն Եգիպտացւոց բարձրացաւ։ Մովսէս ընդ Աստուծոյ խօսեցեալ՝ զանբաւ սքանչելիս գործելով փրկիչ Իսրայէլացւոց կոչեցաւ։ Յեսու զընթացս երկնային շրջանին արգելլ, և զՅորդանան պատուռելով զերկիրն աւետեաց

1 Հռովմ. Թ. 13։

մառանգեաց։ Դաւիթ օրհնաբանութեամբն զԱստուած միով պարսաւաբարիւ զյաղթանդամ սկսին յերկիր տապալեաց։ Հղիա զերկին և զերկիր կապեաց, և արգելեալ զտեղ անձրևոյն՝ զերկիրն ստերջացոյց. միով բանիւ հուր յերկնից իջոյց, և 'ի վերջէ հրեղէն կաւոք 'ի վեր ամբարձաւ. (որոյ 'ի նմանութիւն յորդորէ զմեզ սրբազան առաքեալն Քրիստոսի)։ Հղիսէ իբր ընդ ցամաք անցանէր ընդ հունն Յորդանանու, և զմեռեալս յարուցանէր բանիւ, և երբեմն ևս սկսեալ իւրովք։ Հրեք մանկունքն զհուր հնոցին ցօղով բանի օրհնութեան իւրեանց 'ի վարդապետն փոխարկէցին։ Դանիէլ զբերան առիւծուոյն փակէր, որում և հրեշտակ 'ի սպասս ճաշու մատեալ, զԱմբակումայ վարսիցն ուներլոմ Յերուսաղէմ 'ի Բաբելոնն առաջի բերանոյ գբոյն կացուցանէր։ Հայտիաս հրեղեռատան սասիճանաւ զարեգակնն ընդ կրբուէին դարձուցանէր։ Յովնան 'ի խորոյ ծովու և 'ի փորոյ կիտին արտաքս ելեալ յետ երից աւուրց քարոզէր 'ի Նինուէ։ Հրաշ ամենայն մարգարէք զհանդերձեալսն իբրև զներկայս անվրէպ պատմէին Հոգւովն Աստուծոյ։

Թողից ասել և վասն Փրկչին և Աստու-

ծոյն մերոյ, որ նա ինքն էր Բանն Աստուած որով երկինք և երկիր և որ 'ի նոսա գոյացեալ հաստատեցան։ Իսկ և առաքեալք սաստէին դիւաց և հալածէին. ձեռս 'ի վերայ դնէին հիւանդաց և բժշկէին. և ձեռնադրութեամբ իւրեանց զՀոգի սուրբ բաշխէին։ Բանիւ իւրեանց զկաղս և զանդամալոյծս գնացուցանէին. զկոյրս լուսաւորէին և զբորոտս սրբէին։ Զայնէին ըստ օրինակի վարդապետին իւրեանց, Տալիթա կում, և զմեռեալս 'ի վերայարուցանէին։ Յե ինքեանք 'ի խայթուածոց իժից և 'ի մահացու դեղոց անվնաս զերծանէին. 'ի լեզուս պէսպէս խօսելով մարգարէանային, և զայլ անթիւ նշանս աստուածայինս գործէին։ Այսմանպէս և այլ բազմաթիւ անձինք սրբացեալք և աստուածացեալք, ըստ սրբոյն Կարեկացւոյ, զանբաւ հրաշս գործէին բանիւ և աղօթիւք իւրեանց յիշելով զանուն Բանին Աստուծոյ, որ ըստ օրինակի հոգւոյ բնակեալ է 'ի բանի մարդոյ. որք և աներկիւղայ հաւատով ըզպատկերացեալ բան իւրեանց ընդ իսկական բանին միաւորեալ՝ զնորին ազդեցութիւն և զներգործութիւն 'ի բանս իւրեանց տպաւորին։ Յե զանուստ խոստումն Բանին՝ « Թէ որ հաւատայն յիս, զգործս զոր ես

գործեմ, մեծամեծս և սքան զնոյնս գործեսցե»[1]. և թէ՝ «Որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ բարձիր և անկիր 'ի ծով, եղիցի նմա»[2]. որ և նշանս հաւատացելոց աւանդեաց զսոսա 'ի համբառնալ իւրում յերկինս[3]։ Օ՛ զայսոսիկ և զայլ ամենայն զօրութիւնս բանին ակն յանդիման գործեալ՝ լուսաւորեցին զաշխարհ, փառաւորելով զանուն բանին Աստուծոյ։ Յորոց միոյն երեքտասանիցս անգամ յառնելն 'ի մեռելոց, (որոյ ճշմարտութեան վկայեն ընդհանուր ազգք և ազինք.) բաւական վկայութիւն է վերոյ գրելոցս՝ 'ի հաւատարմացուցանել որոց ունկնախիզ լսելափակ ըստ օրինակի թուղթի Ճարտարի ապստամբ 'ի ճշմարտութենէ բանիցս կոչեն։ Զի նա իսկ է բազմաչարչար նահատակն և յաղթող վիկայն Քրիստոսի՝ սուրբն Գրիգորիոս լուսաւորիչն Հայաստանի աշխարհիս։ Որոյ անդադարեալ և կենդանի աղօթիցն օժանդակութեամբ լուսաւորեալ ազգ իւր՝ եկաց մնաց մինչև ցայսօր ժամանակի 'ի հաւատս ուղղափառութեան. և կացցէ մինչև ցդ ալուստ փեսային եկեղեցւոյ իւրոյ։ Նորին տատուա-

1 Յովհ. ԺԴ. 12։ 3 Մարկ. ԺԶ. 17։
2 Մարկ. ԺԱ. 23։

ծահաձոյ բարեխօսութեամբն մինչև ցայսօր ոչ ոք երևեցաւ յազգիս աղանդապետ և ոչ հերետիկոս. ակն ունիմք զի և ոչ իսկ մինչև ի կատարած աշխարհիս երևեսցի։ Եւ եթէ սխալեցան իսկ, այլ նոքա մասնաւորք ոմանք էին, և փութով ուղղեցան, և կամ ի զեղջ եկեալ դարձան վերստին յուղղութիւն. որպէս և վկայեն ընդ հանուր պատմիչք ազգայինք և օտարազգիք։ Այլ մեք բուռն հարցուք վերստին զկարգ բանիցս։

Արդ՝ այս ամենայն աքանչելագործութիւնք զբոս համառօտաբար ի վեր անդր գրեցաք, ոչ այլով իւիք՝ բայց եթէ նախ ուղիղ և ճշմարիտ ճանաչմամբ Աստուծոյ և անձին լինին, և ապա կատարեալ հաւատով, աներկբայ յուսով, և ջերմեռանդն սիրով, որ են անխախտելի հիմունք աստուածային իմանալի տաճարի, և անսաստբիւր շուխդք երկնային Ժառանգութեան։ Քանզի առանց այսց հիմանց ի կամել թերահաւատին գնալ ի վերայ ծովու աշխարհիս, անկանի ի վտանգ խորասոյզ կորստեան. որոյ և յաղաղակելն՝ Տէր օգնեա ինձ՝ զի ահա ընկղմիմ, ոչ լսէ նմա Աստուած, բայց եթէ իբրև զՊետրոսն այն պարզամիտ իսկ և գիտակ բանին Աստուծոյ։ Քանզի որ չունի

զուշիլ և զկատարեալ ծանօթութիւն բանին Աստուծոյ՝ է՛ ի համարի անասնոց. իսկ անասունք գոլով անկատարք, և չունելով հաղորդակցութիւն և համակրութիւն անձամբ ընդ Աստուծոյ, ոչ երբէք կարեն լինել ճշմարիտ անօթ և օթարան Բանին Աստուծոյ։ Այլ ոչ իսկ ունելով կատարեալ հաւատ, աներկբայ յոյս, և ջերմեռանդն սէր, ոչ կարեն ունել և ոչ վերատին ծնուանդ. ուստի և գոլով մարմին ըստ՝ ոչինչ կարեն գործել հանգոյն սրբոց և համեմատիլ նոցա։ Վասն զի անասնական կենդանութիւնն համաբազդատեալ ընդ յաւիտենական հոգևոր կենդանութեան՝ ոչինչ զանազանի ի մեռելութենէ, զի նա վայրենական է և ոչ յաւիտենական. ուստի և որք այնպէսն գնան, կենդանւոյն մեռելք համարին. վասն որոյ և ոչ զօրեն գործել զԱստուծոյ զգործս և զկենդանեայս։ Բանդի Աստուած ոչ է Աստուած մեռելոց՝ այլ կենդանեայց. զի է նա իսկապէս կեանք և կենդանութիւն։ Այլ արդարեւ մեռելք են նոքա որ ուրանան զզօրութիւն և զվարդապետութիւն Բանին Աստուծոյ, որով կեամք, շարժիմք և եմք՝ ըստ Առաքելոյն [1]։

1 Գործք. ԺԷ. 28։

Այս թողցուք մեռելոց թաղել զմեռեալս իւրեանց, և մեք փութացուք զՀետ բանին Աստուծոյ. և հաւատալով բանից նորա՝ ընծայեսցուք նմա զանս մեր օրհնութեամբ և փառաբանութեամբ և աղօթիւք, զի կարասցուք լինել բաւական ընդունել զազդեցութիւն բանին Աստուծոյ. որով և միաւորեալ ընդ նմա՝ ազատասցուք ի համարս տալոց, և մի գտցուք պարտաւոր ի զուր վատնելով մեր զբան նորա որ բնակիւեալն է ի մեզ. որ և նոյն Բանն աստուածային հեղցէ զշնորհս և զներգործութիւն իւր՝ ի բան և ի հոգի և ի մարմին մեր. ամէն։

ՑԱՂԱԳՍ ԴՆՆԴԵԱՆ ԿԵՆԴԱՆԵԱՑ

«Եւ օրհնեաց զնոսա Աստուած։ և ասէ. աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր։ և տիրեցէք զնա։»
ԾՆՆԴ. Ա. 28.

«Եթէ ոչ որ ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ։ Զի ծնեալն ի մարմնոյ՝ մարմին է, և ծնեալն ի հոգւոյ՝ հոգի է»։ ՅՈՎՀ. Գ. 5. 6.

ԱՄԵՆԱՅՆ մարմին ենթարանեալ, որոյ է աճումն և ընձիւղումն, է ենթակայ ծնընդեան, որով և բազմանայ ի սեռ և ի տեսակ։ Բայց ըստ որում յերիս թագաւորութիւնս կամ յընդհանուր սեռս բաժանին ամենայն ենթարանեալ մարմնեղէն էակք, այսինքն յերկրայինս, ի բուսականս, և ի կենդանականս, վասն որոյ և յերիս զանազանին ծնունդք նոցա։ Զի այլ է ծնունդ երկրայնոց, այլ բուսականաց, և այլ կենդանականաց. որք և բազում զանազանութեամբ տարբերին ի միմեանց։

Երկրայինքն ծնանին յերկու երիսի, որ է արգանդ նոցա իգական. որոյ և իբր սաղմնածին խոնաւութիւն՝ ծառայէ սեռական

սերմին ընդ հանուր մարմնեղէն ենթարանեայ գոյացութեանց, որք գոյանան ի սկզբնաւորական սկզբանց, այսինքն ի բնական ծծմբոյ, ի բնական սնդիկ, և ի բնական աղէ, (և ոչ ի հասարակէ.) որք ունին զանկիւղն իւրեանց ի չորից տարերաց, և են սկզբունք այլոց տարբերղէն մարմնոց. վասն որոյ և կոչեցան սկզբնաւորական սկզբունք, որոց և գոյացութիւն է օրինակ զայս։ Հուրն բաղխելով ընդ օդոյ՝ յառաջ ածէ զբնական ծծումբն։ Օդն բաղխեալ ընդ ջրոյ՝ ծնանի զբնական սնդիկն. և ջուրն բաղխելով ընդ հողոյ՝ յառաջ ածէ զբնական աղն։ Իսկ հողն ոչ բաղխելով ընդ ումեք՝ մնայ իբր արգանդ նոցա։ Բանզի ծծումբն ի ձեռն օդոյ մըտեալ յերկիր՝ միացեալ և եփեալ ընդ աղի՝ լինի հաստատուն ծծումբ, և ըստ ոմանց՝ հոգի։ Սնդիկն և սնդիկն ի ձեռն ջրոյ մտեալ ի հող, միացեալ ընդ աղի և եփեալ՝ դառնայ ի հաստատուն սնդիկ, որ և ըստ ոմանց կոչի՝ դոլորշի։ Այս սոքա միացեալ ընդ միմեանս, և եփեալ ի ձեռն կեդրոնական ջերմութեան երկրի, մակարդին և լինին մածուցիկ և իւղալի հեղուկ ինչ հիւթ մաքուր, ունելով զզօրութիւն հաստատուն ծծմբոյ՝ սնդկի և աղի. և կոչին ի փիլիսո-

փայլից՝ ընդհանուր սերմն, և կամ ծծմբա-
զանդկեայ զօրութիւն։ Որոյ 'ի հանդիպել
յերակս հողոյ իւրաքանչիւր յատուկ սերման
երակականաց կամ բուսականաց, (զորս 'ի
ստեղծանել Աստուծոյ պարգևեաց նոցա յա-
տուկ սերմ ըստ սեռի և ըստ տեսակի իւ-
րեանց), գոյանալոյ 'ի նոսա. իբրու թէ յա-
տուկ սերմն իցէ ինչ խմոր, որոյ խմորեալ
զգանգուածն՝ գոյանալոյ յինքեան զբոլորն 'ի
ձեռն կենդանական զօրութեան զոր ունի 'ի
բնուստ։ Արդ՝ այս սերմն ընդհանուր՝ զորդ-
մամբ կեդրոնական ջերմութեան՝ յանցանել
իւր ընդ երակային արգանդ հողոյ, որում
սերման և հանդիպիցի՝ զնոյն կերպարան ըն-
դունի, և գոյացեալ 'ի նոսա՝ ծնանի և յա-
ռաջ ածէ զմետաղական սեռս ըստ յարմա-
րութեան և ընդունակութեան կամ զօրու-
թեան արգանդիցն։

Այս այսպէս գոյանան 'ի մէջ երակաց հո-
ղոյ ընդհանուր հանքային մարմինք, թէ հա-
սարակ ծծմբոյ իցէ, թէ հասարակ անդիր,
և թէ հասարակ աղի. և կամ ադամանդից,
ականց պատուականաց և ամենայն տեսակ
քարանց և զանազան աղից, պազեղից, զա-
ռեկաց, մագնիսի և այլոց բազմաց։ Այս-
նապէս և ամենայն հրահալելիք, որոց զա-

նաղանութիւն, կամ ցածութիւն և բարձրութիւն աստիճանաց որպիսութեան նոցա պատճառաւ 'ի մաքրութենէ և յանմաքրութենէ, 'ի ջերմութենէ և 'ի ցրտութենէ, 'ի գիջութենէ և 'ի չորութենէ, կամ 'ի խառնուածոց երակային արդանդից, ըստ տեղւոյն և ըստ զանազան զորութեան և ներգործութեան նոցա, զորոց մի ըստ միոջէ աստէն ճառել ոչ 'ի դէպ վարկանիմ, քանզի կէտ մտաց իմոց յայլ իմն ածել դբեզ 'ի նրպատակ փութայ, 'ի կրթութիւն անձինդ, և ոչ յայսոսիկ 'ի զուր դեգերել. նա զի՝ եթէ կամիցիս, հնար է քեզ 'ի գրոց բնախոյզ իմաստասիրացն ուսանել, որք ընդարձակապէս ունին գրեալ։

Օ՛նուն բուսականաց լինի այլազգ, որք յայնագոյնս ևս տեսանին քան զերբակականացն։ Այրական զորութիւն նոցին են հատք կամ սերմանք իւրեանց, որոց անկեալ յերկիր, որ է իգական արդանդ նոցա, որք նանին հիւթով ընդհանուր սերմանն, որ 'ի ձեռն ջրոյ տարածեալ գտանի ընդ ամենայն մասունս հողոյ, զոր և ծծելով կենդանական զորութեամբ իւրեանց, ածեն և բաղրոջեն. և 'ի վեր բարձրացեալ յերկրէ՝ առնուն նա և յօդոյ զհարկաւոր պէտսն և օգնութեամբ

կեդրոնական ներքին ջերմութեան և արտաքին ջերմութեամբ արեգական հասանելն 'ի կատարելութիւն ըստ սեռի և ըստ տեսակի իւրեանց։

Իսկ կենդանականացն ծնունդ մեծապէս զանազանի 'ի սոցուանց, և է յաղագս աղգս եղանակաց։ Վանդի իւրաքանչիւր կենդանական տեսակք ըստ սեռի և ըստ տեսակի իւրեանց ունին յատուկ և սեփական արդանդ, ուր ըստ կարգադրութեան բնութեան արկեալ արուաց զսերմ իւրեանց, և արդանդքն միաւորեալ զնոյն ընկալեալ սերմն ընդ յատուկ և տեսակական սերմանց իւրեանց՝ ամփոփեն զնոսա յինքեանս, և սընուցեալ ընդ հանրական սերմամբ՝ զոր ունին յարդանդի իւրեանց ընկալեալ 'ի ձեռն կերակրոց և ըմպելեաց, աճեցուցանեն և պահպանեն բնականաբար մինչև ժամանելնոցա 'ի կատարելութիւն տեսակին, և ապա ըստ ներգործութեան բնութեանն ծնանին 'ի ժամանակին։ Իւր այսպէս բազմացուցանեն զտեսակ իւրեանց այլ և այլ ծնդակաւորութեամբ։ Վանդի այլ է եղանակ ծնդեան ջրային կենդանեաց, և այլ օդականաց, այլ սողնոց և մեղուաց, և այլ չոքքոտանեաց և երկոտանեաց. և ամենեքին սաքա կոչին ծը-

նունդ և օրհնութիւն Աստուծոյ, բան այնրմ, «Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր»։

Սակայն գիտելի է զի ծնունդք մեռաւ զակամայ և բուսականաց լինին պատահմամբ և ի ձեռն շարժման բնութեան. իսկ ծնունդք կենդանեաց՝ ի շարժմանէ արեան, և բան մեծի մասին ի կամաց. և այս աւաւելապէս բանականաց է. վասն զի անբանք բնականաբար վառեալ ի ջերմութենէ արեան ի ժամանակի խիզք և ի ցանկական շարժմանց, արշաւեն ի վերայ իգայ առ ի շինուցանել զբորբոքեալ հուր ցանկութեան իւրեանց, ոչ ինչ փոյթ ունելով զկորստենէ սերմանն, որ ի բազմացուցանել և եթ ըստեսակ իւրեանց պարգևեցաւ Աստուծոյ. վասն որոյ ի պատահիլ իւրեանց ի բորբոքցանկութեան սիահուն այլատեռ իգի, յարմար անդամոցն գտեալ՝ անխտրաբար մերձեալ խառնակին։ Այլոց մարդն ոչ շաղաշարի երբեք ընդ այլատեսակ կենդանիս, և ոչ վայրապար և յանպատեհ տեղիս զսերմն իւր արկանէ, բան երկուց որդւոցն Յուդայի որ ընդ Թամարայ, որք և պատժեցան Աստուծոյ [1]. այլ կամաբ և դիտաւորութեամբ

1 Ծներ. ԼԸ. 8։

բաղմացուցանելոյ զտեսակ իւր՝ որոնք յարմար և պատշաճագոյն արգանդ իւրոյ տեսակի մեծաւ զգուշութեամբ, այսինքն խնդրելով ինքեան կին ըստ պատկանելոյ իւրում ասպիճանի. և ոչ ըստ օրինակի որդւոցն Աստուծոյ, որք մոլեալ 'ի գեղեցկութիւն դստերաց մարդկան՝ (այսինքն մարմին եղելոց) առին ինքեանց կանայս անտի. ըստ այնմ, «Տեսեալ որդւոցն Աստուծոյ զդստերսն մարդկան զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին»[1]։ Որք և կորուսին զորդիութիւն Աստուծոյ և ըզհոգին, վասն որոյ և ասաց Աստուած. «Մի մնասցէ ոգի իմ 'ի մարդկանդ յայդմիկ վասն լինելոյ զոսցա մարմին». ուստի և արժանի եղեն ջրահեղձոյց կորստեան։ Այլ խնդրեսառնուլ կին 'ի դստերացն Աստուծոյ, այսինքն զի իցէ գիտուն, համեստասուն, հեզ, խոնարհ, ողջախոհ, և առաքինի. ընդ որում և ըստ աստուածային հրամանին արդար օրինօք մերձաւորեալ զուգակցի 'ի պատեհ ժամանակի, և յարուցեալ զաւակ ընդունի զօրհնութիւնն Աստուծոյ, որ շնորհեցաւ ինքեան 'ի ստեղծման իւրում՝ յասել Տեառն.

1 Ծնն. Զ. Զ։

«Ընդունեցէք և բաղմանայարուք և լցէք զերկիր, և տիրեցէք դմա»։ Վասնզի այս է օրհնութիւն Աստուծոյ, որպէս յայտ է իմաստուն մտաց, և արդարութեան պարգև. իսկ այլաբանօրէն՝ ծառ գիտութեան բարւոյ և չարի զօրէն կերակրոյ, որ տայ կեանս ծնընդեամբ, և մեռուցանէ անկարգ գործածութեամբ, ըստ օրինակի կերակրոյ՝ որ է պարգև ողջմտութեան և ծառ գիտութեան բարւոյ և չարի, իմա առիթ մահուան և կենաց, որպէս և ասացաւ յերկրորդում մասին։ Վիտէ ևս, եթէ սա է պատուական և ամբողջման անձին իւրում, թէ և իցէ փոքրագոյն քանակաւ. վասն որոյ և արդարութեամբ ածէ 'ի գործ, և ոչ ինչ մեղանչէ, այլ մանաւանդ եթէ գործէ զարդարութիւն, որպէս և սրբազան առաքեալն Պօղոս վկայէ. «Պատուական է ամուսնութիւն, և սուրբ անկողինք»[1]։ Յաւ առաւել ևս յայտնելով զպատուականութիւն սորա՝ ասէ. «Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ 'ի Քրիստոս և յեկեղեցի»[2]։ Վասնզի որպէս Քրիստոս եկեղեցեաւն ծնանի զորդիս արքայութեան ըստ հոգւոյ, նմանապէս և ա-

1 ՅԷբրայ. ԺԳ. 4։ 2 ՅԷփես. Ե. 32։

մուսինք ծնանին զպատակերս և զնմանիս Աստուծոյ ըստ բնութեան. և զի՝ սոքա նախ ծնանին ըստ մարմնոյ՝ մարմնով, և ապա Քրիստոս ծնանի ըստ հոգւոյ՝ հոգւով։

Այհ կուրութեան մերոյ, որք զհոր-հուրդս զայս, որ է առաջին և գլխաւոր հիմն և կեդրոն եօթանց սեանց սիւներուն և տաճարն Աստուծոյ, կամին բառնալ 'ի միջոց առաջ ինչ համարելով։ Բայց չդիտեն զոր խօսին և ոչ իսկ կարեն նկատել, եթէ բարձմամբ խորհրդոյս՝ 'ի հիմանց տապալեալ կործանի բարոյական շինուած կարգադրութեան կենաց մարդկային տեսակի։ Զանազն 'ի բառնել սուրբ և օրինաւոր ամուսնութեան, ո՞ր այնուհետև կարիցէ ճանաչել զորդիս իւր, և ո՞ կրթեալ զարգացուցանիցէ 'ի չափ հասակի պատանեկութեանն։ Այնոյն. այո՛ պարտաւորութիւն մարդոյ է սնուցանել և զարգացուցանել զորդիս իւրեանց. որոյ վասն և արարան և կեան վասն որդեծնութեան. բայց և ինքեանք սղջրմելիք են և կարօտք ընդունելոյ զսնունդ յարանց իւրեանց։ Ա՞զնոսա կրթէր յիմաստս և յիմացականութեան. քանզի մարդ ո՛չ է տուեալ զսոյն, ըստ որում՝ ինքեանք իսկ պէտս ունին հրահանգելոյ յուսման և յօրէնս տեառն, նա զի

և առանին զբաղանք և մարմնաւոր հոգք մանկանց ջոան Թոյլ և 'ի հոգևորն զնոսա մարզել։ Եւ բազումք ևս 'ի մարց առ չկարուսանել զՀանգիստ իւրեանց՝ և 'ի կարևոր պարտիան իսկ իւրեանց Թերանան, 'ի ծընանել մանկանն յանձնելով 'ի ձեռս սարնտուց դիեցուցանել զնա անհարազատ կաթամբ, որով և զհարազատութիւն զաւակացն կորուսանեն. ինքեանք զհետ լինին փափիակեցութեան, զարդուց և զբօսանաց, ոչ ինչ հոգալով զզաւակացն. որով առ ոտն հարկանի պատիւ ամուսնութեանն և հարազատութիւն սերնդոցն. նուազի օր ըստ օրէ աստուածպաշտութիւն և հոգևորացն փոյթք, և դառնան մարդիկ կրկին 'ի մարմին ըստ օրինակի որդւոցն մարդկան որ յառաջքան զբրհեղէն, զոբս և յանդիմանէ Փրկիչն մեր։ Իսկ եթէ խստաբառնային օրէնք ամուսնութեան, ոչ այնուհետև սէր, և գութ ծնողական, աղգականութիւն, ցեղակարգութիւն, բարեկամութիւն, ժողովուրդ, աղգ և պետութիւնք, տերութիւնք և թագաւորութիւնք։ Ոչ ասպաբէն լինէին ամենեքին վայրենիք և գազանք ամենիք և դիշատիչք զմիմեանս։ Ուր մնային իրաւունք արդարութեան և դատաստանի, վարժք ի-

մաստուԹեան և մակացուԹիւնք արուեստից, գիտուԹեանց, և պատմուԹիւնք դաբուց և ազգաց։ Արուեստական հնարագիտուԹիւնք և քաղաքական հանդէսք և քաղաքացը վայելչուԹիւնք, յորս զուարճացեալ մարդոյ զբօսնու և վայելէ յերջանկուԹեան ընկերակցուԹեամբ ընտանեացն և բարեկամաց։ Մանաւանդ յորժամ տեսանէ զհամեստ և զառաքինի կին իւր որպէս այդի վայելուչ յանկիւնս տան իւրոյ, և զորդիսն որպէս զնորատուն ձիթենւոյ շուրջ զսեղանովն, քանի՛ քաղցր բերկրուԹեամբ ոչ զբաւարճանաց սիրտ իւր։ Այս երանի՛ առն՝ որում է վիճակեալ երջանկուԹի այս օրինակ կնոջ աղնուոյ, զոր կրէ իբրև պսակ ի գլուխ իւր, և սիրով կապակցեալ կան հանդերձ երկիւղիւն Աստուծոյ. յորս հանդչի օրհնուԹիւնն աստուածային, որ լծորդեալ զայր և զկին ի մի մարմին խորհրդաւոր, պսակէ զնոսա քաղցրուԹեամբ և բարեսերուն զաւակաբ։

Իսկ եԹէ չէր այս խորհուրդ սուրբ ամուսնուԹեան, մարդիկ վատԹար քան զանասունս լինէին։ Վասն որոյ և Աստուած նախ քան զամենայն զսոյն անճառելի խորհուրդ հաստատեաց՝ արու և էգ առնելով զնոսա. և հրամայեաց առն Թողուլ զհայր

և զմայր և երթալ զհետ կնոջ իւրոյ, և լինել երկոքին ի մարմին մի. և կնոջ պատուիրեաց ասելով. «Ա՛ռ այր քո դարձ քո», որպէս զի հաւատասցի եթէ ոչ է ս են երկու՝ այլ մի մարմին. զի ի միաւորութենէ երկոցունցն գոյանայ նորածին անհատն։ Այդ՝ մեք խոյս տուեալ յերկարաբանութենէ, և թողեալ զնոսա որք անարգենն զամուսնութիւն՝ ի մոլորութեան իւրեանց, դարձցուք ի բնաբան մեր, թէ մարդն արդարութեամբ և զգուշութեամբ վարի ի պաշտօնս յայս։

Այլ արդ ասիցես ինձ սրդեակ, թէ ո՞ր գտանիցի այժմ հայր՝ այդպիսի մարդիկ, զորս ի զուր աշխատիս ցուցանել։ Այո՛, հաղիւուրեմն արդեօք գտանիցի. այլ ես խօսիմ զմարդոյ՝ որ է հայելի Աստուծոյ, և Աստուած ի նմա պայծառանայցի. և ոչ զմարդոյ անասնացելոյ, որ թէպէտ ի պատկերի մարդոյ շրջի, բայց բուսով բարուցն ոչ որոշի յանասնոյ։ Վասնզի մարդն անասնացեալ ոչ զԱստուած ճանաչէ և ոչ զանձն իւր և ոչ զզօրութիւն սերմանն իւրոյ, վասն որոյ և վայրապար վասնէ զնոցն յանպատեհս, անարգելով զօրհնութիւնն Աստուծոյ։

Իսկ այր կատարեալ պարտի ճանաչել

զսոյն և գիտել եթէ է ամբողջական, կենդանի, պատուական և նուրբ մասն բովանդականձին իւրոյ, շարժեալ յերևակայութենէ հոգւոյն և 'ի բոլոր մեքենայէ մարմնոյն։ Ասացաւ՝ ամբողջական և կենդանի մասն. ամբողջ՝ զի ամբողջապէս յառաջ բերէ զանհատն օգնականութեամբ իւրոյ օգնականի. քանզի երկոցունց սերմն 'ի մի համանթուի, որք ըստ երևութին թէպէտ երկու ցուցանին արտաքուստ, բայց ըստ բնութեան գոլով մասն միմեանց՝ 'ի ներքուստ ոչ են երկու, այլ մի՝ ըստ բանիցն Աստուծոյ։ Կենդանի, զոր ոչ ոք կարէ ժխտել. զի ո՛ երբէք եւ տես 'ի խարշեալ ցորենոյ բուսանել հասկ, կամ 'ի ձուոյ եփելոյ ծնանել ձագուց։

Ասացաւ և պատուական. քանզի սերմն ամենայն իրաց ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ ծուծն բոլոր անհատին ջերմութեամբ և գիջութեամբ կապեալ. որ և ըստ ամենց ասի օդ սառուցեալ, ոչ ցրտութեամբ և չորութեամբ, այլ չափակշիռ ջերմութեամբ և գիջութեամբ։ Ըստ որում ջերմութիւն և գիջութիւն ըստ վճռոյ բնաշնին իմաստասէրքաց՝ պատճառեն զկենդանութիւն, որպէս է արիւնն. իսկ ցրտութիւն և չորութիւն պատճառեն զմահ։

Արդ՝ սերմն ամենայն էակաց գոլով բնական աբար ջերմ և գիձին, է առիթ և անօթ կենդանութեան. և զի չէք ինչ պատուականագոյն քան զկենդանութիւն, ապա պատուականագոյն է և անօթն որ բնականաբար կրէ յինքեան զպատուականագոյնն։ Ուստի և առ այս միտ ասէ սրբազան առաքեալն Պօղոս. «Արմօթոյքն մեր առաւել ևս պարկեշտութիւն ունին»[1]։ Զմանաւանդ և Աբրահամ վասն Խահակայ 'ի վերայ երանելոյ իւրոց երդմնեցուցանէր զԵղիազար, առ 'ի յուցանել զնորին պատուականութիւն։

Արացաւ ևս՝ եթէ է նուրբ մասն. քանզի սերմն կենդանեաց է 'ի նուրբ և 'ի մաքուր արենէ նոցա գոյացեալ. նախ 'ի սպունգս քներակաց, և ապա այլայլեալ և եփեալ յամորձիս նոցա, դառնոյ 'ի սերմն, և զարտաքին կարմրութիւն արեանն 'ի ներքս ամփոփեալ, ներքին սպիտակութիւնն անդրադարձեալ արտաքս։ Իսկ յետոյ կրկին փոփ և եփի յարդանդի իգին, որոյ սերմանն բնութիւն գոլով առաւելագոյն մասամբ հով և գիձին, ունի զօրութիւն սաղմնական իւրով խոնաւութեամբ փոեցուցանելոյ զսերմն ա-

1 Ա. Կրդ. ԺԲ. 23։

բական, որ գոլով առաւելագոյն մասամբ ջեր-
բամ և չոր՝ փոխ 'ի նմին հանգոյն սերման որձի
'ի մէջ ձուոյ. և կրկին սպիտակութիւն իւր
'ի ներքս ամփոփեալ զնախկին կարմրութիւն
առաւել աղդու ներգործութեամբ արտա-
գրէ արտաքս։ Ուստի և 'ի փիլիսոփայից կո-
չեցաւ՝ կարմիր ծծումբ բնական, և յանդ-
բաշրջելն՝ սպիտակ անդիկ բնական. որուամ
և բաղում գովութիւնս ընծայեն յայս աս-
տիճան հասեալ սերման, որոյ և 'ի լինելն կա-
տարեալ՝ կոչի Մարդն փիլիսոփայից։

Այդ՝ եթէ անգիտացեալ ումեք զայս
ամենայն ոչ շարժիցի յայսմիկ արդարու-
թեամբ և ըստ աստուածադիր օրինաց, վը-
նաս անձին իւրում գործէ։ Դպիս՝ կարձէ
զկեանս իւր, որպէս 'ի վեր անդր ասացաւ՝
եթէ հանգոյն կերակրոյ առթէ և սա զմահ
մինչ անկարգաբար 'ի գործ ածի. քանզի տր-
կարացուցեալ և 'ի պէսպէս ցաւս վարակեալ
և ապականեալ զարիւնն՝ պատճառէ զմահ
կանուխ. վասն որոյ և սրբազան առաքեալն
Պօղոս ասէ. «Որ պոռնկի՝ յիւր մարմինն մե-
զանչէ»[1]։ Այրկրորդ՝ աղտեղէ զանձն իւր և
զհոգի՝ անձնամատն լեալ 'ի սէր և 'ի հեշ-

1 Ա. Կրն. Զ. 18։

տութիւն մարմնոյն վավաշոտ տուփանօք, և խոշընդոտն լինի անձին սլանալ ի բարձր աստիճան կատարելութեան, և մնալ մաքուր յաշխարհային աղտից. վասն որոյ և ոչ կարէ ընդ հոգւոյն կապակցեալ միաւորիլ Աստուած ամենամաքուր։ Վասնզի մաքրութիւն և աղտեղութիւն հակակիրք միմեանց գոլով, ոչ երբէք կարեն միաւորիլ։ Ուստի վերն առաքեալն ասելով. «Ոչ պտղնիկք... ոչ շունք... զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն»[1]. վասն զի գոլով պղծեալք և աղտեղեալք օտար սիրով մերժին ի սիրոյ աստուածային դերազանց մաքրութեան. զի որ ինչ աշխարհի և մարմնոյ է՝ թշնամութիւն է առ Աստուած[2]։ Որոյ դեղ և սպեղանի առողջարար ոչ այլ ինչ՝ եթէ ոչ զղջումն, ապաշխարութիւն և դառնահոսան ջերմ արտասուք աչաց, որովք և շնորհիւ և օժանդակութեամբ մարմնոյ և արեան Փրկչին մերոյ ընդունիմք զմաքրութիւն հոգւոց մերոց։ Քանզի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց հաւատացելոց բաշխի և ոչ անհաւատից։

Լուրակցուցանեմք ապա, եթէ մեծա-

1 Ա. Կորն. Զ. 9։ 2 Յակ. Դ. 4։

պէս զգուշութեամբ պարտէ մարդոյ՝ի գործ արկանել զսոյն, որպէս և արժանն է մարդկային տեսակի իւրում, և ոչ վարիլ անանձնաբար, զի մի փոխանակեսցէ զօրհնութիւնն Աստուծոյ ընդ անիծից։ Զանգի յօրհնելն Աստուծոյ զմարդ՝ աճումն և բազմացումն պարգևեաց նմա. իսկ յանիծանելն՝ զմահ և զապականութիւն սպառնացաւ։ Արդ՝ որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զոր ինչ ըստ բաւականին զմարմնական ծննդենէ խօսեցայ. արդ զհոգևորէն ասասցուք։

Ոչ է բաւական մարդոյ առ՝ի մտանել յաբբայութիւն՝ միայն մարմնական ծնունդն, որ լինի՝ի գիջութենէ և՝ի ջերմութենէ սերման ըստ ընթացից բնութեան, որպէս վերագոյնդ ասացաւ. քանզի մարմին է տակաւին՝ և ըստ մարմնոյ և եթ ծնեալ. այլ պարտ է նա և վերստին ծնանիլ՝ի հոգւոյ, և լինել հոգի, զի կարող լիցի մերձենալ և միաւորիլ ընդ Աստուծոյ՝ որ է զուտ հոգի. վասն զի մարմնին յայնժամ միջոցաւ անձին միանայ ընդ հոգւոյն, և անձն՝ի ձեռն հոգւոյ միաւորի ընդ Աստուծոյ՝ նուրբ և ոգեղէն մարմնովն առեցելով։ Վասն որոյ և Փրկիչն մեր վարդապետեաց Նիկոդիմոսի յասելն. «Լցեալ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տե-

սանել զարքայութիւն Աստուծոյ »։ Որոյ ոչ կարելով խելամուտ լինել զօրութեան բանին՝ կրկնեաց մեկնելով զբանն. « Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ։ Զի ծնեալն ի մարմնոյ՝ մարմին է, և ծնեալն ի հոգւոյ՝ հոգի է »։ Այսինքն, եթէ ոչ ծնցի նախ ի ջրոյ մարմնոյ, իմա ի սերմանէ, և ընկալեալ զՀոգին բանական կամ զտեսակն մարդկային՝ ոչ լինցի մարդ, և ապա ի հոգւոյն ծննդեամբ՝ զՀոգին Աստուծոյ ընկալեալ ոչ լինիցի հոգի, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ։ Եւ առ ի քաջ ևս յայտնել նմա զծնունդն հոգևոր՝ վճռեաց ասելով. « Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերստին ի հոգւոյ, (առանց յիշելոյ ասէն զի ջրոյ ծընունդն,) ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ »։

Իսկ այս ծնունդ հոգևոր՝ զոր ընկալաք ի սուրբ Աւազանէն, ոչ այլով իւիք ազգէ ի մեզ գներգործութիւն իւր՝ եթէ ոչ յաւելլով ի նմա զկատարեալ և զանեղիցոյ հաւատս. որպէս խնդրէին առաքեալքն ասելով ցՏէր. « Յաւել մեզ հաւատս »[1]։ Զանգի

1 Ղուկ. ԺԷ. Ե։

հաւատն է միայն պատճառ վերստին ծնընդեանս այսմիկ. ըստ այնմ, «Որոց հաւատացն յանուն նորա. զոք ոչ յարենէ և ոչ ի կամաց մարմնոյ, և ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան։ Իւր բանն մարմին եղև, և բնակեցաւ ի մեզ»։

Այս ուրեմն սրդեակ իմ, յուշի կապեա զբան Տեառն՝ որ ասէ. «Օտառայ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ, և ոչ պատրաստեացի ըստ կամաց նորա, արբցէ գան բազում»[1]։ Արդ՝ հաւատեաւ գիտելով մեր զկամս Տեառն մերոյ, որ կամի զի ուղիղքն զկեանս յաւիտենական, ըստ այնմ. «Ոչ կամիմ զմահ ամբարշտին, որպէս զդառնալ նորա ի չար ճանապարհէ իւրմէ և կեալ»[2], և թէ. «Իս եկի զի զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին»[3]. և այլուր. «Կամիմ զի ուր եմն իցեմ, և դուք անդ իցէք... զի ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք»[4]. և այլն։

Ուրեմն ջանասցուք ամենայն յօժարութեամբ սրտից և կամաց մերոց զհետ երթալ հրամանի կամաց Արարչին մերոյ և հեղինակին բնութեանս, որպէս զի վերստին

1 Ղուկ. ԺԲ. 47։ 3 Յովհ. Ժ. 10։
2 Իզեկ. ԼԳ. 11։ 4 Յովհ. ԺԴ. 3. 19։

ծննդեամբ ստացուք բան հոգւոյ զկեանս յաւիտենականս, որ լինի Ճանաչելով զԱստուած և զորդին նորա Յիսուս Քրիստոս, ըստ այնմ. «Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն Ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս»[1]։ Եւ յետ ծննդեան պարտիմք սնուցանել և զարգացուցանել զնորածին հոգիացեալ տղայն անձն մեր բանիւն Աստուծոյ և առաքինական գործովք, զի ժամանեսցէ ի չափ հասակի կատարելութեան իւրոյ։ Այլ և պարտիմք հրաժարիլ յաշխարհային պատրող վայելչութենից և ի մեռեալ փառացն դիւրեղծական՝ յաղթելով չարահնար նիւթից փորձողին, որ դրդէ զմեզ քարանցն ի հաց փոխարկելով հակիլ ի հեշտալից կամս մարմնոյ. ի վայր հոսմամբ ի բարձուէ աշտարակին՝ փորձել զԱստուած ի հաւատս, այսինքն երկմտիլ և դայթակղիլ։ Եւ ցուցանելով ի բարձրաբերձ լեռնէ մեծամեծութեան զփառս և զփարթամութիւնս աշխարհիս, յորդորէ զմեզ հեռանալ ի սիրոյն Աստուծոյ և զնա ինքն պաշտել։ Ջանայ ևս հանգոյն սերման հատից սերմանահանին արկանել

1 Յովհ. ԺԷ. Ց։

զմեզ յասպառաժի՝ 'ի ճանապարհի և 'ի փոշ-
ոյլից երկրի, և անպտուղ առնել։ Իսկ մեր
դիմամարտելով փորձողին հնարից յարձակ-
մանցն 'ի մեզ՝ անկցուք յերկիր բարի և պա-
բարտ և լիցուք պտղաբեր, այսինքն զմայ-
լեալ սիրովն Աստուծոյ և 'ի բովանդակ կեա-
նս մեր խնդրելով միայն զարքայութիւնն
Աստուծոյ։ Այս և աղօթիւք և օրհնութեամբ
և երգովք հոգևորք անդադար փառաւո-
րելով զանուն ամենասուրբ Երրորդութեան
և միոյ Աստուածութեան, յարատևեսցուք
'ի գործս բարեաց և առաքինութեան, և մի
յետս դառնալով փոխարկիցիմք յարձան ա-
զի ըստ օրինակի կնոջն Ղովտայ։ Այլ զի մի
կատարեսցի 'ի մեզ բանն այն, թէ «Լաւ էր
նոցա թէ բնաւ չէր իսկ ծանուցեալ զար-
դարութեանն ճանապարհ, քան թէ ծա-
նեան՝ և՝ յետս կացին»[1]։

Բանիցն՝ որպէս ասացաւ 'ի վերոյ, իս-
կական և ուղիղ ճանաչմամբն Աստուծոյ և
բանի նորա՝ ծնանիմք վերստին յորդիս լու-
սոյ. իսկ անծանօթ կալով՝ մնամք 'ի խաւարի
ապիրատութեան զրկեալք 'ի լուսոյ բանին Ճշ-
մարտութեան, որում ոչ լինելով հասու՝ հա-

1 Բ. Պետ. Բ. 21։

ւասարիմք անասնոց անբանից, և նմանիմք նոցա։ Այլ եթէ ծանուցեալ և յետս կասցիմք, արժանի լինիմք ըմպելոյ գան բաղում, և ոչ ևս կարեմք անմեղադիր զմեզ կացուցանել. և նոյն ինքն բանն Աստուծոյ կշտամբեսցէ զմեզ 'ի դատել իւրում՝ ասելով. «Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ ձեզ, մեղ ինչ ոչ գոյր ձեզ»[1]։ Բանզի նա է դատաւոր և նա դատեսցէ զմեզ, ըստ այնմ. «Ոչ եթէ հայր դատի զոք, այլ զամենայն դատաստանն ետ որդւոյ իւրոյ։.. Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել. և զի որդի մարդոյ է, ընդ այն զի զարմանայք»[2]։ Ով մեծի և խորհրդաւոր բանիցս, որ յաւէտ լուութեամբ քան եթէ բանից յաճախութեամբ պաշտեալ ճանաչի. առ որ և մեզ զլուութիւն խոստովանելով՝ աղաչեսցուք և եթ ազատ կացուցանել զմեզ 'ի գանից և 'ի նախատանաց, և գթացեալ ողորմեսցի արեամբ իւրով գնեալ ծառայիցս. ամէն։

1 Յովհ. ԺԵ. 22։ 2 Յովհ. Ե. 22. 27։

ՑԱՂԱԳՍ ԿՈՆՈՑ

«Եւ էարկ տէր Աստուած թմբրութիւն ՝ի վերայ Ադամայ»։
ԾՆՆԴ. Բ. 21։
«Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ»։ ՄԱՐԿ. ԺԳ. 35։

ՔԱՌՈՒՆՆ գոլով թմբրութիւն իմն բընական՝ ընդհանուր մարմնաւոր կենդանեաց, յառաջ եկեալ ըստ մեծի մասին ՝ի շոգեաց և ՝ի գոլորշեացն կերակրոց և ըմպելեաց, է կատարեալ հանգիստ բոլոր անդամոց և հընդգեցուն զգայարանաց ՝ի տունջենական և յարթնական աշխատութեանց։ Որպէս որուամ հարկաւոր է ամենայն կենդանեաց յարթնութեան իւրեանց շարունակ վաստակելով բովանդակ անդամոց և հնգեցուն զգայարանաց՝ պարապիլ ՝ի գործս և ՝ի հարկաւոր պիտոյս իւրեանց, որոց բնականաբար կարօտին։ Եւ այս մանաւանդ բանականացս է, որք ոչ միայն մարմնով և զգայարանօք աշխատին, այլ և մտօք և իմացականութեամբ. վասն որոյ և առաւել վաստակաբեկ լքանին քան զմիւս կենդանիս։ Այլ սակս և ամենախնամն Աստուած՝ որ անհուն իմաստու-

թեամբ իւրով ոչ ինչ թերութիւն եթող ի բնութեան արարածոց իւրոց ի ստեղծանելն զնոսա, պարգևեաց նոցա թմբրութիւն իմն քնոյ, որով դադարեալ հանգիստ առնուցուն ի վաստակաբեկ աշխատանաց մարմնոյն, և զօրացեալ կազդուրեալ վերստին յարիցեն արթունք և զուարթունք և պատրաստք ի շարունակել զհանապազորեայ գործ զբաղանաց իւրեանց ի դարման և ի սնունդ կենաց և ի կատարմարութիւն անձանց։ Այսն որոյ և քուն այնչափ հարկաւոր է ընդհանուր մարմնական կենդանեաց, մինչ ոչ ումեք շարժուն կենդանւոյ կեալ առանց այնորիկ։ Բանզի եթէ մարդիկ և եթէ անասունք, եթէ թռչունք և եթէ ձկունք և սողունք հաւասարապէս պէտս ունին քնոյ ըստ պահանջման բնութեանն, առանց որոյ անկարելի է կեալ ումեք։ Այլ ընդհանրապէս ամենայն կենդանիք ի ննջել և ի թմբրել զդայարանացն՝ համարին իբրև զմեռեալս, զի ոչ ևս տեսանեն և լսեն և զգան զոր ինչ միանգամ պատահի ի վերայ երկրի։ Այլ եթէ զուրկ ի շնչառութենէ ևս լինէին, չկարէր ոք զանազանել զի քուն մտեալսն ի մեռելոց անտի։ Սակայն երևակերպութիւնք զդայարանացն անասնոց, որք տպաւորին յանձինս

նոցա յարթմնի, տան նոցա զգալ և տեսա-
նել տեսիլս երազոց. այսպէս և մարդոյ։

Բայց ի մարդումս է ուրեք երբեք և
ի խորհրդոցն պատահել. որոյ յարթնու-
թեանն առէպ եկեալ զմիով իւրք խորհրդ-
դալ, տպաւորի ընդ միտս իւր պատկեր
նորին, և ի ննջելն զնոյն յերազի տեսանէ։
Իսկ և բազմիցս և այսպիսի տեսիլք յառաջ
դան ի գոլորշեացն կերակրոց և ոգեղէն ըմ-
պելեաց, որք ներդործին յարիւն մարդկան
և այլայլեն զնոյն։ Այսոր որոյ երազն երբե-
մն երկիւղալիս և մերթ ցնորս խառնափնդ-
որս և աննշանս, կամ հեշտականս ըստ սա-
տիճանի և ըստ հակման զգացմանց և խոկ-
մանց իւրեանց, որք և կոչին՝ ցնորք խօլա-
կանք։ Իսկ այս ամենայն ըստ մասին հաստա-
բակ է ամենայն կենդանեաց, և ըստ մասին
յատուկ միայն մարդոյ։ Իսկ ի սոյն թմբրու-
թեանէ զգայարանաց և մարմնոյն յայնժամ
ընդոստեալ զարթնուլ՝ յորժամ բաւականա-
պէս ճաշակէ զհանգիստ քնոյն անձն վաս-
տակեալ. կամ յորժամ խեթիկիցն զնա ար-
տաքուստ. և կամ ի լսել ինչ ձայն բարձրա-
գոչ և դղրդիւն խառնաձայն, որոյ՝ թէ և
ըստ բաւականին չիցեն հանգուցեալ ան-
դամքն աշխատակիր, այլ անդէն ընդոստ

'ի քնոյն լեալ զարթչի 'ի վերս։

Արդ՝ պարտ է մարդոյ և 'ի սմին զանազանիլ յանբան կենդանեաց վասն մեծի աղնուութեան և յատկութեան իւրոյ, և քաղել անտի օգտակար խորհրդածութիւնս անձին բազմադիմիս։ Քանզի ոչ է մարդն ըստ կենդանի զգայական որպէս զայլ անխօսուն կենդանիս, այլ ունի և հոգի աղնուագոյն և իմացական. և կամ ըստ տսից հակառակորդաց՝ ունի առաւել յարմարութիւն և ընդունակութիւն ազդման հոգւոյն՝ որ յինքեան. վասն որոյ և 'ի ննջել իւրում և 'ի քուն լինել՝ պարտի զանազանիլ 'ի նոցունց։ Վասն զի միւս ամենայն կենդանեաց՝ բաց 'ի հանգստութենէ ոչ ինչ օգտէ նոցա այլ. որք թէ և երազեն, այլ երազք նոցին ցնորք են և երևակայութիւնք զգայարանաց։ Իսկ մարդոյն ոչ ըստ օրինակի անասնոց առ 'ի հանգիստ և եթ աշխատաւոր բնութեան պարգևեցաւ քունն։ Լուստի թէպէտ և հաւասարապէս շնորհեաց Աստուած ամենայն կենդանեաց զնինջ և զթմբրութիւն, բայց ոչ ինչ զնոցունց խօսի աստուածային գիրն, զի ոչ ինչ կարեն զգալ խորհուրդս և ազդմունս իմացականս։ Իսկ մարդն ընդունակ է ամենայն խորհրդոց 'ի պատճառս աղնուու-

թեան և յատկութեան իւրոց, որպէս յայտ
է 'ի սուրբ գրոց. «Եւ արկ, ասէ, տէր Աստուած թմբրութիւն 'ի վերայ Ադամայ, և ննջեաց. և առ մի 'ի կողից նորա՝ և ելից ընդ այնր մարմին, և շինեաց զկողն զոր առ յԱդամայ 'ի կին, (այն է կեանս.) և ած զնա առ Ադամ»։ Տե՛ս զպատուականութիւն խորհրդոյս և զսքանչելի ծնունդ՝ որ 'ի քնոյն մարդոյ։ Եւ զի՞նչ արդեօք խորհուրդս իցէ։ Երկրորդն Ադամ՝ մարդն նոր 'ի թմբրիլ և 'ի ննջել իւրում 'ի վերայ խաչին, շինեաց զհոգևորն զԵւա 'ի կողէ իւրմէ, որ և 'ի զարթնուլն յարութեամբն 'ի թմբրութենէ մեռեալ բնութեանս, ետ նմա ճշմարիտ կեանս, և զամենայն որդիս նորն Եւայի կոչեաց իւր եղբարս և անդամս։

Այլ մեզ յետագայ որդւոցս Ադամայ այլազգ ևս շնորհեաց պարգև, յոր վայելեմք 'ի ժամ ննջման մերում։ Քանզի 'ի փակիլ դրանց արտաքին զգայարանաց մերոց՝ բանին դրուն նեբբին զգայութեանց անձին, այսինքն խմացականութեան. և տեսանեմք բբ նականաբար և գերբնականօրէն զհոգևոր և զմարմնաւոր օգուտ մեր, նա և որ ինչ առ յապայն լինելոց են։ Զոր օրինակ, նահապետն Յակոբ ետես զսանդուղսն կանգ-

նեալ յերկրէ յերկինս՝ յօրինակ խաչին Քրիս-
տոսի, ընդ որ հրեշտակք իջանէին և մարդիկ
երանէին. և ընկալաւ այսու միութարութիւն՝
եթէ ճանապարհ կենացն յաւիտենականի չէ՛
խսպառ փակեալ։ Յովսէփ որդի նորա տե-
սանելով զարեգակն և զլուսին մեռոտան առ-
տեղօք անկեալ յերկրպագութիւն ինքեան,
ոչ յուսահատեցաւ երբէք ի վաճառիլ իւ-
րում Խամայէլացւոց և Եգիպտացւոց։ Ի-
տուեալ զմեկնութիւն երազոցն ներքինեաց,
զերծաւ ի բանտէ և կոչեցաւ Երկրորդ Փա-
րաւոնի, և եղև իշխան Եգիպտացւոց. և
համբարօք միթերից ցորենոյն կերակրեալ
ապրեցոյց զամենայն երկիրն Եգիպտացւոց և
Քանանացւոց յեօթնամեայ սովէն ըստ մեկ-
նելոյն իւրոյ զերազն Փարաւոնի։ Թողում
ասել և զերազսն զոր երազեցին Մուրթաբ,
Նաբուքոդոնոսոր, Դանիէլ, Եղրաս, Աժդա-
հակ, Կիւրոս, և այլք բազումք՝ զոր ընթեռ-
նում ի գիրս արտաքնոց վիպասանից։ Նոյն-
պէս և զսահել երազոյ աստուածահօրն Յով-
սեփայ, որով ծանեաւ զի Հոգւոյն սրբոյ
յղութիւն ամենասուրբ Կուսին, և առնուլ
հրաման ի հրեշտակէն երթալ Եգիպտոս,
և դառնալ կրկին հանդերձ Յիսուսիւ և
մարքն նորա։

Այն և այլ բազում տեսիլք մարգարէից, որք զմարդեղութիւն բանին և կամ զայլ և այլ իրս ապագայս տեսլեամբք երազոց ծանուցին, զորս մի ըստ միոջէ գրել՝ ոչ միաբ իմ զօրէ և ոչ կար զօրութեան իմոյ բաւական լինի։ Օ՛այս ինչ միայն 'ի վերայ ածեալ եզրակացուցանեմք, եթէ անչափ և անթիւ երազք զանազանք զորս տեսեալ եմք անձամբք և լուեալ յանհամար մարդկանէ, որք ըստ մեծի մասին իսկութեամբ և կամ ըստ նշանակութեան իւրեանց անթերի կատարեցան և ելին 'ի գլուխ, բաւական վկայութեամբ զստուգութիւն վերոյ գրելոցս կարէն հաւաստել։ Վասն որոյ՝ 'ի մի բան ասացից, թէ սա է յատուկ խորհուրդ, և մեծագոյն պարգև Աստուծոյ զոր բնականաբար և գերբնականօրէն շնորհեաց մարդկային ազգի. և խոստացաւ և զգերբնականօրէն շնորհել զնոյն իւրայնոց՝ մինչև ցկատարած աշխարհի, ըստ բանի Յովելեայ որ ասէ. «Եւ եղիցի յետ այսորիկ՝ հեղից յոգւոյ իմմէ 'ի վերայ ամենայն մարմնոյ. և մարգարէացին ուստերք ձեր, և դստերք ձեր. և ծերք ձեր երազովք երազեսցին, և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն»[1]։

1 Յոել. Բ. 28։

Ա.ՐԴ՝ պարտ է ուրեմն մարդոյ ոչ ե-
բաղով.ք անասնականաք, իմա՝ երևակայու-
թեամբ մարմնական զգայարանաց, և կամ
շոգեաք և գոլորշեաք կերակրոյն և ըմպե-
լեաց երաշանալ, այլ ազգեցութեամբ հո-
գւոյն՝ որ բնակի յինքեան. որոյ իմանալի
զգայարանացն այնչափ հսկուն և զգուշաւոր
պարտին լինել, զի ի փակիլ արտաքին ըզ-
գայարանաց մարմնոյն՝ նեբբին զգայարանքն
ոգւոյն արթուն և պատրաստ լիցին առ ի
նախատեսել զլինելոցսն, զորս ոչ բնաւ խնայէ
Աստուած ցուցանել պատկերաց և նման-
եաց իւրոց մարդկան, և կամի զնոսա ըստ
հեղինակի բնութեան իւրեանց գիտուն լի-
նել և նախագիտակ։ Այլ այս ոչ այլով ի-
սիք լինի՝ եթէ ոչ ի յարթնութեան զգայա-
րանացն՝ յօրհնութիւնս և ի փառաւորու-
թիւնս աստուածայինս պարապեցուցեալ
զնոսին, և ի խոկմանս և ի մեծամեծ սքան-
չելիս տեառն զօրութեանց, և աղօթից ըս-
տէպ կալով։ Ա.յլ և պարտ է պարկեշտ և
չափաւոր լինել ի կերակուրս և յըմպելիս,
զի մի գոլորշիք նոցին ազմկեսցեն զնուրբ ի-
մացականութիւն մտաց. ապա թէ ոչ՝ փո-
խանակ տեսչանց և մարդկօրէն երազոց,
ցնորս խօլականս, արհաւիրս, և անասնային

երաղը երազեսցեն, և ոչ ինչ օգտիցին 'ի քուներն, զի անասնաբար ննջեն և ոչ որպէս վայելէ մարդոյ բանականի։

Բայց յայսմանէ պարտ է մարդոյ ճանաչել թէ զինչ իցէ խորհուրդ քնոյն։ Բանզի Աստուած նախատեսութեամբ իւրով գիտելով զմարդոյն զանկումն 'ի ներքոյ մահուան՝ ստուգանելով պատուիրանին զոր ունէր տալ նմա, մինչդեռ կայր յանմահական վիճակի յաստուածատուն դրախտին, և կերակրիւր անապական պտղովք ծառոյն, որոյ գոլորշիք ոչ ինչ ներգործելով կամ ծանրացուցանելով զարեանն նորին զքերմութիւն, ոչ տիրէր նմա թմբրութիւն և քուն, այլ 'ի սահմանեալն զեւա՝ արկ 'ի վերայ նորա թմբրութիւն քնոյ առ 'ի ծանուցանել ըզխորհուրդ մահուան և զյարութեան։ Վասն որոյ և զինի արտաքսելոյ 'ի դրախտէն 'ի պատճառս ապականարար կերակրոյն, բնաւորեցաւ նմա իբրև զայլ կենդանիս՝ հանապազօր ճաշակել զքուն զինի օրական վաստակոյն 'ի մթագնել աւուրն. և 'ի ծագել լուսաբեր արփւոյն՝ յառնել 'ի քնոյն, զի մի յաւսահատեսցի զվերստին նորոգութենէ իւրմէ 'ի կեանս և 'ի փառս նախնի վայելչութեան և երջանկութեան դրախտին կո-

բուսելոյ։ Քանզի առեալ Աստուծոյ զմի ի կողից նորա և շինեալ այնու զԵւա որ անուանի կեանս, յուսադրեաց զնա՝ եթէ որպէս զմի մասն մարմնոյն առեալ և փափուկ մարմնով լցուցեալ՝ յարոյց ինքեան ոմն նմանի զպատկերակիցն իւր զԵւա. այսպէս և զկոյի նմա օրինակ, զի ի ննջել իւր զԹմրութիւն մահու, առեալ զնուրբ մասն մարմնոյն՝ այսինքն զհոգին, և լցուցեալ զնոյն անապական փափկութեամբ՝ յարուսցէ ի կեանս անխախտման զոր կորոյս։

Իսկ նորն Ադամ յարուցանելով ի կողէն իւրմէ զհոգևորն Եւա՝ զեկեղեցին սուրբ, եցոյց հաւատացելոց իւրոց, եթէ ոչ ի նախկին եդեմական փառս, այլ յերկնային յանձառ և յանպատում փառս աստուածային յարուցեալ զձեզ։

Եւ արդարև խորհուրդ մահուան և յարութեան, նա և փառաց և տանջանաց և ամենայն որ ինչ հանդերձելոյ կենացն է, յայտնապէս տեսանի ի խորհուրդ քնոյն։ Քանզի արտաքուստ մեռօրէն անկեալ դնի որ ննջէն, և ի ներքուստ իբրև զկենդանի տեսանէ. և նշանակէ, եթէ մարմինն թեպէտ մեռանի, այլ հոգին մնայ անմահ և կենդանի։ Այս և զոր ինչ երևակայէ որ և

խոկաց յարմնութեան, եթէ զհոգևոր և եթէ զմարմնաւոր իրաց, զնոյն տեսանէ յերբաղի. այսինքն՝ զոր ինչ հաւատաց որ ի կեանս աստ, նովին կերպարանի ի հանդերձեալն։ Այլ և եթէ յանդորրս կոյցէ, տեսանէ զուրախալիս, իսկ եթէ վրդովեալ՝ զահռելիս և զսոլականս. որ նշանակէ զարդարն և զմեղաւորն, որք ըստ խղճի մտաց իւրեանց դատին։ Եթէ զդաստ և պարկեշտ իցէ ի կերակուրս և յըմպելիս, զկարևորաց և զրդդուշալեաց երազէ. իսկ եթէ զեղեսալ որ իցէ և արբշիռ, ի ջերմութենէ անոր շոգեաց ցնորս տեսանէ։ Առաջինն նշանակէ զմարդն զդասացեալ ի հոգևոր կերակուրս և յըմպելիս, որ զԱստուած և զամենայն վայելչութիւնս արարածոց ի նոյն պայծառ հայելիսոջ զէմ յանդիման տեսանէ. իսկ երկրորդն անասնացեալ և ի վայրաքարշ տիզմս մեզոյց թաւալեալ, որ ի հանդերձելումն ըզգարշելի կերպարան իւր տեսանէ։

Ի մի բան, յոր վիճակ և դասանիցի որ յարմնութեանն, ի քուն լինելն զնորին վերաբերեալսն և զյարմարաւորսն երազէ։ Այսպէս զոր ինչ վիճակ ունէր որ ի կենդանութեան եթէ բարի և եթէ չար, զվարուց ասեմ և զդործոց, զնոյն վիճակ ընկալցի և

ի հանդերձելումն։ Այլ զինչ այլ քան զայսոսիկ կարեմք դատանել մեզ անսուտ օրինակ և խորհուրդ կատարեալ վասն հանդերձելոյ կենաց՝ ճշմարտութեան և յարութեան մեռելոց. որ բացայայտ ծանուցանէ զամենեցուն վիճակացն զսրպիսութիւն, մինչ զի և զանատնօրէն կենաց նոցին զհանգամանս անդոհական երաշխիքն յայտնէ նոցին ի զգաստութիւն, որոց ի զարթնուլն չկարեն իսկ ածել զմտաւ զոր տեսին և իմանալ զոր նշանակէն, որպէս ցուցանի եթէ զկնի մահուան չկարեն ինչ զգալ բնաւ։ Իսկ որ ինչ ի մարդկային երաշխոյն յիշին յարթնութեան, եթէ հաճելիս և եթէ անհաճոյս, ցուցանէ եթէ յետ ասի կենաց ըստ չափու պէսպէս գործոցութեանց՝ կամ փառս և կամ տանջանս զդայցին, և ամենայն գործք մարդկան եկեսցեն ի յիշատակութիւն։ Հուսկ ուրեմն երեսին եղանակս զարթնելոյ ի քնոյ տեսանելիք ի մարդիկ, յորոց է մեզ իմաստասիրել հոգեշահ խորհուրդս։ Նախ՝ անձամբ անձին յառնել ի քնոյն յետ ճաշակելոյ անդամոցն զհանգիստ գիշերոյն. երկրորդ՝ յառնել խիթանօք այլոց. երրորդ՝ զարթնուլ դիզդիմամբ գոռ ձայնի գոչելոյ։ Այս սոքա երեքին ցուցանեն զերիս եղանակս յարութեան.

նախ՝ հանգստեամբ. զի արդարք արթունք և պատրաստք գոլով միշտ ՝ի հանգստեան իւրեանց, սպասեն գալստեան երկնաւոր փեսային ըստ իմաստուն կուսանաց։ Երկրորդ՝ խրատմամբ, այսինքն ձայնիւ, որպէս Քրիստոս յաւուցանէր ասելով. «Ղազարէ, արի եկ արտաքս» — «Տալիթա կում մի»։ Կամ փչմամբ, որպէս մարդարէքն Եղիա [1], և Եղիսէ [2]։ Երրորդ՝ դղրդմամբ, որպէս մեղաւորքն՝ որք թէ և չիցեն հանգուցեալ ՝ի խորք քուն, այլ դղրդմամբ ձայնիւ փոքոյ հրեշտակապետին յարիցեն ակամայ ՝ի դատաստան։ Երբ որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Երբ դու բաւական համարեսջիր արդեակ իմ, զդուզնաբեայ բանս իմ՝ զոր խոստացայ քեզ համառօտել։

Այսպա ուրեմն պարտ է մարդոյ ՝ի ննջել իւրում արթուն լինել միանգամայն, ըստ այնմ. «Երբ ննջեմ և սիրտ իմ արթուն կայ» [3]։ Վասն որոյ և Փրկիչն մեր պատուիրեալ ասելով. «Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ»։ Բայց սոյն այս արթնութիւն ոչ է մարմնաւոր զգայարանաց՝ այլ հոգևոր բաց, որով պարտ է մարդկան արթուն լինել

1 Գ. Թագ. ԺԷ. 22։ 3 Երգ. Ե. 2։
2 Դ. Թագ. Դ. 34։

'ի հոգեկան առաքինութիւնս, 'ի բարեգործութիւնս, յօրհնութիւնս և 'ի փառաբանութիւնս, սպասելով գալստեան տանուտեարն 'ի կոչել 'ի հարսանիսն իւր։ Որոյ եկեալ եթէ գտանիցէ զնոսա արթուն և սպասարտաս ըստ օրինակի իմաստուն կուսանաց վառեալ լապտերօք հնգեցունց զդայարանացն հոգեկանաց, մուծեալ 'ի յառագաստ իւր և փակեսցէ զդուռն։ Իսկ ապա 'ի գալ հնգից յիմար կուսանաց, որք զհետ լեալ մարմնոյն զդայարանաց և ենչելով զբուն հեշտութեան և զաշխարհային զբաղանաց, անհոգ ամենեին զյաւիտենական կենաց, մնան շիջեալ լապտերօք յաստուածային գիտութենէ և 'ի բարեգործութենէ, գտանեն զդրուն առագաստին փակեալ։ Որոց 'ի բաղխելն լուիցեն զձայն փեսային, թէ ո՛չ գիտեմ զձեզ, զի դուք ոչ գիտացէք զիս, 'ի բաց կացէք յինէն ամենեքեան որ գործէք զանօրէնութիւն. յորմէ ինքն Փրկիչն փրկեալ ազատեսցէ զմեզ. ամէն։

«Ո՛վ մահ, ուրպէս զի դառն է յիշատակ քո». ՍԻՐ. ԽԱ. 1.
«Որ է յաղթութիւն քո մահ, ուր է խայթոցք քո դժոխք». ՈՎՍԷ. ԺԳ. 14.

Ամենայն հեթանոսական մարմնաւոր կենդանի որ ունի զծնունդ և զաճումն, բնականապէս հեթակայ է մահուան. և ոչ ոք կենդանի մարմնաւոր կարէ ազատ լինել 'ի մահուանէ, ըստ այնմ. «Ո՞վ է մարդ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր 'ի ձեռաց դժոխոց»[1], այսինքն գերեզմանի։ Բանզի պատճառաւ աճման կարօտի կենդանին կերակրոյ առ 'ի սնունդ, որոյ ապականացու մասունք, որպէս ասացաւ 'ի նախընթաց բանս մեր, ապականեն զարիւն կենդանւոյն, և յապականութիւնէ արեանն սկիզբն խախտիլ և քակտիլ չինուած տան մարմնոյն. վասն որոյ և որ 'ի նմա բնակի հոգին՝ հարկադրի խոյս տալ անտի. ուստի և վրճռեցաւ 'ի բնաղնին փիլիսոփայից, թէ ոչ այլ ինչ է մահ՝ բայց եթէ բաժանումն հոգւոյ

1 Սղ. ՁԸ. 44։

'ի մարմնոյ։ Քանզի 'ի բաղկացութեան իւրեանց՝ թանձրութիւն և ապականութիւն մարմնոյն անհամեմատ և հակակիր գոլով նուրբ և մաքուր գոյացութեան հոգւոյն, ոչ կարեն ունել հաստատ և անբաժանելի միաւորութիւն։ Իսկ 'ի հանդերձեալն յարիցեն որպէս զհրեշտակս նուրբ և ոգեղէն մարմնով, ընդ որում սերտ միաւորեալ հոգւոյն՝ ոչ ևս բաժանեսցին 'ի միմեանց. զի նրբութիւն մարմնոյն համեմատ գոլով յայնժամ հոգւոյն՝ կացցեն անանջատելի, և ոչ մերձեսցի 'ի նոսա մահ։

Այդ՝ 'ի բաժանել հոգւոյն, մարմինն որ երբեմն ներգործաբար կենդանի կայր, մնայ մեռեալ, այսինքն անկենդան և անշարժ և մանաւանդ անզգայ, ըստ որում կենդանութիւն, շարժականութիւն և իմացականութիւն բնաւորեալ է միայն 'ի հոգին, որոյ 'ի բաժանելն կորուսանէ մարմինն զանձնական լոյս ճրագի իւրոյ, ըստ սարասի հրոյ, որոյ 'ի շիջանելն՝ մառեալ նիւթն կորուսանէ ըզլուսաւորութիւն իւր և մնայ խաւարեալ։ Այսն որոյ և ամենայն կենդանեաց բնական է երկնչել և փախչել 'ի մահուանէ առ 'ի պահել զպատուական գանձն զայն և զանհամեմատ յարկեղ սրտի իւրեանց, որ է յա-

տուկ աթոռ կենդանութեան. մինչ զի և որդունք իսկ զսղիրք և մեղք փանաքիք, այլ և դուշնաբեայ կենդանիք անկատարք խուսափեալ 'ի մահուանէ՝ Ջանան պահպանել զկեանս իւրեանց։

Քանզի ամենայն ազգք կենդանեայ գոհ են ընդ տեսակ իւրեանց և ընդ վիճակ, և ոչ նախանձելով բնաւ գերադունին՝ ցանկան միշտ և ըղձանան կեալ ըստ պահանջելոյ տեսակի իւրեանց։ Այլ իւրաքանչիւր բաւականացեալ չափաւոր կացութեամբ տեսակի իւրոյ՝ հաւանի մնալ 'ի նոյնութեան վիճակի յորում ստեղծաւ. քանզի զորպիսութիւն տեսակի իւրեանց միայն կարեն զգալ և ոչ զայլոցն, վասն որոյ և շատանան մնալ նոյնիմբ, միայն զի անկորուստ զկեանս ունիցին։ Այլ զոյն երկիւղ մահու կրեն առ հասարակ ամենայն ջրային՝ օդային և երկրաւոր կենդանիք։

Իսկ հանքային և բուսական գոյացութիւնք ոչ երբեք. քանզի թէպէտ և սոքա ենթակայ են մահու ապականութեան, ըստ որում ունին զծնունդ և զաճումն, բայց որպէս ծնունդ սոցա ոչ է 'ի կամաց՝ այլ պատահմամբ, նոյնպէս և պատահմամբ մահ նոցա. ըստ այնմ, «Յամենայն կատարածի տես

զվախճանն[1]։ Իսկ բուսականք կերպիւ իւիք զգալով զկենդանութիւն իւրեանց, ունին նա և զմահ բնական։ Այլ և սոքա ըստ մեծի մասին պատահմամբ մեռանին, որպէս և ըզգացումն նոցին տկար՝ կարի սակաւ է։ Իսկ կենդանիքն որք համակ զգայունք են, մեծապէս երկնչին, և ունին զմահ բնական և պատահական։ Սակայն որպէս զանազան են ծընունդք երկոց գլխաւոր սեռից, այսինքն մեռաղականաց, բուսականաց և կենդանականաց, նոյնպէս կենդանութիւն նոցա և մահ զանազանք են ի միմեանց։ Այս և մահուան իւրաքանչիւր սեռից բաղմաթիւ են տեսակքն, և յոյժ տարբերք ի միմեանց ըստ զանազանութեան ծննդոց և կենդանութեան իւրեանց։ Բանզի ի հանքային այլ է մահ քարանց աղից և անկատար մետաղաց, և այլ հրահալելեաց։ Նոյնպէս և ի բուսականս է տեսանել այլ և այլ։ Իսկ ի կենդանականս այլ է մահ ղեռնոց, միջատից և ամենայն անկատար կենդանեաց, և այլ մահ կատարեալ կենդանեաց։ Որոց իւրաքանչիւր առանձինն աստէն Ճառել՝ տարագէպ է յոյժ, և ոչ իսկ հարկ, զի արտաքոյ է նպատակի մեր

1 Աղ. ՃԺԸ. 96։

տացս որ յայլ ինչ գիտէ։ Ասասի որչափ ինչ հարկաւորն է առաջադրութեանս՝ գրեցուք աստուն համառօտաբար, թողլով ընթերցանելեացն կամաց զլիակատարն խմաստասիրել յանթիւ գրեանց հեղինակացն այլոց։

Այլ գիտելի է, զի 'ի մէջ երից գլխաւոր սեռականութեանց գտանին մարմինք ոմանք անզգայք, որք ըստ երևութին թէպէտ իբր զմեռեալ ցուցանին, սակայն ըստ ինքեանց կենդանի են. որպէս 'ի հանքայինս՝ հրահալելիք, և 'ի բուսականս՝ հասք ընդոց և սերմանք խոտոց և կորիզք պտղոց։ Այսպէս և 'ի կենդանականս՝ ձու հաւուց՝ թրջունոց՝ սողնոց, և այլն. որք ոչ ինչ շարժումն կենդանութիւն և զգայութիւն ցուցանեն, բայց մինչ գտանեն զպատճառն, իսկայն ըղձածելեալն յինքեանս զկենդանութիւն ծաւալեն 'ի դուրս։ Արպէս և յայանի փորձիւ տեսանի 'ի ձուս հաւուց 'ի թռուխս նստելոց, որոց զկնի մեղ աւուր 'ի բեկանիլն գտանի կաթիլ արեան 'ի դեղնուցս նոցին, որ է սերմն և սկիզբն կենդանութեան ձագուցն 'ի ձուոց անտի ծնանելեաց։ Զանգի այս կենդանութիւն զանազանաբար տեսանի յիւրաքանչիւր տեսակ ընդհանուր կենդանեաց և էակաց, մինչ զի ըստ բնախուզեաց՝ չկայ ինչ անկենդան էակ

յաշխարհի, այլ զի գոյութիւնք են, ասեն, և ամենայն գոյութիւնք ունին իմն կենդանութիւն, բայց յայնպանէ որք գառնան 'ի մոխիր և 'ի կիր՝ յետ արտադրելոյ աղին որ 'ի նոսա, որոց և անուն կարդան՝ Մեռեալ գլուխս, Գոփոոփ Մորեռոս։ Զանազի հուրն ունի զորութիւն կենդանացուցանելոյ և մահացուցանելոյ. զի կենդանացուցանէ գիջութեամբն և մահացուցանէ չորութեամբն։ Իսկ զորոց միանգամ 'ի ծովու գտանին, ոչ իւիք եղանակաւ մարթ է ճառել երբեք. քանզի այլ է ծնունդ և մահ ձկանց, և այլ ժամանց. այլ ծովային երկրտանի, քառոտանի և բազմոտանի գազանաց, և այլ ոտարէից և խեցեաց։ Որոց ոմանք որպիսի են ձկունք, զկնի յղանալոյ իգացն՝ հեղուն զսերմն զոր ընդունին յարուաց՝ 'ի ջուր, և կրկին արգանդ լինի նոցա աւազն։ Ոմանք իբրև ըզցամաքային կենդանիս ծնանին, և ոմանք ձուային են, որպիսի է կրայն։ Իշ սոքա ամենեքին են արու և էգ, որոց է և այլ բազմագիմի եղանակք ծննդեան և մահուան. ոմանք այնչափ երկարակեացք են, մինչ զի անմահ համարին, և մահ նոցա ըստ մեծի մասին պատահմամբ լինի։

Իշ այնչափ զարմանալի տեսակք են 'ի

ծովու, ընդ որ հիւսցեալ ապշին միաք մարդկան։ Գոտանի 'ի նոսա և տեսակ մի ձկան կոչեցեալ յունական բառիւ օՀԿՊՈՓԻԱ, այն է ուԹասնեայ, և 'ի լատինս ֆոլիկամարուս անուանեալ՝ այսինքն բաղմոտանի. յորոց անՀեգեդ և ահագին մեծուԹեամբ լինին յովկիանու, վնասակար յոյժ նաւորդաց. զի ձըգեալ զձեռս իւրեանց և կալեալ զնաւորդսն քարշեն յինքեանս և կլանեն, յորոց չիք հընար զերծանելոյ՝ բայց եԹէ տապարաւ հատանելով զկալեալ մասն մարմնոյ ողջամբ ելցին։ Իսկ 'ի միջերկրեայ ծովու փոքր են, և յաճախ որսան ձկնորսք, այլ ոչ դիւրաւ մեռանին ըստ ինքեանց։ Այլ որ առաւել զարմանալի է՝ հաւատի 'ի բաղմաց, եԹէ 'ի հատանիլ ըստ դիպաց միոյ մասին անդամոց մարմնոյն, գլուխն կամ ոտն, կրկին աճէ և բուսանի որպէս յառաջն։ Այլ եԹէ յանհամար մասունս յօշատեսցեն զնա և տրկցեն 'ի ծով, իւրաքանչիւր մասունք նորա լինին իբր սերմն իւր, և գարձեալ աճեն ըստ տեսակի իւրեանց։ Այլ մինչ որսան զնա ձկնորսք, հանեալ 'ի ցամաք ուժգին զօրուԹեամբ հարկանեն ընդ վէմ անդադար հարուածովք և ապա իբրև անշնչացեալ համարին, այլ ոչ մեռեալ, որում մեծաւ զարմանալեօք ակա-

նատեաս եղեալ եմք բիւրիցս և տպշեալ։ Վասն որոյ ասեն բնախոյզք, թէ էութիւնք էակաց՝ որ պահպանեն զնոսա յէութեան, համարի իմն նոցա կենդանութիւն, ըստ որում և էութիւնն ըստ ինքեան է կեանք։

Բայց որովհետև զզգալի և զշարժուն կենդանեաց խօսիմք ասասանօր, որք զգալով զգան զմահ և գիտեն զկենդանութիւն իւրեանց, հարկ է մեզ ասա դառնալ կրկին 'ի կարգ բանիս։ Արդ՝ որպէս ասացաք 'ի վերս անդր, եթէ ընդհանուր ենթալուսնեայ մարմնաւոր էակաց ըստ սեռի և ընդ տեսակի իւրեանց զոնազան են և մահ և կենդանութիւն նոցա. սակայն մի միայն կենդանական սեռն յաւէտ երկնչի և փոխչի 'ի մահուանէ 'ի պատճառս զգայութեան իւրոյ։ Վասնզի հանքայինք և բուսականք անզգայք գոլով՝ ոչ գիտեն խուսափել. իսկ կենդանականացն սեռ՝ եթէ կատարեալ իցէ և եթէ անկատար, ամենայն զօրութեամբ իւրով ջանայ խոյս տալ զերծանիլ 'ի մահուանէ. քանզի գիտէ և զգայ զպատուականութիւն իրին զոր ունի կորուսանել։ Մանաւանդ տեսակն մարդկան տաւել գիտուն և իմացական՝ յաւէտ քան զամենայն կենդանականսն ըզդողանի հարեալ սարսափի. մինչ զի յուշ ա-

ծել իսկ զմահ իւր, անդէն զամենայն աշխարհայինս արհամարհէ. վասն որոյ ազաղակէ ասելով. «Ով մահ, որպէս զի դառն է յիշատակ քո»։

Արդ՝ եթէ այսչափ դառն է և սարսափելի յիշատակ մահուան, ապա ուրեմն իսկապէս է ծայրագոյն չար։ Բաւ, ոչ երբէք։ Նախ՝ զի չիք ծայրագոյն չար. քանզի չարն ըստ օրինակի խաւարի՝ ոչ է ըստ ինքեան գոյութիւն ինչ, այլ պակասութիւն բարւոյն. նոյնպէս և մահն չէ՛ ըստ ինքեան գոյութիւն ինչ, այլ պակասութիւն կենդանութեան։ Երկրորդ՝ թէպէտ մահն ըստ երևութին չար թուի, այլ ըստ ներքին տեսութեան է բարի, ըստ որում վճիռ և հրաման Աստուծոյ է։ Բանզի այնչափ բարի է Աստուած, մինչև՛ի չարեաց գիտէ բարիս ծնուցանել։ Իւ այս զմարմնաւոր մահուանէ է իմանալ և ոչ զհոգևորէն, որ արդարև չարք յոյժ, ըստ այնմ. «Մահ մեղաւորին չար է»[1]. զի ոչ է կամաք Աստուծոյ՝ այլ մարդոյն, վասն որոյ և իսկապէս մեռանի տուժելով զանձն իւր։ Իսկ մարմինն ոչ մեռանի իսկապէս, այլ զրկի՛ի նախկին տեսակէն և՛ի գոյութենէ իւր

1 Աղ. Ա.Գ. 20։

մէ՝ որ ոչ էր իւր, և ընդունի բնականաբար զայլ իմն։ Երրորդ՝ եթէ չէր Աստուծոյ ե-դեալ ի բնութեանս զմահ, զիմիրդ կարէր երկրագուն՝ սոյս սահմանաւոր պարունակել զանսահման քանակութիւն կենդանեաց սեռի, եթէ ի սկզբանէ անտի ստեղծագործութեան ամենայն կենդանիք այս օրինակ առնելով և բազմանալով մնային անմահ ի վերայ երկրիս։ Թուի թէ չգտանէր տեղի բնակութեան այնչափ տեսակաց կենդանեաց և ոչ քայլ մի ոտին իւրաքանչիւր. և ուր գըտանիւր երկիր դատարկ առ ի սնուցանել զնոսա և դարմանել։ Արդարև եթէ միմիայն տեսակն մնայր անմահ յարատևելով յաճուռմն սերնդոցն յանհատս, բովանդակ երկիրս ոչ բաւէր տանել զբազմութիւն նորին։

Այսպէս և ի ծովս, եթէ ձկունք ոչ կլանէին և գիշատէին զմիմեանս, ովկիանոսն լայնատարած լինէր իմն դէզ շեղջաշեղջ ձըկանց՝ քան կուտակութիւն ջուրց և պեաց։ Այնպէս և թռչունք յօդս անբաւութեամբ բազմացեալ՝ իբրև զամպս երկնից արգել լինէին ճառագայթից արևու, որպէս զբազմութիւն նեռից առ Աբրահէսիս։ Այս անհուն խմբաւորութիւն Աստուծոյ այնչափ հանճարեղ կարգադրութեամբ ունի տնօրինեալ

զարարածս, զոր բաց 'ի յինքեանէ ոչ ոք այլ կարէ քննել և իմանալ. զի ինքեան միայնոյ է գիտելի և ոչ այլում ումեք. քանզի ոչ զոք խորհրդակից ունի ինքեան։ Իսկ զդուշնա-քեայս զոր քննէ և իմանայ մարդ, այն պարգև է և զօրութիւն բանին իւրոյ շնորհեալ նմա Աստուծոյ. բայց և այն ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ կայծ մի հրոյ և աղօտ լիմն հայեցեաց 'ի հայելւոջ. զի զոր ինչ տեսանեմք և լսեմք և զոր առ ուսան մեր է՝ հաղիւ կարեմք իմանալ, ըստ բանի իմաստնոյն, իսկ որ ինչ յերկինս է՝ ո՞վ քննեսցէ։

Ուրեմն ոչ վայրապար ասացաւ, եթէ մահն մարմնաւոր կենդանեաց ոչ է լաւ ինքեան չար, այլ մանաւանդ բարի։ Վասնզի եթէ անմահ մնային կենդանիք, որպէս ասացաք 'ի վերս անդր, և ընդ-ունին զամենայն երկիր բազմութեամբ իւրեանց մինչև չմընալ տեղի սերմանելոյ, ուստի նոցա կերակուր և սնունդ։ Իսկ բաց 'ի սմանէ զնաւրդ մարթ էր նոցա կրել զանարութիւն զառամացեալ հասակին և զախտալից, որ հաշէ և սպառէ զզօրութիւն մարմնոյն, մինչև որ յերիտասարդութեան յառաջ տիսն զոզացեալ 'ի բաց փախչէին յերեսաց մահուան, ցանկանալով ցանկանան այնմ, համարելով զնոյն

յաղդեցութենէ բնութեանն՝ հանդիսաւ անձանց ի տառապանաց և ի վշտաց, ասելով ընդ Սիրաքայ. «Լաւագոյն է մահ քան ըղկեանս դառնիս, և հանդիսաւ մշանջենական՝ քան զհիւանդութիւն յաբակայական»[1]։ Լաւ թէ՝ «Օր մահուան իւրոյ լաւ է քան զօր ծննդեան իւրոյ»[2]։

Արդ՝ եթէ ասիցեն. Եթէ չէր սահմանեալ մարդկան մեռանիլ, և ոչ ծերութիւն պատէր զնոքօք, և ոչ յախտակրութիւնս ծնգէր, և հետևապէս ոչ խնդրէր զմահ։ Յիրաւի, և ես վիպեմ այդմ. բայց յայնժամ և ոչ սերունդ որդեծնութեան լինէր, և ոչ օք նորածին՝ յաջորդաբար յաշխարհ ի գոյութիւն գայր վայելել յայս սեղան աստուածային պարգևաց։ Իսկ եթէ բովանդակ անհաւաք երկրագնոցս՝ ի սկզբանէ անտի մինչև ցկատարած աշխարհիս ծնեալք և ծնանելիք՝ միանգամայն ստեղծեալք էին զառաջինն անդ, որպէս ասի զհրեշտակաց և զանմահ էակաց՝ որք անդր քան զլուսինն, յայնժամ ոչ լինէին ներհակական և ապականացու շարժմունքս, և ոչ թանձրութիւն և աճումն մարմնոց, և ոչ սեռք և տեսակք և

1 Սիր. Լ. 17։ Յոբ. Է. 2։

կերպաւորութիւնք ենթարկանեայ էակաց որպէս այժմ. Ա. այլ՝ այլ իմն անփոփոխ և այլազան կերպաւորութիւնք և տեսակք լինելիւն, որպէս և են բազումք. որք թէպէտ աներևոյթք և անհասք են ի մէնջ, բայց գոն խակապէս և լի են ընդ համատարած բնութիւնս։ Այս չէք ինչ տեղի թափուր զոր ոչ ինչ նա, իմա Աստուած. և լի են երկինք և երկիր փառաք նորա։

Իսկ կարողութիւն, իմաստութիւն և բարութիւն Աստուծոյ զայսօրինակ կերպս, զապականայսս տարերս, նա և զսեռս և զբազտեսակս բազմազան էակաց կամեցաւ ստեղծագործել յայսմ աշխարհի, որպէս զի ի տան գանձուն իւրոյ ամենայն ինչ կատարեալ իցէ։ Այս ամենայն արարածք երևելիք և աներևոյթք ծանիցեն զանհուն կարողութիւն, իմաստութիւն և բարութիւն նորա, որում փառս մատուցանելով՝ զնա միայն պաշտեսցեն, և զնա միայն սիրեսցեն, և զարքայութիւն նորա խնդրեսցեն. վասն որոյ և յաշխարհիս յայսմիկ սահմանեաց զմահ և վախճան ամենայն ենթարկանեայ մարմնաւոր էակաց, մանաւանդ կենդանեաց, զի իւրաքանչիւր ըստ կարգի և ըստ պայմանի իւրում՝ կատարելով զենթացս՝ դարձցի անդրէն

'ի վախճանական հանդիսաւ իւր, յորմէ առ սկիզբն։

Ով սքանչելի իմաստութեան Աստուծոյ, ընդ որ հիացեալ աբբայ մարգարէն Դաւիթ յարմարագոյնս և իրաւամբ աղաղակէր. "Սքանչելի եղև գիտութիւն քո յինէն, զոր բացաւ և ոչ հանդարտեմ նմա"[1]։ Զանազան խոկալով զայս ամենայն՝ հիանայր և յապշութիւն զառաջէր, եթէ մահն՝ որ ըստ երևութին սարսափելի երևէր, յորմէ վախչէին ամենայն կենդանիք, ուրեմն ինն անհերևութապէս օգուտ մեծ և բարութիւն ընձայել, մինչև անձկանօք զնոյն խնդրել կենդանեաց 'ի հանդիսաւ անձանց իւրեանց։ Զի յիրաւի, զի հանդիսաւ է ճշմարիտ, ըստ որում դառնան կրկին 'ի սկիզբն իւրեանց յորմէ առան։ Զանազի ամենայն սկզբնաւորեալ ոչ դադարի՝ մինչև դարձցի առ հեղինակն և սկիզբն իւր։

Արդ՝ եթէ անբան կենդանեաց այսչափ բարի և օգտաւէտ իցէ մահն, որ գիտէ միայն 'ի մարմնական տառապանաց հանգուցանել զնոսա. ապա քանի՞ առաւել բարեգոյն և օգտակարագոյն չիցէ մարդկան ոչ առնամանցելոց՝ այլ հոգիացելոց, որք բաց 'ի

1 Աղ. ՃԼԸ. Ն։

մարմնական հանգստութենէ, այլ և զերա-
նաւէտ և զհոգևոր հանգիստն և զվայել-
չութիւն անմահ փառաց ժառանգեսցեն
այսու մահուամբս։ Բանդի զերծանին այնու-
ի պանդխտական, տարժանակիր և տարաշ-
խարհիկ վայրէս աքսորանաց, և մերկացեալ
զապականացու զբուրբ մարմնոյն, ընկեցիկ
արարեալ զամենայն զվիշտս խոզարածու-
թեան՝ զժոխրմբեր տանջանաց սոսու և ծա-
բաւոյ բանին Աստուծոյ, և տեսութեան
Հօրն երկնաւորի, ուրախասիրտ և պայծա-
ռագէմ, կատարեալ հաւատով, անեղբայ
յուսով և ջերմեռանդն սիրով չուեն դնան
ժամանել հասանել և օթևանել ի ցանկալի
հայրենիսն իւրեանց, ուր դասնին անթիւ
վարձկանք հացալիցք։ Այնդ գոռոզադութ
հայր նոցա ոչ իբրև դարձի ծառայից, այլ
իբրև որդւոց սիրելեաց բազկատարած և զբ-
աւթագէմ սպասէ ընդունել զնոսա յօթևա-
նսն իւր պատրաստական։ Այս փութացեալ
ընդ առաջ նոցա, համբուրելով գիրկ ընդ
խառն խանդակաթ սիրով և մեծաւ հրճ-
ւանօք, հրաւիրէ զամենեսին ուրախ լինել
ընդ ինքեան ասելով. Որդեքն իմ այսոքիկ մե-
ռեալք՝ այսինքն բաժանեալք էին յինէն և
կեցին. կորուսեալք՝ այսինքն հեռացեալք

էին յինէն, և գան։ Վասն որոյ և զգեցուցեալ նոցա զուսափայլ և զանապական պատմուճան աստուածային փառացն առաջին, (որք մինչ հոգւով էին առ նա՝ զգեցեալ ուներին.) դնէ և զմատանին իշխանական անզրաւ թագաւորութեան իւրոյ 'ի մատուանն։ Այդուցանէ և զիօշիկս անապատաթաքելն և անտեղիտալն խայթուածոց սկզբնաչար օձին՝ յոտս նոցա։ Այս զենեալ՝ մատուցեալ զեղն պարարակ՝ զամենաքաղցր կերակուրն հոգւոց, զտեսութիւն ասեմ և զբանն աստուածային 'ի յաղուրդ սովեալ որովայնի նոցա, հրամայէ դասուց հրեշտակաց հացալից ծառայից իւրոց՝ պատրաստել զընթրիս անապական սեղանոյն, ուտել և ըմպել 'ի բերոյ որթոյ 'ի սեղան հօր իւրոյ. պարել և երգել և ուրախ լինել հոգեպէս ընդ դարձ որդւոց իւրոց։ Որոց և իշխանութիւն տայ ժառանգել զանապական և զանապառ գանձս իւր ընդ միթերեալ գանձուց առաքինութեանց իւրեանց, զոր ստացեալ 'ի պանդխտութեան անցաւոր կենացս այս՝ շտեմարանեցին 'ի գանձարանի հօր իւրեանց որ յերկինս, ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեց ապականէ։ Ընդ ժառանգելով նոցա 'ի թագաւորութեան հօր իւրեանց՝ զայս ամենայն վայելչական և

զերջանկաւէտ բարութիւնս՝ աղաղակեն յաւիտեանս յաւիտենից ասելով. «Ո՞ւր է յաղթութիւն քո մահ, ուր է խայթոցք քո դժոխք»։

Ահա զսոյն վայելչութիւն տեսեալ հոգւոյն աչօք մարգարէն Դաւիթ՝ աղաղակէր ասելով. «Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առքեզ Աստուած... Երբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ»[1]։ Այսոր ոչ խնդրէր զերծանել 'ի պատառոտեալ քձէն ապականերացու մարմնոյն ասելով. «Տէր հան 'ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմէ։ Ինձ սպասեն արդարք մինչև հատուցցես»[2]։ Այլ ցորչափ յամէր 'ի մարմնի, այնչափ լայր և ողբայր գոչելով. «Վայ ինձ զի ընդ երկար եղև պանդխտութիւն իմ»[3]։ Որում համաձայնեալ և սրբազան առաքեալն Պօղոս՝ ասէր. «Նեղեալ եմ յերկոցունց, զցանկալն ելանել և ընդ Քրիստոսի լինել, առաւել լաւ համարիմ»[4]։ Աւասիկ յաղթանակութիւն մարդոյ 'ի վերայ մահուան. զի ոչ երկընչի երբեք 'ի մահուանէ՝ որ զմարմինն ըս-

1 Աղ. Խա. 1։ 3 Աղ. ճիթ. 5։
2 Աղ. ճԽԱ. 7։ 4 Փիլ. Ա. 23։

պանանէ. և ոչ իսկ սարսափեալ իբրև զանբան կենդանիս փախչի 'ի նմանէ. այլ դողայ, երկնչի և փախչի յայնմանէ որ զհոգին՝ այսինքն զանձն սպանանէ, վասն որոյ և ասէ. «Մի՛ մահ, ոչ ոք զի դառն է յիշատակ քո». զի փոխանակ հանգստեան նորանոր տանջանս ինձ պատրաստես. փոխանակ ցանկալի և փառաւոր հայրենեաց իմոց, յանապատս թափուրս, և 'ի գազանաւտ դիւաբնակ վայրս և յանծանօթ տեղիս տարագէմ զիս արկանես։ Փոխանակ ամենաքաղցր և լուսաւոր դիմաց և փափկանոյշ դրկաց հօր իմոյ, 'ի դժնդակ և 'ի գիշերատիպ գարշելի դէմս և 'ի հրաժարան դիրկս դիւաց ոսոխաց իմոց հրաւիրես զիս։ Փոխանակ յաւիտենական և անպատուամ կենացն հրաժարանաց՝ զդառնագոյն և զանդրաւ տանջանս մահու ինձ ջամբես։ Ի վերջէ՝ փոխանակ լուսափայլ անապական և փափկագոյն պատմուճանին փառաց և իշխանական մատանւոյն և եղինն պարարակի և հրեշտակային պարուց երգոց և ուրախութեան, զքուրձ խաւարային տղմոյ, զանշնջանելի հուր գեհենոյն, զանխղելի շղթայս մշանջենաւոր գերութեան, զանմահ և զաղբալի որդն խայթուածոց մոտայն խղճի, զընթացմունս սպառնալեաց գարշատեսիլ դիւ-

ւաց, զՃիչ և զաղաղակ, զողբումն և զլայ և զկրՃումն առամանց ինՃ մատուցանես։ Վաստն որոյ յիրաւի ՈՂ մահ (հոգւոյ), որպէս զի դառն է յիշատակ քո։ Քանզի մահ մարմնոց արդարոց ոչ եթէ մահ համարի՝ այլ քուն. և որ արդարն է՝ գիտէ հաւատեաւ եթէ Փրկիչն իւր Յիսուս պատրաստ է գալ և զարթուցանել զբարեկամն իւր Ղազարոս, որ հաւատով և վերատին ծննդեամբն 'ի հոգւոյն՝ ծանօթացաւ պարգևողին կենաց, որ անդանդաղ դայ 'ի զարթուցանել զնա, և հրաւիրել 'ի հարսանիսն անապական կենաց, շնորհելով հաղորդութիւն ՃՃային կենաց և թագաւորութեան, 'ի ժառանգել զանվախճան ուրախութիւնն յանդրաւ յաւիտեանս։

Իսկ մահ մարդոյ անասնացելոյ, այսինքն մեղաւորի և անհաւատի, է ՃշմարտապէՃ մահ չար և դառնագոյն, ըստ որում կամաւ իւրով զրկի յաստուածային տեսութենէ և 'ի միաւորութենէ, որպէս ըստ մարմնոյ՝ որ բաժանի մահուամբ 'ի հոգւոյն. ուստի ոչ կարելով յաղթել նմա, մատնի յիշեալանութիւն նորին զորէն զինուորի պարտելոյ վաստութեամբ անՃինն։ Վասն որոյ և զկնի ՃաշակելոյզանՃնարին դառնութիւն նորա, խնդրէ զմահ զօրաւորագոյն և ոչ գտանէ։

Եւ տեսեալ զայլանդակ տեսիլ կերպարանին իւրոյ և զընկերակցացն իւրոց դիւաց, որոնք տեղի թաքստեան, զոր ոչ գտեալ՝ գոռայ գոչէ յաւիտեանս յաւիտենից ասելով լերանց՝ թէ «Անկերուք 'ի վերայ իմ, և բլրոց՝ թէ ծածկեցէք զիս»[1]։ Աղաչէ զմահ, և ոչ ինչ օգտի, մաղթէ Աբրահամու տալ նմա ծայրիւ ծագի մատին ջուր 'ի զովացումն յեռաբորբոք պասքմանէն, բայց ոչ ոք անսայ նմին։ Օ՜ի ոչ եթէ նոքա և եթէ՝ այլ ինքն անձին իւրում անգութ թշնամի է, քանզի Աստուած դարձուցանէ 'ի նմանէ զերեսս իւր։

Ո՜վ անձն իմ եղկելի. փութացիր ապա փախչիլ 'ի չարեաց, փափագել բարեաց, քեզ միշտ մերձ ծանիր քուն մահու եկեալ՝ քնոզ դատաւոր։ Բայց վայ է ինձ, և աւաղ, զի ոչ երբեք ունիմ զօրութիւն փրկելոյ. իսկ դու միայն ես յոյս իմ և ապաւէն փրկութեան, ակնկալութիւն իմ Աստուած, և փրկիչ իմ Յիսուս Քրիստոս. որ եղբ խնայեցիս մի միայն Փրկիչ բոլորից, փութա զիս փրկել փորձութեանց մեղայ. քաւիչ յանցանաց քաւեա զօրհնաբանս, քեզ երգել զփառս. սրբութեամբ Աստուածածնին բարեխօսութեամբ, յիշեա տէր և ողորմեա։

1 Ղուկ. Գ. 30։

ՎԵՐՋԻՆ ԲԱՆՔ

ՅԻ արդ՝ սրդեակ իմ, կնքեմ զբանս իմ երկրորդելով զիմաստնոյն, թէ Լուր սրդեակ խրատու հօր քո, ճշմարիտ ուսուցչին և վարդապետին Յիսուսի. և մի մերժեր զօրէնս մօր քո, սուրբ Եկեղեցւոյ, որ աւետարանաւ 'ի Քրիստոս ծնաւ զքեզ։ Զդաշն լեր 'ի խմորոյ՝ իմա յաղանդոյ Սադուկեցւոց և Փարիսեցւոց։ Փախիր 'ի Թիւնալից և 'ի մահաբեր գրեանց և 'ի գործոց նոցա, իբր 'ի մահաբեր ծառոյ դրախտին. մի մերձենար, մի հուպ լինիր և մի ճաշակեր զպտուղս նոցին։ Զ'ի որպէս սկզբնաւոր օձն Թշնամին բարուքեան մարդոյ՝ խոստանալով նախածնողաց զոյգ ընդ ճաշակել պտղոյն՝ աստուածանալ, և ապստամբեալ ստուեղանութեամբ պատուիրանին զրկեաց 'ի նոյն իսկ փառաց նմանութեան և պատկերակցութեանն Աստուծոյ, և յանմահութենէ զոր ունէին, և կապտեալ կողոպտեալ 'ի բովանդակ շնորհաց՝ հաւասարեաց զնոսա անասնոց անբանից և նմանեցոյց նոցա։ Նմանապէս և սոքա զոր խոստանան այլոց զիմաստութիւն, բայց ինքեանք գոլով զդալեաց և ապականութեանց ծառայք, զրկեալ մոլորեցուցանեն զուսնողիրսն 'ի շնորհաց սրբոյ աւետարանական վարդապետութեան, յիմաստութենէ ճշմարիտ աստուածգիտութեան, զոր սնիմք ընկալեալ աւանդութեամբ և քա-

բողութեամբ Եկեղեցւոյն Քրիստոսի։ Վասն որոյ և փոխանակ իմաստանալոյ և լուսաւորելոյ մտացս՝ լինիմք տգէտք, յիմարք և անասնացեալք. ուստի և մնալով ի խաւարի աստուածանգիտութեան՝ զրկիմք յաստուածային փառաց հաղորդակցութենէ։

Այս ընկալ որդեակ իմ, զդուզնաքեայ բանս զայս, և կրկնեա երեքկնեա, ծանրելով և որոճալով ի միտ առ զամենայն գրեալս, քանզի ոչ վայրապար աստէն ի գիր արձանացուցի, խորշելով միանգամայն յերկարաբանութենէ. որ թէ և գոյծ համբակի, այլ յուսամ եթէ ախորժելի վերծանողացն հանդիպեսցի։ Եւ գիր զսա նպատակ մտացդ, և Ջանա ի նոյն կրթել զամենայն զդայարանս և զկիրս մարմնոյդ ըստ վայելչութեան բնութեանս, և հնազանդեցուսջիր զնոսա հոգևոր զդայարանաց և շարժմանց քոց։ Այլ և հետևելով աստուածային պատգամաց՝ խրնդրեացես զսիւ և զդիշեր արթնութեամբ հոգւոյ և զդաստութեամբ մարմնոյդ աղօթելով, զի բացցին դրունք զդայարանաց անձինդ, ոչ ճաշակմամբ պտղոյ մահաբեր ծառոյ, որպէս նախածնողաց մերոց, այլ կենաստուծ շնորհօքն Քրիստոսի և պտղովք ծառոյն կենաց՝ ամենասուրբ մարմնոյ և արեան նորա, առ ի ճանաչել զԱստուած և զքեզ, և լինել որդի Աստուծոյ և ժառանգ Հօրն երկնաւորի։

Ի վերջէ, եթէ արժան թուիցի քեզ տալ զսոյն յընթերցումն կամ յօրինակութիւն ուրոց խնդրեն, եղիցի այն քեզ և ինձ օգուտ և վարձ։ Իսկ եթէ ոք ի գիտնոց զսոյն ընթերցեալ անգոսնիցէ զհամբակութիւն իմ, մի՛ ընդ այն դժուարիցիս, զի գուցէ նա առաւելագունին քան զայս բաւական գոլով ի յօրինումն, իրաւունս ունիցի արհամարհելոյ։ Վասնզի ոչ ընդդիմանամ և ես, եթէ չիցեն սպրդեալ յայս աշխատասիրութիւն իմ խակակութիւ բանք հեռեակ մատենագրութեան և վրիպմունք ակամայք. այլ՝ ո՛ երբէք ետես ծառ պտղատու որոյ համայն պտուղք թէ՛ ի համս, թէ՛ ի հոտս, թէ՛ ի գոյնս և եթէ՝ ի բովանդակ գեղն համահաւասարք իցեն, և չդատնիցի՝ ի նոսա խակք, արատաւորք և վնասակք։ Այդ՝ եթէ փայտն դալար զդոյն առնէ, չորն քանի՞ առաւել, այսինքն եթէ բնութիւնն այսու եղանակաւ յառաջ ածէ զբերս իւր, ապա տկար և համբակ ոք զինքդ զբովանդակ բերս մտաց իւրոց համանգամայն անարատ և անվրէպ յառաջ բերիցէ։ Լուսոյ խնդրեմ զի այնպիսի ոք կատարելութեամբ իւրով սքողեալ զանկատարութիւն իմ, գոնէ աշխատանացս ակն առեալ՝ անմեղադիր զիս և ազատ ի քամահանաց կացուսցէ։ Իսկ եթէ այլ ոք զմտաց բանին անտես արարեալ, և անբաւական առնել ինչ լաւագոյն քան զայս, զշարեալ վառեալ նախանձու ատելութեան՝

յանդգնիցի արհամարհել զաշխատութիւն իմ, այնպիսին ներեալ լիցի Աստուծոյ և մինեն, քանզի զոգիտութիւն իւր յայտնէ, որոյ վասն ոչ ինչ փոյթ է ինձ, գիտելով քաջ եթէ ամենայն ծառք պտղատուք քարկոծեալք յանցաւորաց, կոխան ոտից անկանին միշտ։

Պատուիրեմ քեզ և զայս, զի որովհետև 'ի մահիճս մեծի հիւանդութեան անկեալ, յուսահատ 'ի մարմնաւոր կենացս, գրեցի քեզ զսոյն իբր կտակ հայրական, դուցէ վախճանեալ իմ յաստի կենացս ոչ ևս կարացիս տեսանել զիաբրիկ որդեակն իմ զՍտեփանոս՝ և զեղբայր քո որ 'ի Թրեստ 'ի պանդխտութեան կայ, դու փոխանակ իմ հայրաբար խրատելով կրթեսջիր զնա յաճպաշտութեան. և զօրինակ գրոյս տացես նմա, զի և նա քաղեսցէ ասասի յանձին պտուղ ինչ հոգեշահ։ Իսկ վասն Թուանց իմոց՝ որդւոցդ, գիտեմ զի դու տաւելքան զիս հոգասցես և ոչ գայիս պարտաւոր նոցա։ Ողջ լեր 'ի յիշատակ բարի և 'ի միխիթարութիւն ինձ՝ որ եմ

Ի Սան Պետերբուրգ,
15 յունիսի 1793։

Ամենայն ծառայ քո
և հայր քո՝ Մարգար Զաքարիա Խաչենց Երևանցի։

Գրադարան 1898 Տեսակ. 1899 Տեսակ. 1898 Գրադարան

ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԻՍ

Լոսակ սրբոյն Իրոյ . . . 1։
ՄԱՍՆ Ա. Յաղագս սաղմոսարանի և յաղ-
կոնի մարդոյ . . . . 3։
ՄԱՍՆ Բ. Յաղագս հնգից զգայարանաց . 75։
ԿԱԽԱՐԱՆՈՒԹԻՒՆ . . . ՟։
ՅՕԴՈՒԱԾ Ա. Յաղագս գեսանիլեաց . . . 83։
— Բ. Յաղագս լսելեաց . . . . 96։
— Գ. Յաղագս հոտոգիլեաց, և ոնգաց 104։
— Դ. Յաղագս ճաշակելեաց . 115։
Պատմութիւն . . . . . 128։
— Ե. Յաղագս զգալեաց, այսինքն
յանաց. ընդ որս դասակարգին
և ընթանալիս, այսինքն ոտս . 137։
ՄԱՍՆ Գ. Յաղագս բանի, և սմանց գլեաց-
որ մարդոյսն կրէր՝ այսինքն
ցնդելեան, ցնջման և մահուան 148։
ԿԱԽԱՐԱՆՈՒԹԻՒՆ . . . ՟։
— Յաղագս բանի . . . . 151։
— Յաղագս ցնդելեան կենդանեաց 165։
— Յաղագս ոգոյ . . . . . 187։
— Յաղագս մահուան . . . 201։
— Վերջին բանս . . . . . 221։

ՀԱՅԿ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ